


Рисунки

3-4 91



ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

- 1- Կ. ԱՐՄԵՆԵԱՆՈրդիք որոտման
- 11- Վ. ԹԵՔԵԱՆԵռանկիւն՝ մէկ անկիւնով
- 23- Գ. ԳՈՅՈՒՆԵԱՆԵւ / կամ
- 27- Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆՀայաստանաւերներ
- 39- Վ. ԲԱԲԱՅԵԱՆԲանաստեղծութիւններ
- 40- Գ. ԱԲԷԼԵԱՆԱննա հարսը
- 54- Մ. ԶԱՎԱՅՍԹուրքական աշտարակ՝ սերբական գանգերից
- 55- * * *Հաւատարիմ՝ իրենց կոչումին
- 56- Գ. ՍԱՐԳՍԵԱՆ,
Պ. ՄՈՒՐԱԳԻԵԱՆՀերթական արշաւանքի հայս (կամ թէ
ինչպէս են նենգափոխում պատմութիւնը)
- 64- Ս. ԱՅԲԱՀԱՄԵԱՆԻմ Արցախ
- 64- > > >Երբ Ղարաբաղ են ասում
- 68- Ռ. ԴԱՆՈՅԵԱՆՆամակ՝ ՍՍՀՄ Գերագոյն Սովետի նախագահութեան
- 70- Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆԱրցախեան իրոնիկոն
- 75- Հ. ԿԱՐՃԻԿԵԱՆԱրթնացում
- 75- Ե. ԼՈՒԵՆՑԻմ Ղարաբաղ
- 75- Ի. ՄԻՔԱՅԷԼԵԱՆԱրցախական
- 76- Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆՎերականգնումն դրաման
- 81- Վ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ * * * (Յուլիսեան հեղցուցիչ առատ...)
- 81- Ս. ԲԵՆՈՒՆԻԱրցախ
- 82- Բ. ՈՒԼՈՒԲԱՅԵԱՆԼեռնային Ղարաբաղ (պատմական ակնարկ)
- 89- Ս. ԽԱՆՁԱԳԻԵԱՆՔարինտակ գիւղի քարացած ցաւը
- 90- Լ. ՀԱՆՎԵՐԳԻԵԱՆԻնչքան կարելի է ճիշտը չասել
- 93- Մ. ԵԱՆՇՈՒՆՑՂարաբաղի կանայք
- 94- Մ. ՄԱՐԳԱՐԵԱՆՀիմի՞ էլ լռեմք...
- 97- ԱՂԱԻՆԻՄեր հոգու ալիքախումբը
- 100- Գ. ԳԵՒՐԿԵԱՆՀաշուի նստել այդ կամքի հետ
- 103- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆՓ. Ճերանեանի *«Հեղձիկուած կուրթիւն»*
- 106- * * *Մշակութային լուրեր



Քաղաք

ԱՅՄԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Լ. ՏԱՐԻ ԹԻԻ 3-4 ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ 1991 ՊԵՏՐՈՒԹ

ԿԱՐՑ ԱՐՄԵՆԵԱՆ

ՈՐԴԻՔ

..... **ՈՐՈՏՄԱՆ**

Այսօր կ'երդունմ
որ այլևս ողորմի խօսքեր չունին
և այլևս չենք ընդունիր ձեր նրբագաց դաշնագիրը

Երբ մենք ծնանք
մեր հայրերը տրտում էին
և գին ունի
հօրմկ որդի
մամբայ կտրող
տրտմութիւնը

Սիրոյ սերունդը այսպէս մեզի յանձնեց բանալին
եւ մենք յատուկ
եւ անվարան բրտութեամբ
եւ գիշերանց
մտանք ներս

Ձեր կրթութեան մայթերը շատ անհոգ են
մտերիմ
ձեր օրէնքը ծեփծեփուն նրբերանգներ ունի բիւր
եւ կը տրուի ամէնքին
ձեր տուներէն կը ծնին երեխաներ անգիտակ
գորս դուք ինչպէս կը գգուէք
ձեր պատմութեան յետին լուսն
տոմարագրել կրնաք դուք
եւ հրել վար կոկորդէն մեր բոլորին

մենք ապշանում կը նայինք


Սիրոյ սերունդը մեռաւ
հիմա կրնանք վերջապէս ձեր փերէն
մեր փերուն կարկառոզ ողորմութիւնը շուտ տալ
եւ գործածուած խաբէութեան վերարկուն
գոր նամբեցիք կարեկցութեան բազմապիսի հակերով
եւ որ այսպէս հօրմէ որդի փոխանցուելով
իրարու
կը ծանրանար
մեր ուսին

հիմա կրնանք վերջապէս այս ուշ ժամուն
մեր ուսերէն
շարտել

Սիրոյ սերունդը մեռաւ
տգիտութիւնը անկցի
ձեր պատգամին սպասող մունետիկներ ա՛լ չկան

Պիտի գիտնանք վերջապէս
որ մեր սեմին երեխաներ որբացան
հիմ վերքեր կան որոնք բնդմիշտ ու ներսէ ներս կ'արիւնին
եւ հին մայրեր

պաղատանով կը նիրանէն հողէն դուրս
թւերն իրենց
եւ հիմ հայրեր որոնք նստանք մտան հող
եւ մեռութեամբ կ'ապրին դեռ



256-2013

մեր հայրութիւնը կ'ապրի
մեր մայրութիւնը ազաւորէն դեռ կ'երկնէ
դեռ կը ծնի
ապերասան որդիներ
նոյն շինուածքով հողանիւթ

սարսափեցէ՛ք դուք հողէն
ձեր ոտքերուն տակ տրոփող ու անհոգի կարծուած
այս կոշկոտէն դուք վախցէ՛ք

Սիրոյ սերունդը վերջին
վերջին պահուն
ոխերմօրէն

գետը նետեց բանալին

մահուան սնունդն է ահա
որ դիւային ու անխնայ
աեաբեկ պիտի դեռ
հին դաշտերը նախնիքի

Սիրոյ սերունդը վերջին
վերջին պահուն
գետը նետեց բանալին
նետեց մռայլ երախին
որ կուլ կու տար միլիոնաւոր մանուկներ

միլիոնաւոր
ու հաշմուած
մատաղատի
մարմիններ
կառչած ամուր ստինքներու պտուկին

այն կիներուն
որոնց կաղկանձը լռին դուք կարծեցիք
թէ կրնաք օր-ցերեկով
ու լրբօրէն
անգոսնել

Մենք կը մերժենք խաղաղութիւնն այս լկտի
մենք կը դրժենք
հին աղուհացն այս խարդախ
բառերն անսուրբ ձեր գրքին
աեաւասիկ նոյնութեամբ ու բառ առ բառ

Ետ կը յղենք
ձեր նենգութեան դիւանին

ձեր բարութիւնն այս երկդիմի ու կռկիկ
ահաւասիկ մենք կը դնենք դէմ դէմի
մեր վերջնական նժարին

Տիրոջ բերնէն խօսքեր ինկան ծոցը հողին
եւ մենք այսպէս հեւ ի հեւ ու տփանփով
հաւաքեցինք
ծեր շրթներու արիւնաշաղ
մանանան

Ահաւասիկ Տէր ապականեցէ գտիեգերս
եւ աւերեցէ զնա
եւ տապալեցէ զատակս նորս
եւ ցրուեցէ զբնակեալս ի նմա

Տիրոջ բերնէն շանքեր ինկան ծոցը հողին
եւ ժողովուրդ ու քահանայ
ու տիրատուր ծառայ ու տէր
չփութն պիտի նոյն որոշմամբ
չփութն պիտի նոյն անէծփով

անյեղի

ապականելով ապականեցի
եւ յափշտակութեամբ յափշտակեցի
երկի՛ր

Բնագոյն այս հում կը ծնի
երբ այլեւս չկաս դուն ու չկանք մենք
երբ այլեւս վերջին հիւլէն մեր արեան
կը սուգուի ներս
ուղեղներու վաղնջական շերտերէն

ու կը պոռթկայ
յանկարծակի
մեր բոլորին կամփին դէմ

Բնագոյն այս հում կ'արթննայ
երբ քաղաքն այս մտնէ քուն
երբ երկինքն այս ապականի քանձրանայ
փակուի վրան այս երկրին

Եւ երկիրն այս ցոփութենէն պարտասուն
պառաւ մարմինն իր մեկնէ
աղերսելով փրկութիւն

Քնազդն այս հում կը մարմնանայ անօրէն
երբ վերջին կանչը լսի՞ն
վիհերէն դուրս գաղտագողի յառնելով
գիշերային որպէս թիթեռ ամեհի
կու գայ թառիլ վերջին մանկան ուսերուն

Ձեզի կ'ըսենք
Սիրոյ սերունդը վերջին
իւր բնագողով անողորմ
այս ամբոցի մէկ ու միակ բանալին
գետը նետեց
որպէս ահեղ հրահանգ

որպէս կռուի
անագորոյն
հրաւէր

Ձեզի կ'ըսենք
որ այս օրէն սկսեալ
դասաւորումն այս ապիկար ու յոռի կը նկատենք մենք չեղեալ
Եւ խաչքառն այս անճոռնի
աեաւասիկ կը գամենք ձեր դռներուն

Ձեր մատներով գրուեցաւ կանոնագիրը մեզին
դուք խեղդեցիք

Երեխան
բայց ան այսպէս
ապրեցաւ

անոր մարմինն ըրիք դաժան

բայց ան գիտցաւ իմաստութիւնը դժխեմ
կենաց մահու կռիւին

Սիրոյ սերունդը մեռաւ
պիտի գիտնա՞վ վերջապէս
որ ձեր սեմին

անօթի
 երեխաներ փնտռեցին ապաստան
 հին վերքեր կամ անարիւն որոնք ընդմիջտ կը կոտտան
 եւ մայրեր հին որոնց արցունքը գաղտնի
 դուր չտեսաք
 եւ հին հայրեր որոնց մոխիրը կ'այրի
 ամէն գիշեր
 ասիերուն մէջ որդիներու թռռներու
 եւ որոնք ընդերքներուն մէջ խորին
 գառանցագին
 կը յօրինեն գիւնարաններ սեարկու

պիտի գիտնաք վերջապէս
 որ ընդերքէն արգանդին
 ամէն գիշեր
 մարմին առած կը քալէ
 արեամարեանքը վսեմ

բառերն անուրբ ձեր գրքին
 ահա այսպէս նոյնութեամբ գիշեր ու գօր
 կ'ատենագրենք ձեր հաշուոյն

գի դեռ երէկ
 ձեր քմայքին դարպասոց խաղաղութիւնն այս պոռնիկ
 դռնէ ի դուռ ծախու հանեց վերջին գրգիռն իր մարմնին
 եւ կոյուղին համբուրեց

Այսօր կ'երդնունք
 որ արդէն ոչ եւս է դաշնագիրը
 եւ մեր հաշիւը մաքուր
 պարտամուրհակն այս արժեգուրկ ու անմիտ
 հագար անգամ հագար ձեռքէ գեղջուած
 մենք պատռեցինք մէկընդմիջտ

Մեր հայրերու սերմէն հօր աշխարհ կու գայ սերունդ մը նոր
 աշխարհ կու գայ հին երագէն

ոտք կը դնէ քաղաքն այս նոր
 քաղաքն այս նոր ոտք կը դնէ
 ու կը նայի չորս դին բոլոր
 հոտառութեամբ կը փնտռէ
 կը փնտռէ հետքերն իր հօր
 գոր կը յիշէ

ամէն գիշեր հին արգանդէն ծնունդ կ'առնէ կանչը հողին
 ամէն գիշեր գերեզմանէն վեր կը յառնէ մարդու որդին

ամէն գիշեր
 հին վիհերէն
 մարմին կ'առնէ ու կը քալէ փէշերն ի վեր
 ու լեռն ի վեր

նոյն քաջորդին

ոչ փող զարկինք ոչ արձագանգ լեռնասոյգ
 սարէ ի սար չարաշշուկ տարին լուր
 ու չերգեցինք ողբոց երգեր սրտայոյգ
 երբ պատանւոյն բացինք մռայլ փռսին դուռ

եւ պատանին մերծեց մտնել գերեզման
 ան կանգնեցաւ գիշերուան մէջ խորագնեց
 գնեց թափօրն ապաժաման այս սուգի
 ու հայկազարմ մեծ ոգիներ փնտռեց
 շարժերուն մէջ մեր կռուագան ու մոլի

ագատ մարդեր ու քաջ մարդեր փնտռեց
 որոնք ի բիւր պատերազմաց թէպէտ խոց
 մէջ ամպրոպաց կանգուն կեցած
 դրժէին
 պայմանագիրն այս անպատիւ ու խոտոր

եւ պատանին ինքն իր ելճով անհանգիստ
 եւ պատանին նետուած կեանքին այս անել
 դռնէ ի դուռ քաշկոտուած
 անընտել
 բազում թոյներ երկուութեան կուլ տալով
 ու նորզնոր կեանքի գալով
 մէկդի հրեց

սուգն այս քուն
 եւ ամբարիշտ այս ոգին
 հրեց մէկդի զարմն այս տխուր ինքն իր հողին անյարիբ
 եւ հերքելով առհաւութիւնն այս դարձդարձիկ յեղեղուկ
 ասպանդակեց դէպի երկիր
 դէպի երկինք խիզախեց

Այսօր կ'երգնունք
 որ սահմաններ ա'լ չկան
 որ սահմաններն այս անհեթեթ

բռնաբարուած
 ու կռպիտ
 պիտի իսպառ ջնջուին
 ու վերստին ու նորզմոր
 նշմարտութեա՛մք սահմանուին

Այսօր կ'երդնունք
 որ նոր մարդեր նոր երգերով պիտի մտնեն ասպարէզ
 պիտի գրուի նոր մեկնութիւն
 տնօրինուի նոր խորհուրդ
 նոր անուններ պիտի տրուին
 հողին ցեղին ու մարդուն
 նոր յայտնութիւն պիտի ըլլայ
 ամէն ծնունդ
 ամէն տուն
 նոր երկնաւոր պիտի ծնի
 նոր յարութիւն
 նոր փրկիչ
 ու շնորհուի նոր փրկութիւն
 անարգուածին այս երկրի
 ու քարուքանդ այս աշխարհէն
 պիտի կանգնի դաստակերտ
 պիտի հրաշք ակնկալենք
 ու նոր խոհեր կորզենք մենք

Եւ դեռ պատեր որք չեն հիւսուած
 եւ քերթութիւն անստգիւտ
 ազատանի որ չէ ծնած
 եւ պետութիւն որ չկայ
 եւ հաւատքի անեզրութիւն
 որ դեռ մեզի կը սպասէ
 եւ խենթութիւն սրբազնասուրբ
 եւ խորութիւն աներկմիտ
 եւ գորութիւն խստաբարոյ
 արարչական ու լայնսիրտ
 մեր տուներու յարկէն խոնարհ
 պիտի մտնեն կեանքի բով

Այսօր կ'երդնունք
 որ պատանին
 դիւցազնօրէն իմաստուն
 պիտի ջնջէ հին տոմարէն
 կեանքն անվաւեր ու նկուն
 օրինագիծն այս անսովոր

պիտի սեղան բերուի դեռ
եւ ատեաններ պիտի կոչուին
այս խորհուրդին վերջնօրէն

Ահաւասիկ եւ փաստօրէն
յանձնապաստան
ու ջղուտ
հազար տարուան կածաններէն
վտարանդի շանորդիք
անհրաւէր
ու ինքնակոչ
կը յայտնուին անօրէն
օր-ցերեկով
ու անխրատ
պատգամ մը նոր
կը բերեն

Յանձնապաստան
եւ անողոք
արորդիներ վիթխարի
հազար տարուան սիւներն անմիտ դորդելով հիմն ի վեր
ու խախտելով դռներն ամուր
պատերն այս բութ ու լկտի
հազար տարուան փակ դռուներէն
ներս կը մտնեն
որպէս տէր

Ու փշրելով ծնծղան սուգի
ու ժանտ շղթան հնօրեայ
ահաւասիկ
այս առաւօտ
երեք հզօր ռահվիրայ
երեք մարմին ու մէկ հոգի
ու եռամեծ գօրութիւն
որպէս սկիզբ խորհրդաւոր
սկզբնազօր յայտնութիւն
շեմերէն ներս ձեր կրթութեան
կը ժամանեն ճիշդ ժամուն

Եւ ոգիներն հազարամեայ
նոյն խորհուրդին ժամադիր
հաւատարիմ հին երգումին
հին կոչումին գիճակիր

նոյն ակերէն ընդերկրեայ
հագար տարի սնուելով
ձեր երկդիմի հրաւերին ահա այսպէս
անսայով
նոր մաքանման եզրերն ահեղ
անրջելով երկնելով
ձեր նեղ կեանքերն ու հին վախերն ու խոհերն հին
սարսելով
ձեր տիրութիւնն այս ապահով
ահուդողի մատնելով
ամբարտաւան
ու անարգել
անդրդուելի
ու բեղուն
մեր վիհերէն ակնյայտի
ու նեղքերէն դարաւոր
դուրս կը յղեն
նժոյզն հզօր
հատուցումի
մեր հին
ձին

ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ

Դեկտ. 1990

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԷՔԻԱՆ



ԵՌԱՆԿԻԻՆ՝ ՄԷԿ ԱՆԿԻԻՆՈՎ



Շաղը խոնաւ՝ ինկեր էր անտառին թափերուն եւ մութ երգ մը կ'երգէր՝ երգ մը, որ դարերը լսած էին, հիմա ձայնը մնացեր էր միայն, եւ մարդ չէր հասկնար զայն: Գիտէին միայն, որ սեւազար հողին մէջէն երբեմն-երբեմն յառնող ուրուականներու պէս՝ հակալար մուռնչներով ալիքաւորումն էր անտառին: Գրգռուած, ուժեղ փոթորիկէ մը առաջ այսպէս կը տարածուէր անտառը, թեւերը բաց կը տատանէր հարաւէն հիւսիս, հրեղէն շարժումներով ցոյց տալով իր բազմաճաղար սլաքներու ներսիդին արմատ կապած փայտաշէն ախոռը, որուն վրայ առաւօտը իր սերմը թափած, մեղմ պահու մը դալուկ հիւսկէններէն սարդած՝ զացեր-պատկեր է հարեւանած դաշտերու խոստումներուն գիրկը:

Երկիրը կանաչ է, ճամբան՝ ոչ: Գիւղը իր թեւերուն վրայ պիտտակի ծառերը զարդարած-կանգնած է ամրապինդ: Հողէ ճամբաներէն նեկրուհիներ կ'ուղղուին, աներեւոյթ նարինջներ ծիծիլթացնելով իրենց կոնքերուն եւ ցցուն ծիծերուն մէջ: Միծերը հնդկընկոյզի պէս ամուր զամուած են, բայց աչքերը պանանի կակուղ հասունութիւնը ունին: Գիւղը՝ աշխարհի բազմամիլիոն գիւղերէն մէկը, իր բուրմունքով եւ վտանգներով: Սեւ հիւզակները բացեր են իրենց ճերմակ փայտերով դուռները: Անտառը հանգի՛ստ փոքր է ինքզինքը հոս՝ աստուածային ինքնազատահաւանութեամբ, եւ նկունութեամբ օձի:

Երէկ, ամբողջ գիշերը մեղարգելները պահակութիւն ըրին եւ մեղրագոյն լուսինը աներես հիւրի պէս կը անտնար դուրսը: «Ձաւակ կ'ուզեմ ես, քեզմէ՛ զաւակ կ'ուզեմ», հատաչեր էր Փօլը, «վերջնացուր թափառումներդ, տունսեղ ըլլանք, հայ ընտանիք կազմենք»: «Ըսեր եմ, չէ՞, դեռ ինքզինքս պիտի ճանչնամ. պէտք է գիտնամ, թէ ե՛ս ինչ կ'ուզեմ կեանքէս»: «Երանի վստահ ըլլայի, թէ զիս կը սիրես դեռ առաջին օրուան պէս»: Երկու տարի ետք իսկ, քիմիագէտ տղուն համար խորհուրդ մըն էր այս աղջիկը, արմուկը բարձին դրած՝ համարուելէ ետք անոր ելակ դարձած շրթները, դուրս ելեր էր գաւաթ մը պող ջուր խմելու եւ նստեր էր յիմար, լայնադէմ լուսինին դիմաց, զոր, եթէ մեռքէն գար՝ շերտ-շերտ պիտի կտրտէր:

Հիմա անտառը հող եւ լուսնիւն հազեր է: Արեւը իր գլխանոցէն կրակէ թաշկինակներ հաներ-նետեր է անտառին գլխուն: Անոր ուրուագնաց սլորտներուն մէջ սուսկի պէս սա սեւաներկ տունը՝ իր մոխրագոյն փեղկերով, անոր մուտքին՝ սալայտաակ մը, աշխատաւորի ափի նման բաց, անտաշ, հիւրըն-

կայ: Տնակը ամէնէն մեծն է նախկին անգլիական աւանին: Անոր թեւն ի վար, տարագիր ցախերը այրում մըն է կ'ապրին: Բակին անկիւնը նարնջագոյն սընտուկը գրկած է գարեջուրի շիշերը եւ գով-գով կը դիտէ վառող ցախերը: Ցախերը իրենց հրկիզումի ընթացքին կը փոթորկեցնեն արդէն եփած-հասուն-ցած քարիտէզները: Փօլը բաց կապոյտ շապիկով՝ գլուխը ծոց, որպէսզի դուրս գայ դուռնէն, բակին մէջ մէկ-մէկ չթթացուց երկու գարեջուրի շիշեր, մէկը տուաւ ճերմակ կտաւէ աթոռին վրայ երկարած տանտիրոջ, որ իրեն հարցուց՝ «Ո՞ր է ներվան», եւ ինք գլուխով գրան կողմը նշան ըրաւ, միւս շիշէն ունայ մը առաւ եւ նստաւ գետինը, թերթին վրայ:

— Իրապէ՛ս որ մեր հոս հասնիլը հերոսութիւն էր: Աղ պոսն քառասունութ ժամ կրնայ մնալ ճամբուն ծայրը, կրնայ շուշ անգամ չառնել, եւ անմիջապէս որ մէկը զպնայ իրեն՝ իր ամբողջ համբերութիւնը կը սպառէ վրան: Թըրս մը ունի աս աշխարհին մէջ ըլլալէն: Ինչ լուռ, դաւադիր սաստանայ է, ամբողջ տիեզերքը կ'լլել կ'ուզէ:

— Կը կ'արծե՞ս որ տիեզերքն է իր հողը. անիկա միայն իր հողը կ'ուզէ:

— Չեմ գիտեր, եթէ իր անսահման նենգութիւնն է, որ իրեն գոյատեւել կու տայ: Կը խարէ, կը յափշտակէ, կը կ'լլէ, հանգարտ կը պառկի սրիկան, կարծես բան մը ըրած չէ:

— Օձին յաջողութիւնը հոն է՝ որ յաջողած է միջ մը ստեղծել իր շուրջ: Սկիզբի տարիները զժուար էր ինծի ըմբռնել տեղացիներուն մտայնութիւնը: Հոս շատ դիւրին է անօթի մնալ, սպաննուիլ: Գլուխուն ճարին պիտի նային: Տեղացիները կը հաւատան, որ եթէ սպաննեն պոսն՝ իրենց ընտանիքի անգամ-նեղէն մէկն ու մէկուն անպայման չարիք մը կը հասնի: Թա՛նձր է գարեջուրը:

— Լաւ է, տանելի է:

— Հոս մարդիկ կաթ եւ հաւկիթ կը բերեն ամաններով, կը տեղաւորեն անկէ քիչ մը անդին: Կուտքի պէս խնամք կը տանին:

— Կը վախնան:

— Եթէ չվախնան՝ կը մեռնին: Իրենցմէ մեծ ուժ է, եկեր-հաստատուեր է իրենց հողին վրայ. տեղացիներուն դիմադրելու ձեւը աս է՝ պիտի փաղաքշեն, պիտի միթի վերածեն:

— Հարցը հոն է՝ որ չես գիտեր սատկա՞ծ է, թէ ողջ է անպիտանը: Ինծի համար՝ այնքան ատեն որ նոյնիսկ դիակը կայ՝ վտանգ է:

— Եթէ ստիպուած ըլլաս՝ դիմանալու ձեւը կը գտնես: Արա՞ք քշեցիր:

— Հարիւր տասը: Մէկ շաբթուան մէջ աս երկրորդ անգամն է, որ կու դայինք այստեղ, չէ՞. բայց զգացի երէկ, որ ձեր անտառին հմայքը եւ մասնաւորաբար վտանգը նոյնքան կը վերացնեն Ներվան: Կը յափշտակուի, վախ չունի:

— Քեզի պէս որսորդին հետ ինչէ՞ն պիտի վախնայ, Փօլ:

— Կարծես ո՛չ պիտի ծերանանք, ո՛չ պիտի մեռնինք: Մահը, կ'ըսէ, մէկ վայրկեանի հարց է, մէկ ժամ անգամ չ'արժեք մտմտալ անոր մասին:

— Եւ դեռ կ'ըսես, որ չի՞ վախնար: Վերջացո՞ւց:

— Պի եյ-ը առաւ. դեռ շարունակել կ'ուզէ:

Երկուքը մէկ նայեցան դրան, Ներվան կանգնած էր անոր արանքին, նախ հաւաքեց մազերը ծոծրակին վրայ, նուրբ իրան մը ցուցադրելով: Յետոյ մօտեցաւ կրակին, տուպրակը դրաւ գետին, սկսաւ քարիտէզները մէկ-մէկ մաքրել, անոնց կարմրաւուն կեղեւները ճարտարօրէն քաշելով: Փօլը ունայ մը առաւ գարեջուրէն եւ եկաւ անոր քով: Երբ մը կը մրթմրթար: Աղջիկը հում խեցադետին մը դրաւ անոր բերանը... «Մանկութեանս հօրս հետ ծով կ'երթայի», ժպտեցաւ անկեղալուած բան մը հեռուէն նշմարողի պէս, «խեչափառնե-

բուն ոտքերը կը կտրտէինք, եւ մարմինը հում կը թփրտար գետ, ասանկ կը կլլէինք: Փօլը ընտելացած շարժումով գրկեց ուսերը, գլուխը հակած նայեցաւ անոր, եւ համարյոք փոքրիկ վարդ դարձած՝ փետտուեցաւ:

Ներվան ըսաւ, որ նորէն պէտք է եռացնէ խիունջները: Կարազը եւ ազատքեղը պուտ-պուտ լեցուց բացուածքին մէջ եւ բերանները ամուր խցկեց: Բայց խիունջները արդէն ողորթեան ալ չէին կրցած խօսիլ, այնքան զբաղած էին ամէն բան լքելով՝ յառաջանալու համար: Յետ մահու խուչ երգեցիկներ դարձեր էին, ամէնքը մէկ հպատակած կաթսային՝ կը զարնուէին ու կը զարնուէին անոր միահրահանգ կափարիչին տակ:

Յետոյ ի՞նչ բազէն, կապոյտ շորթով ծածկած նրբածեւ կոնքը, սպիտակ սրունքները հանգրիւմած, Ներվան կոթներ էր առաջին ծառի կոճղին, ակնարկէր հողի դէմքին: «Հանգրիւմս ես հոն», հարցուց Փօլը, որ բոլորակ ցած սեղանին վրայ պնակներով եռանկիւն մը կը շինէր: «Գիշերը պիտի իջնե՞նք քաղաք», հարցուց Ներվան: «Ինչո՞ւ չէ՝ խումբին մէջ հայ բժիշկ մը կայ եղբր, Երեւանէն, տեսնե՞ք ի՞նչ կ'ընէ կոր աշխարհին աս անկիւնը: Աստուած տայ՝ հանգրիւմ ձգեն մարդը մեզի հետ խօսելու»: «Ի՞նչ կ'ուզես լսել, դեռ բա՞ն մնաց հասկնալիք»: Ի՞նչ ունէր այդքան մելամաղձիկ Ներվան, հարցերը լուծած իր պատասխանին մէջ:

Շատ նրբատես այիք մըն է, որ յառաջացաւ տղուն աչքերէն մինչեւ ծառին բունը, ուր նստած էր աղջիկը՝ տարածուն խոտիկի պէս: Փօլը նախորդ գիշերուան տաքնապը վանած էր միտքէն եւ, իր անգիտակից յիշողութեան սպաւինած՝ կ'որոնէր միայն կեղզորոնակէտը. դէպք մը, վիճակ մը. ոտքերը ճի՛շդ այնտեղ պիտի դնէր, միայն գտնէր, թէ ո՞ւր է այդ կէտը, ո՞ւր սկսաւ եւ ո՞ւր արտանց զաղբելու սկսած էր խոչորնայ կէտը՝ փոսի պէս:

Բնագազարը չէր ուզած մինչեւ հիմա այդ հարցը գննել, խուսափած էր վարազոյրը պատռելէ, որ հաւանական դատարկութիւնը լսեանէր: Գաղտնի, լուսանցքի մէջ մեկուսացած քով քովի, վրան ծածկուած պահեր կային, վիճակներ. աւելի ճիշդ՝ ինք ծածկած էր եւ անոնց ծածկոյթը վերցնելէ կը զգուշանար: Ինքը այն մարդոցմէ չէր, որ անկողին ու կին կը փոխեն մեծագոյն զրգիտով: Ապահովութիւն կը սիրէր, խաղաղ ընթացքը կեանքի մը, առանց զղումի, առանց տրտունջի, առանց սիրտ բզկտող հարցականներու: Ատենը անգամ մը պոռթկում մը՝ երէկ գիշերուան պէս՝ անոնց ցաւազին կեանքը մատնող ճեղքի պէս պիտի յայտնուէր, եւ պահ մը հոք աւելորդ պիտի թուէր: Ներվային հետ իրենց սեռային կեանքը զրեթէ առաջին օրուան անհատուած թրթիռը ունէր: Իրարու հետ կեցութեան ներդաշնակութիւն մը ստեղծուած էր, բայց յատակը կէտ մը կար, ուր Ներվան կը հեռանար իրմէ՝ արգար է որ հեռանար, տարբեր անձ էր, միայն թէ՛ չար գուշակի ինքնամտանութեամբ շայտնուէր, շյամենար այլեւս յաւիտենական դարձած շուքի մը խաւարը: Իրենց հետ՝ հիմնական միութեան մը կարելիութեան կշիռքին մէջ, իրականութիւններու եւ տարակուսանքներու նծարները՝ նախապէս թեթեւկուն, հիմա ծանր խաղեր կը խաղային: Շապիկին թեւերը սօթտած էր. անգամ մըն ալ ծալեց եւ արմուկով զաղբեցուց ջուրը, որ կըլթ-կըլթ կը կաթէր քակին ճերմակ լուացարանին մէջ: Զոյգ արիւրը հանգչեցուց ցանկապատի տաք աղեւներուն եւ, ճառարտոսի կիտուած յօնքերով՝ վարի շրթուքով ամուր ծածկեց վերինը: Մարդու մը կեանքին մէջ ճակատագրական պահերու յատկացումը չըջաններ կան, որոնք յանկարծ իրենց գլուխը կը ցցեն. ուրկէ՞ ո՞ւր՝ Միջօրէականի կիզաշխարհին մէջ ա'ս պահանջն էր, որ կը շարժուէր գինք. հարցը ծածկելով՝ միայն բարդացուցած էր. ի վերջոյ՝ ամուսնութիւնը բանտարկութիւն չէր. ի՞նչ կ'ուզէր Ներվան, իսկ ինք ի՞նչ կը սպասէր երկու տա-

րիէ. Նիրվան ի՞րն էր, թէ իրը չէր. անշուշտ ամէն գիշեր հետք պատկերով հարցը չէր լուծուեր. «Ի՞նչ հարց», պիտի մեղմօրէն պատասխանէր Նիրվան՝ զարմացած աչքերով, կարծես թէ ոչինչէն հարց մը ստեղծեր էր ինք: Թող բան մը ընէ՛ր, ակունջը կարէր, կուրծնար, պնակ կոտրէր, պոռաք-կանչէր՝ քան թէ շարունակէր այս շրջագայութիւնը՝ հաւատարմօրէն անկեղբորն եւ անշըբ-ջափակելի: Կր գգար, որ ուրիշ, պահանջկոտ անձ մը կ'երթնեկէր իր մէջ, առանց իր գէմքը ցոյց տալու: Գիտէր թէ Նիրվային համար կեանքը երբեք կարճ չէր, հրքե՛ք, միւս կողմէ՛ անհեթեթ ալ չէր. կարծես ան իր հոգիին մէջ չձայնազրուող երգ մը ունէր եւ միայն իր ուղածին պէս կ'երգէր: Ինք վաղուց անդրադարձած էր որ, հոգւով-մարմնով կապուած էր անոր, Նիրվան ամբողջութիւն էր: Այնքան հաշտ ինքզինքին հետ, ամբողջ աշխարհը գիրկը տաած կը իսպար, առողջ փրիստփայութեան մը համոզումը ցրուելով իր օրերու անսահմանութեան վրայ՝ «Երբ որ Ափիւոք կ'ապրես, ամբողջ աշխարհը քուկէ է»:

Բացատրեց իրենց հիւրընկալը, որ ժամը եօթին հրախրուած են բժշկապետին տունը, քանի մը գիւղ անդին, քաղաքին մօտ: Աովկոտ տասնվեց բժիշկ-բժշկուհիներ էին աւանին մէջ, բայց ուղղակի հայուն տունը չէին կրնար երթայ, որովհետեւ բժշկապետին տարեդարձն է, կրնայ սրտենցիլ: «Աստիք սովեա են, մեր մարդը հայ է, զլիսուն փորձանք չբերենք»:

Ամէնէն առաջ, ափուարիումին արծաթափայլ լուսնածուկերն էին թարթող աչքերու պէս, որոնք ուշադրութիւն գրաւեցին բժշկապետին ընդունաւանին մէջ: Իր կնոջ վրայ գեղեցկութիւնը առանց վերապահութեան մաղաւաճ էր: «Քառասունեօթը եղաւ, այո՛», ըսաւ ամուսինին արմուկը բռնելով եւ բաց կապոյտ աչքերուն ժպիտը տարածելով բոլորին վրայ: Աննեակին խորքէն կերպարանք մը արագ ու առոյգ մօտեցաւ իրենց: «Ես էլ աչքս զբան՝ ձեզ էի սպասում», պիտի շարժումով սեղմեց Փօլին ձեռքը, յետոյ՝ Նիրվային ձեռքը, ընթացիկ հարցումներու տարափին մէջէն դիտելով գիրենք: Խոտովանը ձրու աչքեր կ'արձակէին մաքուր փայլք մը, որ մեծ յուզումներէն ետքը կը յայտունըւր: Բժշկապետը հայ բժիշկը նստեցուց իր մօտ, «որպէսզի հայերը նորէն հայերէն չխօսին իրարու հետ»: Նստաւ Նիրվան սեղանին մէջքին մօտ: Բաժակները կը հասնէին շարան-շարան, վոտկա, Լոմեակ, դարեջուրի զլխարկները հանուեցան, հետեւեցան կենացները բարեկամութեան, տեղաւորուեցան, վերստին բարձրացան, վերստին դատարկուեցան: Խաւեարը հայկական է՝ հրամմէ, գիւնին հինգ աստեղանի է՝ հրամմէ, գիւնովնալու օր է՝ հրամմէ, բարեկամ ժողովուրդներու կենացը, ի՞նչ կայ աշխարհի մէջ բարեկամութենէն աւելի գեղեցիկ եւ գօտեպնդող, հապա՛, մարդ ասոր համար է, որ քառասունեօթին՝ քանհինգ տարեկանի պէս կը թրվոյս, առանց ձեզի ուրախութիւն չկա՛յ: Ամէնէն հնչուն ծիծաղը կու գար Նիրվային, երկու աթոռ անդին, իր քովի աթոռը դատարկ էր. Փօլը ըսած էր որ քիչ մը պիտի պտտի շրջակայքը. անոր քովի աթոռին նստած կիներ էր լիահագազ խնդացողը, «առանց մեզի երջանկութիւն չկա՛յ» կրկնելով, եւ տաքի հեղձումը վանելով կարմրազարդ հոփահարով մը: Գլխու դանդաղ շարժումով, իր նոր տեսնելիքը արդէն վաղուց ճանչցած անձի պէս դարձաւ Նիրվային, կանաչ ապակիէ աչքերը կեղբոնացուց վրան, եւ՝

- Գիտնա՛մ անունդ, — ըսաւ, — անունս Զոյա է:
- Նիրվա է անունս, ուրախ եմ ծանօթանալուս:

Զոյան վայրկեան մը երկար յօնքերը բերաւ իրարու մօտ: «Հայկական չէ՛» հաստատեց անցողակի, յետոյ կռթնեցաւ աթոռին, բաժակը պարպեց, ապա բարձրացուց, տարուբերեց, մինչեւ որ իր աչքերուն զուգահեռ բերաւ

անոր յատակը, յետոյ ծոնցաւ, ուսը ծածկող թոյլ կտաւը հրեց թեւին վրայ, պարանոցը առաջ մղած՝ նայուածքը սեղանին անկիւնին գամեց պահ մը եւ բարձրածայն արտասանեց.

— Հարիւր քսան մղոն կը ճամբորդէ՝ հետս պատկելու համար, ներդրութիւն, ձեր բառերով՝ «քնանալու համար», եւ առանց յայտարարութեան հակազդեցութեան սպասելու, աչքերը ուղիղ կեդրոնացուց բաժակին վրայ, կարծես բաժակին հետ լուռ խօսակցութեան մը մէջ էր եւ այդ նախադասութիւնը դիպուածով ըսած էր բարձրածայն:

Բժշկապետին կինը սեղանին դուրսը գեղադէմ նստած էր, արձանի պէս, որուն շինանիւթը աւելի առինքնող է՝ քան նիւթը ինքը: Անոր քով սրբանկարի դիմադաշային նրբութեամբ կին մը կար. բարձրացաւ աթոռէն, երկար էր, գրեթէ մինչեւ կոնքը նոյն չափաւորութեամբ բարակ քայլերով եկաւ: Զոյսային մօտ, ծոնցաւ, անոր կռնակը փետուրէ իր մատները թափահարելով ըսաւ.

— Արտօնութիւնդ, եկեր է, Զոյա, երկու շաբաթէն պիտի կարենաս Եւրոպա երթալ:

— Զիս՝ դուն գիտես, կը յուսամ, որ գիտես, Իռենա, ի՞նչ ընեմ ես միլիոններով արձանները, անոնց բոյները: Ի՞նչ ազա՛հ օձ մըն ես, պիտի ձգե՞ս, որ հայ բարեկամդ գայ հետս:

Իռենան շոյեց անոր ծոնքակը եւ զրոյական փափկանկատութեամբ՝ «Մեծցի՛ր, Զոյա», ըսաւ: Զոյան մտիկ չէր ընել, բաժակը զոյգ ձեռքերով սեղանին վրայ գամած էր, անցաւ վերջին ուղիւն ուղիւն արտօնութեան.

— Մեծ խաբուած մըն ես դուն, բայց լուր չունիս:

Յետոյ դարձաւ նիրվային, հաստաբետ մատանիներով աջ ձեռքը զարկաւ կուրծքին, եւ՝

— Զի՛ս, գի՛ս պէտք է որ յարգես, — ըսաւ ցաւազալար, խորերէն զրժւարու դուրս եկող հեւքով մը, — գոնէ գիտեմ ես զո՞վ կը խաբեմ եւ որմէ կը խաբուիմ: Օր մըն ալ կ'արթննաս մաքո՛ւր, կարծես թէ երազիդ մէջ բան մը սորվեր ես, կը գիտակցիս, որ խաբելը միայն մանուկներու խաղած խաղն է: Իմս այլեւս առնել եւ տալ է, մաքուր հաշիւ:

Հեղձուցիչ ընդարձակութեան մէջ պարը գլխապտոյտի մէջ էր, հագիւ քանի մը հոգի մնացեր էին սեղանին շուրջ: Խոշոր, փրամած ձիւ աչքերով հայը եկաւ նիրվային մօտ, նիրվան առանց հրաւերի վերջարանին սպասելու՝ ելաւ: Տաքը վարպետ նկունութեամբ անցաւ պարին մէջէն, նիրվային լազուարթ զգեստը քրտնեցաւ: Երբ մեղմացաւ երաժշտութիւնը, ձիւ աչքերով մարդուն նայուածքի սլաքները ինկան աղջկան մերկ ուսերուն, գրկեցին եւ սկսան օրորուիլ: «Շուրջ մէկուկէս տարի է՝ հայերէն չէի խօսել: Կարօտել եմ մեր լեզուի խունկը, որի բոյրին միայն խօսելով ես հազորդուում: Ինքս ինձ հետ խօսում եմ տանը»: Հարցուց նիրվան, որ ընտանիք ունի՞ր: «Նրեան են՝, — ըսաւ, — կիներ ու երկու փոքր աղջիկները, եւ պատմեց, որ իր հիւղակին մէջ կախած է անոնց նկարը, Մեծ եւ Փոքր Մասիսներու կողքին: Մնացեր է պատկերի մը շնչոտ ու փոփոխ կեանքը: Մասիսը առեր ձիւնը նստեր է, ի՞նչ պիտի հասկնայ այս արեւադարձային երկրին մէջ իր որդիին համակեցութիւնը Իռենային հետ: Իռենան տեսակ մը հասարակչութիւն բերած էր հայուն հեռացումներուն եւ կարօտներուն: Անհասարակութիւնէ, սեռային հեղձուցիչ բնագոյններէ անդին էր իրենց միակեցութիւնը, անհատնում գուրգուրանք կար իրարու նկատմամբ: Իսկ զաւակի շոյութիւնը մղձաւանջ չէր դարձած Իռենայի երեսնամեայ սահմանադիւրսէն: Զաւակ չէր ուզեր, վախուկ բան մը կը կրէր իր մեղրամամէ մարմնին մէջ: Խուճիկն ամէնէն հանգարտ եւ տրամախոհ բժշկուհին, որ քսանութ տարեկանէն ի վեր իր օրերը նուիրած էր հա-

յուն, այնքան քնքուշ ու փաղաքշական պահերով օրեր, առանց լիցքուհու, առանց յորդելու: Պահեր չէր յիշեր, օրեր էին, որոնք կը քակուէին, առտուան վեցէն իրիկուան տասնմէկը: Պահերը յիշուելու համար պէտք է կրակ ունենան: Կը վախնար ան կեանք կոչուածէն, որ առասպել էր ամէն բանէ աւելի, հետու, իր անկիւնէն կը դիտէր անցած-դարձածները: Իր բոյնը կար՝ ապաստանարանը, տղամարդ մը. մնացեալը աշխարհին գիտնալիքն է: Իր դիւրաբեկ խառնուածքը օրեւէ բանի մահուան պիտի չկարենար դիմադրել, անոր համար ալ ամէն բանի ծնունդէն կը վախնար: Դիմադրելու ձեւը՝ ամէն բան ճշգրիտ եւ կարելի կատարելութեամբ ընել կը փորձէր, իր անձը մոռցած. ինչպէ՞ս թէ իր անձը մոռցած. ամէնէն տւելի ինքզինք կը պահպանէր այս ձեւով, ամէն բանէ հրաժարելով՝ ինքզինք զերծ կացուցած կ'ըլլար վտանգներէ: Ձէր տեսները՝ չէր հարուածեր, բայց կա՛ր անկա, մեղմանուչ բոյրի նման, որ իր մշտակայութեամբ իր ուրիշ ծագում. առած ըլլալու, չըջակայքին հետ ինչպէս բաղադրուելու, ինչու դիմանալու հարցերը անտեղի կը դարձնէր:

Ընդարձակ պատուհանը բաց էր եւ ցիկան երաժշտութիւնը կ'ընդարձակուէր: Անտառը այլեւս խելակորոյս հեւքի մէջ էր այն կաթիլ-կաթիլ անձրեւներէն, որոնք կ'իյնային իր տապաւեղձ մարմնին. իր երկայնահասակ բուսներով եւ դաւադիր թուփերով հետզհետէ կը պարփակէր գիւերային այս հագուազիտ այցելուին ներկայութիւնը: Փոթորիկը կը ստեղծէր երաժշտութիւն: Երաժշտութեան ճառագայթը կ'ամփոփուէր ձիւռ աչքերով մարդուն նայուածքին մէջ պիտի իր ջերմութիւնը թողուր, քանդակէր ինքզինք ու չհեռանար: Վայրի ձիւռ անսանձ աչքեր, խոշոր, տխրաթաթաւ, պահանջքի պէս արթուն: Ամոռը բռնեց մարդը իր աթոռը վերադարձող աղջկան ձեռքը, «Լի քիչ էլ պարենք»: «Քիչ ետք», ըսաւ աղջիկը եւ վերադարձեց իր տեղը: Բժշկապետին կիներ բաժակը բարձրացուց.

— Ձոյս, խօսելու կարգը քուկդ է, բան մը ըսէ:

Ձոյան մինչեւ մէջքը բարձրացաւ, սեղանին ծածկոցը մէկ անկիւն հաւաքուելով վար քաշուեցաւ ընդոտտ, երկու ափերը դրաւ Ձոյան սեղանին մերկացած մասին եւ շեշտակի նայելով Նիրվային.

— Գու մեր մէջէն է՛ն բախտաւորը դուրս եկար, — ըսաւ, — կենացդ:

— Ինչո՞ւ այդպիսի ենթադրութիւններ կ'ընես, — ըսաւ բժշկապետին կինը, որուն հրեշտականման դէմքին ետեւ կի՛նը կար, որ իր դառնութենէն ուրիշներուն բաժին հանել կ'ուզէ:

— Ենթադրութիւն չկա՛յ, իրականութի՛ւն կայ, — բղաւեց Ձոյան, — քու կենացդ, արմէնսկի:

Նիրվայն անտարբեր բարձրացուց բաժակը եւ պիտի առնէր ումպ մը.

— Օ՛ր, ո՛չ, ո՛չ, ձեւ մի ընեք, ինչ որ սկսիս՝ պէտք է ցմբուր իմեա, — նետահարեց, իր կասկածները եղունգներով բաժակին յատակը մատնացոյց ընելով:

Նիրվայն յօնքերը կիտեց՝ Ձոյա-մոյս չէ, ուրի՛շ բան մըն էր, որ կը պայթէր օդին մէջ: Աչքերը սեւեւեց Ձոյային եւ տեսա՛ւ ի վերջոյ, անոր կանաչ ապակիէ ձուածեւ աչքերուն մէջ միայն տատանող ծովաբոյսեր կային, բոլոր շնչաւորները դացեր էին այնտեղէն: Յետոյ տեսաւ, որ այդ աչքերը անկարեկցօրէն կրնային շնչահեղձի որեւէ բան, եւ ուղեց հաստատել, որ ինքը պիտի չիյնար անոր սահմաններուն մէջ, ո՛չ ժողովուրդներու բարեկամութեան պատրուակով, ոչ ալ նոյն սեռին պատկանելու պատրուակով:

— Իրար մի՛ անցնիր, — ըսաւ, — ինչ որ ես կը սկսիմ՝ կը իմեմ ցմբուր, — եւ պահ մը ետք աւելցուց յատկանշական ժպիտով, — անշուշտ, եթէ ուզեմ:

Ձոյան նորէն քաշեց ծածկոցը եւ գլուխը ետ տարաւ, կարծես գնդակ մը պիտի նետէր: Աջ ձեռքը մխրճեց հինայով օծուած, գունազեղ գանգուրներուն մէջ, եւ՝

— Սրեւան գնա՛, — բղաւեց, — կի՛նգ, գաւակներդ կը պտտցնես: աշխարհին մէջ տեղ չմնա՞ց, անտառին սա գերեզմանի պէս տունը դատար:

Հայ բժիշկը մօտեցաւ կնկան եւ ուսերէն բաներ մը ըսաւ ամենայն հանդարտութեամբ: Նիրվային նայուածքը տարուբերեցաւ ձիու աչքերով մարդէն՝ Ձոյային, անդրադարձաւ, որ դեռ Փօլը վերադարձած չէր: Ձոյան աչքերը կեղբորոնացուց, ուղղակի դամեց նիրվային վրայ:

— Յմենք քու կենացդ եւ միայն քու: Մենք բոլորս չկանք, մենք մեռածներ ենք, ամէն մէկս, որ հոս նստած ենք: Մենք մարդ կը բուժենք եւ մեռածներ ենք: Հոն՝ թունաւոր օձերու հետ կը խաղայինք, հոս՝ անթոյն, բայց դուք չէք հասկնար ասիկա, երկուքն ալ կը սպաննեն:

Գիներն մէկ ցուցնով մաղեց զգեստին վրայ, որ արդէն իր հեծկաւորի ալիքները կը բռնէր: Իռենան մօտեցաւ, քնքշութեամբ գրկէց անուժները եւ ուղղեց քովնտի դուռնէն ներս:

— Մենք մէկական կմախքնե՛ր ենք, — կը պոռար Ձոյան նիրվային դարձած, — միս մնացած է, մի՛ս, հոգին քաշած-հանած են, կը հասկնա՞ս:

Տանտիրուհին շտկեց ծածկոցը, տեղաւորեց գաւաթ-պնակները: Բժըշկապետը, լայն ժպիտ մը գծադրած դէմքին՝ ոտքի ելաւ եւ սկսաւ ճառ մը, մէկը այն ճառերէն, որ բոլոր խօսքերը կը սպասին, որպէսզի փոխանցեն ինչ որ չուտին: Երբ աւարտեց՝ կօշիկները ձեռքը բռնած վերադարձաւ Ձոյան, մուժ կանաչ, թոյլ, երկարաուուն շապիկ մը հագած, ցաքուցիւր մազերով: Աթոռը մօտեցուց նիրվային, կարեկցաստոյզ, միապաղաղ ձայն մըն է, որ ելաւ իր կոկորդի կրակէն այս անգամ:

— Ես քեզ մասնաւոր վիրաւորել ուզեցի, եւ ըրի՛: Մենք մեռած ենք: Եթէ վիրաւորուած կը զգաս՝ ցնծա՛, դեռ ի՞նչ կ'ուզես: Ես ա՛լ բան մը չեմ զգար, ոչ մէկ բան, — ըսաւ զարնելով փորին, — մենք մեռանք-վերջացանք, սակայն դուք, դուք հիւսա՛նք ժողովուրդ էք: Ասանկ չէի, տասնվեց տարի ապրեր եմ Եգիպտոս, նախկին Թաղաւորին սիրուհին էի, երկու տարի լման: Գեղեցկուհի՛: Հիմա բան չմնաց: Իմ սիրահարներուս թիւը բոլորիդ մատներուն վրայ չի համրուիր: Բայց մէկը, զոր սիրած եմ մինչեւ այս վայրկեանս, այս վայրկեանիս իսկ — ցուցամատը խփեց սեղանին — հայ էր, աղջկանս հայրն է, խենթ էր, մոլոխանդ անասուն ամէն բանի մէջ, հայ էր՝ ի՛նչ պիտի ըլլայ, ո՛ւր, անոր արիւնը պղտոր չէր, — մըթմըթաց, յետոյ բարձրացուց ձայնը, — քեզի ո՛վ ըսաւ, որ հոս դաս:

Բժշկապետը լսելի հազ մը հրեց հնդկահաւի նման երկար վիզէն, պտուղներու սպասը հրեց սեղանին կեղորոնը եւ ուշադրութիւնը Ձոյային վրայէն շեղեցնելու յայտնի ճիգով սկսաւ խօսիլ ժողովուրդներու բարեկամութեան անհրաժեշտութեան մասին:

— Լուէ՛, լուէ՛, վարնո՛ց, — պոռաց Ձոյան, — այսօր պիտի չպղծուինք տարեդարձդ է, կեանքիդ մէջ մէկ օր գոնէ մաքուր բան մը ըրէ: Այսօր խօսք կու տամ՝ պիտի չթողու՞մ, որ թունաւորես մեզ, այսօր պիտի գինովնա՞նք, այսօր պիտի գգա՞նք, պիտի զգանք, որ կ'ապրինք կոր: Օ՛հ, հօ՛, հօ՛, ձերք մեծապատուութիւնը կարմրի՛ւ գիտէ եղեր: Գիտե՞ս ինչու կը ձգէ որ ազատօրէն խօսիմ, — դարձաւ նիրվային, — դուն կը կարծես, որ խենթ եմ, չէ՞, ասոնց պաշտպանութեան ձեւը ա՛ն է: դուք կը կարծէք որ խենթ եմ, անհաւատարակչի՛ն, ես գիտեմ որ չեմ խենթ: Ես չեմ խենթ, ես մարդն ալ կը կարծէ, որ.....: Աս վախկոտ, կեղծարթ թունո՞ւ օձը, ասանկ քաղաքավար իր կնո՞ղ

ՀԱՄԱՐ 256-2013
digitised by A.R.A.R.®

քով նստելուն մի խարուիր, ամէն օր կը պնդէ, որ շարունակեմ հետը պսակիլ, թէ ոչ՝ զիս ետ պիտի լլրկէ, զիլիտն անգամ ըսեր եմ իրեն՝ կը գանձմ կոր քեզ մէջ, փի՛ր՝ ո՛ւ։ Հիմա ալ Հանդարտեցնելու համար Եւրոպա պիտի զրկէ եղեր։ Մեռած մէկը կրնա՞յ ճամբորդել։ մեր աչքերը զօտով բաց կը պահեն կոր։ կարմիր օ՛ճ, հարցնեմ քեզի՝ քեզ ո՞վ պիտի զրկէ հայրերուդ կմախքին քով։

Փօլը ապշած նստեր էր, Նիրվային ձեռքը ամուր բռնած իր ափին մէջ։ Զոյան երբ նշմարեց Փօլը, կոկորդը մաքրեց, ժպտեցաւ եւ մեղմանուչ ձայնով. «մազերս աս գոյն չեն, չկրցայ շտկտել», ըսաւ գոհունակ գաղտնիք մը արտայայտողի պէս, յետոյ գլուխով ցոյց տալով հայ բժիշկին կողմը. «շարաթը անգամ մը անպայման քովս կու գայ, — ըսաւ, — բայց ես իր արիւնը չեմ քամեր այդ Իռենա ըսուած զեպրային պէս»։

Հայ բժիշկը մօտեցաւ իրենց, Նիրվան եւ Փօլը կայնեցան։

— Սրանք, ի՞նչ ասեմ՝ ափսո՛ս են։ Ուշադրութիւն մի՛ դարձրու, քոյրի՛կ, — յետոյ բռնեց Փօլին գոյգ ձեռքերը, — էստեղ զիշերէք, ինձ մօտ, էս անհամութիւնները կը մոռանանք՝ կարգին կը զրուցենք։ Արէք իմ մօտ, խոշոր փսեաթ ունեմ։

— Տանտիրուհին ըսաւ քիչ առաջ, որ մեզի հիւղակ մը յատկացուած է, — ըսաւ Նիրվան։

— Առտուն կը տեսնուինք, — ժպտեցաւ Փօլը։

— Ի՞նչ ասեմ, — յուսահատեցաւ մարդը Նիրվային նայելով, — առաւօտեան շուտ արէք ինձ մօտ, Իռենան էլ մեզ հայկական սուրճ կը պատրաստի, ուզարկել են Երեւանից։ Երկար կը զրուցենք։

— Քեզ փորձանքի մէջ չենք ուզեր դնել, — մտահոգուեցաւ Փօլը։

— Զգում էիր, հա՞, — ժպտեցաւ բժիշկը, — էս անմարդաբնակ անտառին մէջ էլ մեր վզին չքեր են։ Բայց ոչինչ։ Մէկ-մէկ կատաղում եմ, ասու՛մ եմ՝ սա բոլոր օձերի թոյները հաւաքեմ, զնամ էնտեղ, մէկ-մէկ սրկեմ, յետոյ ասում եմ՝ ա՛յ մարդ, սրանք մարտիի պէս պատեր են մեր երկիրը, ո՞նց կարող ես ոչնչացնել, գլուխդ գլխիդ պահիր՝ դա էլ բաւական է։

Փօլը զգուշաւոր չորս կողմը կը զննէր, բժշկապետը կը դիտէր զիրենք. ռազմավարութիւնը ձախողած էր, հայը արդէն հայերէն կը խօսէր իր արիւնակիցին հետ։

— Մի՛ անհանգստանայ, — Փօլին ուսը թօթուեց, — սրանք դեռ հայերէն չեն սովորել։ Ուղեցին իմանալ ԲՈՒՐՊԱՄԻՆ ինչ կ'ասենք հայերէնով, ասացի՛ էլ։ Հիմա եթէ էդ սրիկան քեզ՝ էլ Փօլ ասի՛ չգարմանս։ Մի կարգին ապտակի՛ թէ ուզում ես, բայց իմ 4522ի վրայ չգցե՛ս։

Ժամերէ ի վեր իր կըքը որոնող խնդուք մըն էր, որ սանձը արձակած՝ կը տարածուէր հիմա Նիրվայէն՝ Փօլին, Փօլէն՝ բժիշկին, անկէ՛ նորէն Նիրվային։ Վայրի ձիւն տրորեր էր անցած ուղին։ Որքան խոռվահար՝ նոյնքան անսանձ թափի մէջ էր, տեսեր էր իր ցեղակիցները արեւադարձային այս թաքնամրմուռ անտառին մէջ։ Ուրի՞չ էր իր ճամբան։

Եւ այդ գիշեր խօսեցաւ անտառը, մարդկութիւնը գրկած օրէն՝ կարեկցանքի եւ գայրոյթի միջեւ կեանք մըն էր անորը։ Իռենան կանգնեց էր իր պատշգամին վրայ, անչարժ ու մելամաղձիկ, անկանթ ծաղիկի պէս։ Դեռ հայը չէր վերադարձած իր գաղջ, իր հարցազերծ գիրկը։ Կ'ահապանանար անտառը, կը խօսէր զարեբով ամէն բան լսած ու լռած Իռենային՝ այս պահուն ինքնապաշտպանութեան համար կը վերջիչես ինչ որ կը մըմնջէր քեզի ամենամտերիմ պահերուն. կը կառչիս այդ բառերուն, յանկարծ քովէդ խուսափող զատակդ բռնելու պէս։ Քանի որ ծնունդ տալը քեզի համար անընդունելի փորձառու-

Թիւններէն մէկն էր՝ կեանքը սնանեցաւ ամբողջական անորոշութեան մը մէջ, ուր որեւէ պայթում չկար, պարզուելով հետզհետէ այն հարկաւոր ուժէն, որ կեանքին շարժումը պիտի պահպանէր, դանդաղելով անշարժ կէտի մը վրայ եւ ալ գրեթէ դադարելով այնտեղ: Կեանքին ինչ փոյթն էր ճշգրտասիրութիւնը եւ նուիրումները, Իռենա: Հիմա պիտի ստիպուիս այլեւս պղտիկ թերահաւատութեան մը տեղ բանալու — կա՞յ իրականութիւնը կեանքի կեղտ ու դիրտին, օծման ու հեծքին — յետոյ վախուորած պիտի ծածկես եւ անայլայլ մտնես յիշատակներու խուցիղ մէջ: Հոն ալ պիտի ծերանաս կ'երեւի, եւ պիտի ընդունիս ծերութիւնը ճիշդ այնպէս՝ ինչպէս երիտասարդութիւնը ընդունեցիր՝ անտարբեր եւ կրքազերծ: Ափսո՛ս, որ վարդէ պարտէզներ չունեցար, չհասկցար, որ փուռը չէ որ կ'արիւնէ քեզ, այլ՝ վարդը: Ինչ հաւատարմութեամբ հոգ կը տանիս թաղարներու: Ձգացիր, այո՛, զգացիր կենդանական բնազդով, որ մէկը բարակ շեղբի պէս ինկեր է ձեր միջեւ: Տեսար, որ ընդձովեայ բոյսի նման՝ սիրած մարդը կը բացուի միւսին, որ ունի միեւնոյն մարմնի գոյնը, միեւնոյն բառերու հողը, եւ դուն լռիկ, կիսապոկ բոյսի նման փոքրացար: Ի՞նչն է որ կրնայ դիցարանութիւն հիւսել մէկ օրուան մէջ, եւ ի՞նչն է որ երկար տարիներու տափակ ակօսներէն հազիւ մանր-մանր պատմութիւններ կը հաւաքէ: Մեղքերուդ անմեղ սպիտակութիւնը վիրաւոր աղաւնիի պէս թաւեր է պատըշգամին: Քու հարցը այն է որ անդադար, անդադա՛ր ինքզինքդ սրբազրեցիր, միւնչեւ որ ա՛լ բան մը չմնաց սրբադրուելիք: Մէջը պարապ տունկի պէս ես, որովհետեւ խնթութիւն չունեցար: Իուն չպոռացիր Զոյայի պէս, Զոյային նման չուժովցար զայրոյթիդ մէջ, սեռի կամ սիրոյ պահանջներուդ մէջ չպահանջեցիր, ամփոփուեցար պտտեանիդ մէջ եւ յիշատակներդ զգուցիր: Բայց յիշատակներդ ներկայի մերկութիւնը չէին ծածկեր, միայն պահ մը կը հեռացնէին քեզ անկէ, այսինքն՝ կը խարէին քեզ: Իուն երբեք ցաւը չաղաղակեցիր, Իռենա, ցա՛ւ: Գիտէիր, որ մարդուդ կեանքին մէջ ռեհանի թուփի պէս էիր: Եթէ մտող զար՝ բոյրը պիտի առնէր՝ պիտի դամուած մնայիր այդտեղ՝ սպասող իր գգուանքին, եւ ամէն անգամ, որ իր խորութիւնը յորդէր մէջը՝ պիտի ծաղկէր առօրեայի յոյսը: Բայց անոր կեանքի պատասառին վրայ հայ ըլլայու կսկծանքը զրուած էր, ընդերքդ կը հպէ՞ր անորինին: Ան պիտի հեռանայ քովէդ յաճախ, թերեւս առանց անդրադառնալու իր որոնումի խորհուրդին, յարատեւ հաւաքելով փոփոխ հանգոյցներ: Իռենա, անոր ճակատազրին մէջ մուկ երիզ մը կայ, զոր դուն նշմարեցիր ու տրտմեցար, որովհետեւ հասկցար անոր առեւտրած խայտանքը իրեն. քեզի յատկացուցած իր ճամբան մինչեւ ձեր ծերութիւնը կրնայ շալկել, բայց իր բուն ճամբան զաղտուկ է, հեռու կը մնայ օրերուդ շուքէն, այն ճամբան է, ուր միայն իր արեան բազադութիւնը ունեցող շուքերը կրնան մտնել:

Գժբախտաբար հոգիդ իր ճիշդ խեղդել սորված էր, չէր սորված աղաղակել: Իսկ ո՞ր տղամարդը կը լսէ ներքին ճիշդ, եթէ խօսքիդ, շարժումի բաճերով չզգգոցես հողը: Այնքան դալուկ զէմք մը ունիս, արշալոյսները չե՞ն դիմաւորած քեզ: Մաս-մաքուր մնացեր ես սիրոյդ մէջ եւ թաքնապիւրիկ: Մէջը մաքուր ու անարատ պահելու մէջ ի՞նչ շնորհ կայ, Իռենա, շատ-շատ քանի մը հոգի պիտի հիանան ու անցնին: Կ'անդրադառնա՞ս արդէն՝ ինչ մեն զրկանք է, երբ քու աշխարհիդ մէջ ամէն երեւոյթ, ամէն շարժում կրնաս բացատրել եւ բան մը չունիս պատմելիք, բան մը չկայ զարմանալիք: Օրերդ եթէ զերծ են կիրքէ՛՝ ցրտաբան է. այդտեղ նստած եռաչուանի ղէմքի նման բաց ու անախորժ՝ մաշած գաւանանքներու, սիրոյ անհամ սովորութիւններու եւ սուտ երդումներով լեցուն տափարակ աշխարհի մը յուշամատենա՞ն պիտի դրես: Անմեղ բո՞յրը թաղարներուդ: Լուռ, անհմայիչ բան մը հոգիդ ներքնախա-

ւերուն մէջ՝ կեանքի արժեւորումի դէմ, կիրքի եւ զգայնութեանց դէմ՝ հակափոփոքի պէս պահպանեցիր: Անհամար թաղարներ պատշգամիդ վրայ: Անդին՝ խորհրդաւոր աշխարհ մը կար պատշգամիդ շորուցամաքայինէն անդին: Կը տեսնեմ, որ տերեւի պէս կը դողաս, կ'ուզեմ գթութեան շիւղերէս երկարել քեզի, բայց կը մերժես բան մը խօսիլ: Ասիկա հպարտութենէդ չի գար. դուն վարժուած ես այդ մարդը սիրելու, ընդամէնը այդ է: Իսկ սէրը անսովոր է ամէն պահ: Մտօն արմատին թափուած հականերիչ դեղի պէս է, որ կը սպաննէ բոլոր մակարոյժները, եւ ոչ թէ՛ գեղատեսիլ կամ դալկահար շիւղի նման կը կախուի կոճղի վիզէն: Կը հասկնա՞ս, Իռենա: Յիշէ Ձոյան, նստած է նորէն բանի մը վրայ, նորէն գաւաթ կը լեցնէ՝կը պարպէ: Էութիւն մըն է, որ կը մարտնչի տեղերքը կլլել, կրակի պէս փաղաքիչ: Կ'անձկայ աշխարհի առնակնութիւնը խել: Իր անձը համալիր մըն է անթիւ մուտքերով եւ ելքերով, իսկ իր կեանքը՝ կենսախայտ լացով ու աղմուկով՝ յորդած օրերու համազուամար: Յիշատակներուն գառածումը կարծես իրեն մատուցուած թարմ ծաղիկփունջի տեղ դրած կը ցուցադրէ բոլորին, այն պահուն, երբ իր յանկարծ սնանկացած գիշերները, իրենց անկործան մարմնով՝ իր տարիքը շորցած հացի պէս կը փխրեն: Միայն իրականութեան յատակը ինկողը կրնայ ունայ: Լքումի եւ յուսահատ ոգորման մէջ՝ ինքնահաստատման վերջին փորձն էր այս գիշեր Ձոյայինը, երբ անգիտակցաբար կ'անձկար հաստատել իր տեղը իր մահէն առաջ, երեւելի մահէն առաջ, որոշել իր տեղը բոլորին կեանքերուն մէջ: Այսինքն՝ մահը եկեր-հաստատուեր է իր մէջ, անոր ալ ձայն տուեր է Ձոյան: Ինք իր ինքնութեան ազատութիւնը ունի, գոհ է իր ունայնութենէն. գոհ է կամ գոհ չէ՝ եթէ ինքը Ձոյան է, ա'ս ալ իր կեանքն է: Դուն ճգնեցար ունայնամտութենէն անդին անցնել, Իռենա. գտար ինքզինքդ, բայց կորսուցիր մնացեալը: Ձոյային կեցուածքը այս գիշեր՝ յեղայայտ սուրի պէս՝ շեղեալ իրականութիւնները մէջտեղ հանել, որպէսզի անոնց փալիւնքով ստուերարկէր բուն, անյայտ իրականութեան դիմաւթերանոցը: Իր գեղեցկութիւնը՝ կեանքին նման տարիներ պայթարած էր, եւ իր սիրած մարդուն պէս՝ տեղ մը կորսուած: Հիմա՝ վերջին տարիներուն հիւսած դալկութիւնն է, որ իրեն գերբնական ուժը կու տայ իր փայփայած, աղեթափուած, սակայն իր մտքին մէջ նոյն գունազեղութենէն շարտեալ կեանքերը հաւաքելու: Տրամաբանութիւնը պարզապէս հարկադիր մերկութիւն մը պիտի գծէր, ի՞նչ պիտի շահէր ինքը: Բիշ շնորհք չէր թաղաւորէն մինչեւ յետին բժիշկը իր գեղեցկութեան եւ կիրքի ոլորաններուն մէջ խաղցնել: Իր կեանքին մէջ խնդուած շուքերը չէին բաւեր կարծես, զանոնք ծածկած խաւարը ամպի թեթեւութեամբ տարիներու ընթացքին թանձրացած էր կուպրի պէս: Անոր արանքէն կը բղաւէր, որ ինքը պիտի ապրէ՛ր: Ամէն մարդու պէս ինք ալ իմաստը չէր կրցած հանել, սակայն հաւատացած էր կեանքին, ա՛յդ կեանքին, եւ անոր ցուցմունքներով եզերք հասնելէ ետք՝ անցնող-դարձողէն կեանքին նուիրած իր բարեքններուն իմաստը կ'ուզէր: Ձոհի պէս, որ անձնուիրաբար զոհուելի ետք՝ յանկարծ կը վերակենդանանայ ցաւերուն սաստկութենէն, եւ իրեն պատահածին իմաստը կը պահանջէ: Պէ՞տք է իր կրթարարոյց գեղեցկութիւնը գործածուէր, ստրկանար, ծնած ըլլալուն երկրի մը մէջ, ուր անօթի եւ անանուն մնալը ոչ թէ անբնական, ալլ՝ բնական երեւոյթ էր. ուր շահագործող-ստրուկի յարաբերութենէն բացի ոչինչ կար բացայայտ. զեխութեան եւ թշուառութեան միջեւ կար աքսորեալ պատ մը՝ ճժողովուրդի թշնամիներու, միլիոններո՛ւ պատը յաւերժ լռեցուած յարասասան խելագար ընդյատակեայ ութթմով մը: Եթէ ճժուչ ծլչր պատին վրայ՝ կը պոկուէր, հեռու երկիր մը կը նետուէր: Պատմութիւնը իր տիրութիւնը կը ստեղծէ, անմարդկայնութիւնը՝ անասնութիւն կամ սրբու-

թիւն: Ինքը անօթի չմնաց: Անշուշտ ապրելու զիւրիւն ձեւ մը չէր իրը: Քսան տարեկանին՝ զգլխիչ էր վայելքի արթնացումը առատութիւնը, ինքը անօթի չմնաց: Եւ համոզուած էր, որ եթէ միւս կիներն ալ ունենային իր քնատուր վայելչութիւնը, բոլորն ալ, առանց քացառութեան բու՞րն ալ պիտի ծախէին, ոչ ոք պիտի տատամսէր ընթանալ միեւնոյն պողոտայէն, ուրկէ իր օրերու շփերթը անցաւ:

Հիմա ի՛նչ պէտք ունէր ինքը աս խամաճիկին՝ բժշկապետին սպառնալիքներուն ենթարկուելու, եթէ չըլլար միջին տարիք կոչուած վհուկը, որ յիւսուեն հոգ կը մթազնէ կնոջ մը օրերուն կենսախայտ բաղնիքը: Ձոյան կը քսէր իր զայրոյթին շեշաքարը կոշկոռ կապած հոգիներուն վրայ: Ինք անգամ չէր հաւատար, որ «հիւանդապահուհի» էր: Ձուր յարութիւն առած, «մենք ինչո՞ւ մեռած ենք», կը բզակէր, բայց այրող մը չկար, որ լսէր զինք: Միայն հանդարտ կը սպասէին, որ այդ աննարին աւարտի բազմածայն ու զրգուած ջիղիքով: Ձուր իր մահուան մէջէն կը խօսէր, այդ փորձառութեան ժապաւենները օդին մէջ խաղցնելով: Փնզի պէս տնակ մը եւ պատշգամ մը չուներ իւեանա, հսկայ զինամթերք մըն էր իր կեանքը, ուր վահաններ չկային, անոր համար ալ՝ խելացի բնագոյժ մը, այլեւս իր կոխը միայն իր անձին գէմ է որ կը մղէր: Իր կնութիւնը ալ իր երազած ասպետներուն չկարծնալ պարտազրեւուս համար՝ զինք ապրեցնող գերազոյն շնորհին՝ կանացի հրապոյրին վախճանումը ա՛յլ աւելի կը հրկիզէր հոգին: Ինք ի՛նչ ընէր քոստո ճառագիւտները, որոնք կեանքը միայն խնդրելով եւ վճարելով կ'անէին, ոչ թէ իրեն պէս՝ յաջողակեցով: Ափսոս է Ձոյան, հանք մը, որ լիովին պեղուած էր, սակայն անոր անգին քարերը՝ անտաշ մնացած. անոնք հիմա ձրիաբար կը շարտէր, իր աչքերուն զմրուխտով՝ ճակատադրական գիշեր մը կորսուած, հեղք ձգած, մլուխներ չյուած կատու մը փնտռելով, որ թերեւս երբեք չէր եղած: Ա՛յ չէր մտածեր ո՛չ եղածներուն, ո՛չ չեղածներուն մասին, իր արիւնք թափած էր, կիրքը ստած էր, փորը բան չէր զգար, արգանդին իջած էին քսան տարիք դանակ: Անիկա իր զոհարարութեան դանակը կը տեսնէր հիմա ամէն ընտանիքի մէջ: Բան չէր մնացած կտռելիք: Տարիքը հեղեղած-ծածկած էր տանիքը իր հեշտասիրութեան, տղամարդու ունայնամտութեան: Վազրի պէս Ձոյան իր հեշտասիրութեան, տղամարդու ունայնամտութեան: Վազրի պէս Ձոյան իր հեշտասիրութեան, տղամարդու ունայնամտութեան: Վազրի պէս Ձոյան իր հեշտասիրութեան, տղամարդու ունայնամտութեան: Վազրի պէս Ձոյան իր հեշտասիրութեան, տղամարդու ունայնամտութեան: Վազրի պէս Ձոյան իր հեշտասիրութեան, տղամարդու ունայնամտութեան:

Շաղը խոնաւ՝ ինկեր էր անտառին թաթերուն եւ մութ երզ մը կ'երգէր: Նիրվան բարակ իրանը որոշապէս անզգեպտին մէջ՝ մտամբոժ կը քայլէր Նամեմային, հոտաւէտ, հեռարձակ արմատներուն մօտէն: Միջատները, սողունները հեռացած ըլլալու էին. այս ճամբան կը հասցնէր կէտ մը, որ չէր խայթեր, ուր թոյն եթէ մնար՝ իր միակ պարտութիւնը պիտի ապրէր: Ինքնաշարժը քիչ մը անդին էր, դոյնը անորոյ, ծածկեալ տերեւներով: Ախորձի մուսքին՝ պանանի լայն տերեւներ կը դիտէին, ներքը՝ յարդին զովարար գոյնը թաւազուր շերմութիւն մը կը հաղնէր: Ժամանակը սեղմուած էր հեռաւոր անկիւն մը, եւ տարածութեան մաքրութիւնը՝ մոլորակին, աշխարհ կոչուած մոլորակին առաջին օրը կը յիշեցնէր: Մարդը ինկեր էր ծունկի, իր անհատմու զգայարաններով կը վազէր բազմեզր ճամբու մը մէջ: «Ես քեզ երկար փնտրում էի», կը կրկնէր, ամենի քուն ուժեր արթնցնելով զգայութեան գոլորտին մէջ, կապելով իր հոգիին ժապաւենները անոր զուներն ցունդուն, իր ամբողջ ցնցումներով պարագրկելով ցեղին ինքնատու զատուցում-

ները: Իրենց արեան լուծոյթին մէջ կրակ մը ինկեր էր, կ'եռար ու չէր հասներ իր լրումին: Աղջիկը գրկեր էր երկիրը, արեւազալէն աւելի կաթնարոյժ, եւ իր հոգիին անուղեւոր արզանդին մէջ յանկարծ կեանքի կոչուած, արոփող ցաւ մը իր սկը կ'որոնէր, եւ այդ սկիին միւս ընդերքը, միւս ընդերքը, մա'րդն էր, արարի՞չն էր, Հայաստա՞նն էր միւս ընդերքը, որ կիտի հասցնէր անպեղծ խորհուրդի մը իմացումին, թերեւս ամէն բան սպառելով այնտեղ. Ծընունդին վստահ չէր, որովհետեւ չկար ցաւ, այլ՝ երանութիւնը իր մէջ ընդունելու խորհրդաւորին արտասուքը, անոր րոպէական կերպարանաւորումը եւ անոր հետ հանդիպման իրենց երկուքին ազերսազին ճիչը:

Արթնցաւ աղջիկը, ախտին մէջ դեռ լոյսը կը վառէր: Օրուան միակ պահը, որ զով կ'ընէր, երբ հովը իր թաքստոցը չմտած՝ այսպէս ժամ մը կ'երթեւեկէր դեռ կիսաքուն: Սարսուռ մը անցաւ աղջկան թեւերէն, շփեց թեւերը: Յանցնուած յարդը կապոցներու վերածուած, բարեհամբոյր հիւրընկալի պէս լոկ կ'էկուած՝ բան չէր սպասեր: Միւս դուռն այլ բաց կանգնած էր, շալակը նետած գետին: Անկէ ետք ծառերն էին, երկինքը՝ իրմէ հոն երկարող: Զիու աչքերով մարդը պառկեր էր դէմքը խոտիջի սանձի մէջ, ձեռքերով գրկած ամփոփած յարդը՝ մազադաթի պէս: Աղջկան նայուածքը անցաւ ախտին հակադիր երկու դուռներէն, անչեղ, գիւղին արահետները երերածփայտին աղամայոյսին մէջ: Ժպի՞տ էր, ինչ էր ինչաւ իր հոգիին խորը: Ներվան բացաւ դուռը եւ սկսաւ քայլել այգիէն դուրս: Ամբողջ երկիրը կանաչ էր, ճամբան՝ ոչ:

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

1991, Յունուար
Նիւ Ճըրզի

Գ. ԳՈՏՈՒՆԵԱՆ

ԵՒ / ԿԱՄ

Ն-ին
«... ձայն շարժման...»

1.

կը մեկնիմ,
կը ներածուիմ բացարանն այս բանական,
կը կարկամիմ.

արտա – Բուն մթուփեան,
սեւ հովը

թոփերուս կը հասնի.

մենճցոզ սկիզբ եւ վերջ, կոզ անվայրափակ լռադէմին.
ընդմտատարաբար լռու վիճակ.

բառեր որ կ'երթան, կը կորսուին ու կը դառնան ինձի,
— անցնող ժամանակ, սպասում —

դարձողներէն գիտակցութիւն մը մէջընդմիջեալ, ուր
ես ան եմ որ չեմ մանաւանդ,

յիշողութեան տարութիւնումը ազատութեան մը մէջ, գոր չեմ ճանչնար,
չեմ գիտեր.

շրջանակ երկնային,

կը խօսիմ մինչեւ հայելին.

մինչեւ նոր հայելին քիչ մը անդին դնեմ,

լայնցնեմ շրջանակը.

ահաւասիկ անցք մը,

չէի գիտեր, ինչպէս ծննդոցի առաջին գոյգը եղեմի պարտէզին օրերուն,

ոչինչ գիտնալդ ալ.

նրազ ներբանային յո գնայ, կ'անցնիմ տեղ մը, կը փոխուիմ.

օր մը նոր, երբ

նարպամաշկը աչքերուս կը պարտախօսի,

(այսօր սա ցարը որքան սուր կու գայ փոսիկին զիս ըմռոյ),

կը տարուիմ

յերկիր

ըստ հղծական.

բուն օճը մատմատեմ աւ ժամուն,

օհհհ. ի՛նչ սահանք, հագագային, քմեքմեք, լեզուապիրկ. կեդրոնախոյս...

2.

կրկին մեկնում.

շնչառութիւն ու լայնաչիլին ազատութիւնը.

կ'իջևեմ կամ կ'ելլեմ, ոչ մէկ սարքերու յիւն ալստեղ, միջուրեանդ,
 շիշէն գուրս օղին գացող եօս, գանխական.
 լորձնաջրեմ աղամամօթը,
 գետինը,
 գիշերը դեռ կը փայլի քարերուն վրայ,
 եռվին մոլեգնօթինը կ'ուռիմ,
 կը շնչեմ նաւարկութեան ծովը, նոճիներու նշանային իրիկունը.
 հրեշտակին անկուսը կը հեռամ.

ջախջախեմ,
 աա խոզագանկը ջախջախեմ, վիզիս վրայ, վիզիս վրայ,
 պատէ պատ գարնելով ջախջախեմ.

լէշ կը ճապաղեմ կոնակէս անդին եօթանասունհինգէ աւելի կողու դիներու
 երեսին...

կը հոգեզմայլիմ...

Վերջը կը բացուի,

— մտահերձու միս անդրագոյն պատկերը կ'ուրուագրեմ, ոչ մէկ յիմար այս
 ափերուն թող մ'օտեմայ —

կը ճեննեբիմ,

թուղթերու հետ շատ կը յաղամ,
 թուղթի մը երեսին շնատամներ կախեցի լուսնին մէջտեղէն.
 հրեշտակ մը յանձնառութեանը համար վիշապի փոխակերպուեցաւ,
 մեծ պատերազմ մը եղաւ, մահուան անձկութիւնը դատարկաբանութիւններով
 էլեր ենք կը լուծենք,

իրարու ցուկերու պէս նայելով,
 մարդ մը վերէն (սատանային կեղակներուն թիւով բերանաբաց հահեայեմ)
 վար,
 վար,
 վար նետուեցաւ...

հազաբներուն մէջ մեր գիշուրիւնները մեր վրայ բարդուեցան,
 մեր ակնագունդերուն եղջերէնները հաներ էինք,
 մեր հին ժամերը հեռուներէն ու մօտերէն հասնող ջուրերով պիտի ծածկուին.
 խոխոզ ականջներուն հետ ճմերքը կը ջնջուի,
 կ'ողբամ ճանապարհներուն համար որ կը հատնին...
 ինչուդ պէտք բարեկամ, այսքան ջիղերով կը թափուիս բաներու մէջ ու կը կարծես
 որ քուկդ են.

ազօտ լոյսով մը դովտի կնիկին արարքը ստուգելու գացի,
 հրեշտակը չկար,
 դովտը չկար,
 աղջիկները չկային, աղաքձանին ոտնահետքերը ծածկուեր էին,
 ճանաչներէն մարմնիս մասերը յոռութեան մէջ ցնդեր են,
 լոյսին սահմանները երկաթացան շուրջս.
 առանձնութիւն, պակուցում մը կ'առնչուի անոր,
 կը մտածեմ որ այս երկրին մէջ ամէն ինչ գողի պէս կու գայ.
 յիսուս պապան խաչը օւսերուն առած մեր վրայէն կը քալէ ամէն ատեն երբ մեր
 կորուստը լեզուն կը պատռ(ր)է կամ ոչ.
 ակունքերովս բացի ոչինչին թիթեղէ տուփը. սեւերու մ.
 բանիւն ծառը ծաղկեցաւ վրաս անդունդին բերանէն,
 ու դառնամ.

3.

վերստին մեկնում.

ընդերք տեղանիս (սպասի պատուհաններու վաղորդայնը նոստազկային կը լիա-
նամ, հոփով պարսպու իլը պարապիլը կը շրջիմ, լեկոսը կ'արտասանեմ - ժամը
լոյսի).

կը բխէի ետեւի հեռունքէն,
(հառը օղապարիկներուն մէջ լեցուցի երկինքէն),
անցայ ինքէս առջեւ, ժամանակներու մէջ գալիմ, մինչեւ՝
երբեք չկայ՝
տիրը մտապատկերիմ քանճրացնէ...

դատարկ արահետ.

կը յառնեմ քազմածամանակեայ մարմնով, կը փքթիմ.
— տեսողութեանս շարաքնակութիւնը կը միամտանամ —
պայթումներ չկան հիմա, գուրսը.
երթիւներու մանրացեալ կտորներով կազանդի ծառեր սնկեցի բիբերէս ներս,
ու անոնց պտուղները պատահական կտորներէն կ'առնեմ կոր,
աչքերս այլեւս ժայռերու տակ շնմնար,
գարշապարներուս քարճրացումները բարեւներ սահմանեցի անոնց ու
երեւակայեցի՞նք ապագայ գարուններուն, ա՛մառներուն, աշուններուն ու
ձմեռներուն մասին,

ծաղիկներու հետ փուշ եւ տատակ այ հաւաքեցի՞նք,
վաճառեցի՞նք խօսքերու վաճառականութիւնը (ազաքանգեղոս շքլլաս),
բուսցուցի՞նք,
կանուխէն խնամեցի՞նք, ամրան տաճարուն՝ քրտինքները փոսի յատակը կաթեցան,
ձմրան՝ անձրևներուն խառնուցան, շէլի սեւ ջուրերուն
քախտաւորութեան երանաւտութիւնը.

բազդ մը ցանք եմ մօտս,
երկաթին վրայ որքան ազուրկ կ'ոլորուիս, կանաչ, կանա՛չ,
autumn seeds՝ նարը արիւնոզ, ազանակաթիլ.

շրջիկ, տեսածով ասդին, անդին կը շտկուիմ.

մտը արեւուն տակ վառեցի,
չէութեան ձգումէն կը քարշուիմ,
կէտի մը,
այնպէս ինչպէս երագներուս մէջ դէպի անդունդ գլորումներս, որ արթնութեան կը
հանեն,

ամէն բան կը գտնեմ բացի քանէ մը.
չեմ գիտեր թէ ինչ կը փնտռեմ.
— ով ազոտաին թեւերուն տակի խլեակներ...
եզակի յոգնակիութիւն մը կ'առաքինամամ, գուցէ.
դեռ, խնդրեմ, ուր ե՞նք այս հոսանքին մէջ գիտակցութեան.
կ'արտաքիս(ու)իմ մէջդ եւ ուրիշներու, կ'արտաքիս(ու)իս մէջս եւ ուրիշներու,
կ'արտաքիս(ու)իմ մէջս ու մէջդ,

ներկան, անցեալը, ապագան անպատուեան սենեակներու մնացեր են,
կենանք խունկին առջեւ, ան ուրիշ կ'ելլէ
բացակայութեան հրապարակը,
օ օդ ասուն գերեզմանատուներու...

4.

Երեք ճայներում որ անցան ու պիտի գան, կցորդ վերջիմ էա մը ապածեռն.

բնախօսական երկիր, գետը կը հեռացնեմ ապա,
կը բանեն գիս,
օտարութիւնը կը բնակիմ. կաւէ ամաններ ծուխերու վրայ կը շարժեմ.
ստեղծութիւններ թփնեցինք ամէնուրեք,
ազիւսները կամ ժայռաբեկորները կեդրոնի շէնքերուն իրարու չձգեցինք որ
վստահին,

մաղը մեծօրինակ, անտառային կը մաքրեմ,
տունէտներում վայրենութիւնը կրծեցինք,
ակնակապիճներուդ բացուելէն ի վեր օրօրուեցար, կ'օրօրուիս թիւր
հասկացողութիւններով,

վշակութային ճակատագիր մը պիտի պատցենեմք քանի ցերեկը կայ,
ազուէսներու պէս մի ըլլաք միայն, ե՛ւ «աղաւնեգլուխդ իմ» բանաստեղծեմ,
որպէսզի

որպէս խոիւ չչորանեմ,
լաօկոսնին զգուշացումը մտիկ չըրինք,
չուզեցի մտիկ ընել,
ըսի. ի՞ծերուն խայթոցները ներառեալ գիրենք պիտի կործանեն,
ձին ինչ յաւակնոտութեամբ այս քաղաքը կը մտնէ,
անոր անկումը աշխարհիքը եզաւ.
այրիները պիտի դադրի՞ն լալէ անոր վայրկեաններուն մէջ.
վարագայրները վերէն վար կը պատուին,
նոր երկինքն ու երկիրը բզկտուած ո՞ր լեզուովս նօթեմ,
բալորն ալ լքեցին փախան,
բեկման անկիւնը չհասած
լեզուները ո՞ր փախչին...

Սեպտեմբեր 91

ԳԷՈՐԳ ԳՈՅՈՒՆԵԱՆ

Ն. ՊԵՇԻԿՅԱՆԻ ԳԵՂԱՆ

— ՀԱՅԱՍՏԱՆԱՍԵՐՆԵՐ —

(ԵՐԳԻՆԱՎԷՊ)

ԽՆՁՈՅՔ, ԿԻՑ ՈՒ ՊԱՏԳԱՄ



Արշակեանները, շարաք օր մը, Երեկոյեան,
խնջոյ՛ք մը սարքած էին իրենց բնակարանին մէջ:

Հրաւիրուած էին միայն Մամսեանները, պա-
րոն Եղուարդն ալ միասին. ինչպէս նաեւ Մարտիրոս ու
Սեւան Միխայելեանները:

Ընդամէնը ինը հոգի:

Սեղանը ճաշասենեակին դուռնէն երկարած էր
մինչեւ պատուհանը: Սեղանին սկիզբը, դրան մօտ,
նստած էր Արշակը, իսկ ծայրը, պատուհանին մերձ,
տեղաւորուած էր Մարտիրոսը: Աջ կողմը բազմած էին
Գաբարի, Եղուարդ եւ Անժելիք, իսկ ձախ կողմը չորս
հոգի:— Սեւան, Գեղամ, Եպրաֆսէ ու Արթիւր: Այս ձե-
ւով, Եպրաֆսէ ու Եղուարդ էին դէմ դէմի: Արթիւրն ալ
դիրք գրաւած էր Անժելիքին դիմացը:

Սեղանը սարքուած էր պուրժուական ճոխու-
թեամբ ու ճաշակով: Ազանդերները պատուական ու
պէսպիսուն էին: Կատարեալ վարիէթէ մը ազանդերնե-
րու, մասնակցութեամբ եւ միացումով արեւելեան ու
արեւմտեան հոթ տ'էօպրներու, ամէնքն ալ հոթ ջոնջուր:
Իրբեւ ըմպելի կային շիշեր փէրմոյի, փոքրոյի ու կար-
միր գինիի ու խարտեաշ գարեջուրի գերմանական:
Բազմականները բոլորուած էին հանդիսաւոր սեղանին
շուրջը, ուր առանց ամօքի կարելի էր հրաւիրել ցար մը
կամ համայնավար մենատէր մը:

Եւ արդէն այդպիսի անձնաւորութիւն մը կար
նաշատենեակին մէջ.— Ստալինի ուրուականը:

*(Այս մասն ալ պիտի ներկայացնենք թատե-
րական ձևով, քանի որ ուսողներն ու խմող-
ները ու քիչ թէ շատ խօսողները ինը հոգի են):*

ԱՐՇԱԿ (տանուտիրական հայրապետութեամբ.—
բաժակները թո՛ղ ըլլան լեցուած, իսկ ախորժակները
բերամարաց:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Ըսածիդ պէս է: Պատրաստ ենք
հրամաններուդ, անցնելու համար յարձակողականի:

ԱՐՇԱԿ.— Վայրկեան մը. վայրկեանը վսեմ է:
*(Փէրնոյի բաժակ մը բարձրացուցած)՝ Սիրելի եւ յարգելի
ընկերուհիներ ու ընկերներ, առաջին բաժակը պիտի
ըմպենք մեր յաւիտեանական հայրիկին, մեծահանճար
առաջնորդին ու երիցս անմահ ընկեր Ստալինի յիշա-
տակին: (Արշակ բաժակը մէկ կողմ դրած, ու երկու արկերը
բացած՝ վեր-վեր կը շարժէր, ելլելով ոտքի: Միւսներն ալ
հեանեցան իրեն ու պահ մը մնացին յոտնկայս):*

(Բոլորն ալ ըմպեցին եւ ճաշակեցին):

ԱՐՇԱԿ.— Թէեւ մենէ անդարձ բաժնուած, բայց
միշտ մեր մէջ գտնուող արեւ Ստալինի յիշատակին
պէտք է ըմպել այնպէս՝ ինչպէս կը խմեն կենաց մը մեր
սիրելի Հայաստանի՝ սիրելի եղբայրները: Այսինքն՝ մէկ
ուսմով, մինչեւ գաւաթին տակը: Այսպէս վայլում է
խմել մեր բազմահանճար հայրիկին յիշատակին: Այ-
նուհետեւ կրնաք ըմպել ուսմերով, քանի որ վարժուած
չէք բաժակները մէկ անգամէն պարպելու: Սակայն, մի՛
մոռնաք, միշտ առաջին բաժակը ըմպել հայրիկին յիշա-
տակին ու մինչեւ տակը, մէկ ուսմով:

*(Ընկերուհի նպրաքսէ երգեց երեւանեան մե-
ղեղի մը: Բարեգործութեամբ ծափահարուե-
ցաւ):*

ԵՊՐԱՔՍԷ (հարցնելով եղուարդին).— Ինչպէ՞ս
գտաք ձայնս...

ԵՌՈՒԱՐԿ.— Գրաւիչ:

ԵՊՐԱՔՍԷ.— Ձե՞ք չափազանցեք...

ԵՌՈՒԱՐԿ.— Գրաւիչ:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Ա՛, գրաւիչ ձայն է. ըսելիք չկայ:

ԱՐՇԱԿ.— Ընկերուհի տիկինիս երեսնեան եր-
գէն ետքը, բաժակ կ'առաջարկեմ ամենաթանկագին կե-
նացը մեր մեծատաղանդ նոր առաջնորդին՝ թթուանուշ
ու խստանուշ ընկեր խրուշչեւին:

*(Արշակ բաց արկերը վեր-վեր ըրաւ, ոտքի ելաւ
ու ոտքի հանեց բոլորը, բացի Գաթարիէն):*

ԱՐՇԱԿ.— Ընկերուհի Գաթարի, կրնայի՞նք հասկնալ պատճառը յարգանքի մէջ թերացումիդ, համդէպ ընկեր հրուշշեի:

ԳԱԹԱՐԻ.— Ոտքի ելլելու մասնաւոր յարգանքը կը պատկանի միայն ընկեր Ստալինի: *(Ու ոտքի ելաւ, միւսներն ալ կրկին հանկուտ ոտքի: Երբ նստան, շարունակեց խօսքը)*՝ Ես նախատած պիտի ըլլայի մեր անկրկնելի հանճարեղ հայրիկ, արեւ առաջնորդին յիշատակը, եթէ մոյմ յարգանքը ռւնենայի ուրիշի մը հանդէպ ալ:

ՍԵՒԱՆ.— *պաաւօ՛:* Բարձր խօսք է:

ԳԱԹԱՐԻ.— Ատկէ զատ, ես կիմ եմ: Կիմ մը ոտքի չ'ելլեր. ոտքի կը հանէ: Մա'նաւանդ՝ երբ կիմ մը կի'ն է, անպատճառ ոտքի կը հանէ: Եթէ ընկեր հրուշշեւը գիս տեսնելու ըլլայ, իբրեւ ճաշակի տէր ու քաղաքավար մարդ, կը ցատկէ ոտքի: Նոյնիսկ ծունկի անգամ կու գայ առջեւ: Կը խմեմ հրուշշեւիս կենացը, բայց նստուկ:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Նախ ծանօթութիւն մը տանք ընկեր Եղուարդին, որ տեղեակ չէ մեր արանդութիւններուն: Հայաստանասէրներուս արարողապետն է ընկեր Արշակը, որ սովորութիւն ունի ամէն անգամ ոտքի հանելու մեզ, երբ ողբացեալ հայրիկին անունը կը տրուի: Աւանդապաշտ ըլլալով անգլիացիի մը պէս, յամառօրէն կամ յարատեւօրէն մոյմ յարգանքը կը մատուցանէ մեր նոր առաջնորդին ալ: Որոշ իրաւունքներ ունի: Միւս կողմէ, ընկերուհի Գաթարի ալ որոշ իրաւունքներ ունի, եւ ինքը արդէն պատճառաբանեց: Ատկէ զատ, լաւ է որ այս կարեւոր խնդիրը միանգամընդմիշտ կարգադրելու համար, օրակարգի հարց ընենք, եւ որոշում մը տանք: Սա ալ չմտնանք, որ նոր առաջնորդը հիմին դէմ է:

ԳԵՂԱՄ.— Հիմը ու նորը կրնան իրարու հետ համաձայն չըլլալ, սակայն մենք պարտինք մինչեւ մահ համաձայն ըլլալ թէ՛ մէկուն, թէ՛ միւսին: Երկուքին ալ հաւասարապէս: Անոնք սովետական հսկայ նաւուն նաւապետներն են: Մէկը մաւր վեր հանեց, միւսը մաւր յառաջ կը տանի: Մենք ալ կ'ընթանանք թէ՛ դէպի վեր, թէ՛ դէպի յառաջ:

ՍԵՒԱՆ.— Լայն խօսք է:

(Ապա, առաջարկուեցան նոր կենացներ, խօսուեցան ուղերձներ, եզան խմբերգներ, եւ կերութիւն մը շարունակուեցաւ շէնչող մթնոլորտի մը մէջ: Խնդրեցին, որ իր բարերարութիւնները

բուն մասին բնաւ բերանը չբացող մեծ բարեբարն ալ խօսի: Եղուարդ ոտքի էլաւ, քանի մը խօսք ըրաւ եւ հինգ անգամ Ստալին անունը արտասանեց դիտմամբ՝ հինգ անգամ բոլորն ալ հանելով ոտքի: Անժելիք հազիւ կրցաւ ղըսպել խնդուքը: Եղուարդ բունն կերպով ծափահարուեցաւ: Այնուհետեւ բաւական խառնակեցաւ կերուխուձը: Երբ պահ մը Արթիւր դուրս ելաւ, Անժելիք՝ Մարտիրոսին գաղտնօրէն ըսաւ):

Անժելիք.— Այդ լիքք Արթիւրը սեղանին տակէն գործի վրայ է: Երեք անգամ կօշիկովը աջ ոտքիս վրայ կոխեց: Ոտքս քաշեցի, սակայն ան կը փնտռէ, դարձեալ լրբանալու համար:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Երբ գայ ու գրաւէ իր տեղը, կ'ուզե՞ս որ դասը տամ:

Անժելիք.— Ի՞նչ տեսակ դաս է տալիքդ:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Իշային, փառաւոր կից մը գարնեմ սրունքին: Պիտի չգիտնայ, թէ կիցը ուրկէ՞ է:

Անժելիք.— Հասկա եթէ ցաւէն պոռայ:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Թո՛ղ պոռայ:

(Արթիւր տեղը գրաւեց: Քիչ ետքը, Մարտիրոս ընկեր Արշակին հետ խօսած ատենը, ուժով կից մը գարկաւ Արթիւրի ձախ սրունքին: Արթիւր չկրցաւ աղաղակ մը զսպել: Ամէն ոք հետաքրքրուեցաւ):

ԱՐԹԻՒՐ.— Բան մը չէ: Ձախ սրունքիս ջիղը բռնուեցաւ:

ԵՊՐԱՔՍԷ.— Շփէ, տղաս, շփէ՛...

ԵՂՈՒԱՐԴ *(հակառակ անտեղեակ ըլլալուն անցուղարձէն, Արթիւրին կ'ըսէ)*.— Շփէ ու անկէ ետքը հանդարտ կեցիր, ու ա՛լ ցաւ չես զգար: Ատ ցաւն ալ երբոր մեծնաս կը մոռնաս:

ԱՐԹԻՒՐ *(մտովի)*.— Աս կանկրթեր փեսացուն է, որ ինձի կից գարկաւ: Բայց գարմանալին այն է, որ իր նստած տեղէն մինչեւ իմ սրունքիս ինչպէ՞ս հասցուց իր իշու ոտքը:

ԵՊՐԱՔՍԷ.— Արթիւր, տղաս, ցաւդ անցա՞ւ:

ԱՐԹԻՒՐ.— Անցուցի:

ՄԱՐՏԻՐՈՍ *(Արթիւրին)*.— Մարդ ըսածդ թէ՛ կ'անցընէ, թէ՛ կ'անցնի: Անցած ըլլայ:

ԵՊՐԱՔՍԷ.— Ընկեր Եղուարդ, քիչ առաջ շատ լաւ խօսեցար, բայց փափաքելի է, որ պատգամ մը ուղղես Հայաստանասէրներու:

ԵՊՈՒԱՐԴ.— Հանեցէք բոլորդ ալ գրիչ ու թուղթ հանել, որպէսզի արձանագրէք պատգամս:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Լռութի՛ւն: Ընկեր եղուարդ պիտի պատգամէ: Գրիչ ու թուղթ ունեցէք, որ գրէք:

(Ահաւ իրարանցում մը: Մէկը միւսէն գրիչ, մատիտ կամ թղթիկ խնդրեց: Երբ ամէն ոք ունեցաւ, Եղուարդ խոհուն արտայայտութեամբ եւ քրմապետական հանդիսաւորութիւնով արտասանեց):

ԵՊՈՒԱՐԴ.— Հայաստանաւերներ, քիչ մը քիչ սիրեցէք Հայաստանը, ի սէր Հայաստանի:

(Ոմանք ապշահար էին. իսկ ձեռքերը՝ անշարժ):

ՍԵՒԱՆ (հրամայական).— Գրեցէ՛ք: *(Ինք սկսաւ գրել. միւսներն ալ հետեւեցան: Երբ գրելը վերջացուց, յայտարարեց):* Խորունկ խօսք է:

ԱՐՇԱԿ.— Իրաւ խորունկ է: Այնքան խորունկ է, որ ես փոս կարծեցի:

ԵՊՐԱՔՍԷ.— Իսկ ես կարծեցի, որ փոսին մէջ ալ թակարդ մը կայ:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Խորքին մէջ մարգրիտ կայ. իսկ ամէն խորք թակարդ մըն է ինքնին:

ՍԵՒԱՆ.— Առաջին անգամն է, որ թէ՛ մարդու մը, թէ՛ մարդու հետ համաձայն եմ: Մա՛նաւանդ առաջին անգամն է, որ Հայաստանաւեր չեղող մարդու մը հետ համաձայն եմ:

ՄԱՐՏԻՐՈՍ *(սուքի ելլելով ու խոնարհելով Եղուարդին առջեւ)*.— Այս համաձայնութիւնը ձեզի կը պարտիմ: *Մեռի:*

ԵՊՈՒԱՐԴ.— Կը մաղթեմ շարունակութիւն:

ԳԱԹԱՐԻ.— Միրելի ընկերուծի Սեւան, ճշդում մը. պարոն Եղուարդ՝ ընկեր Եղուարդ ըլլալու ճամբուն վրայ է:

ՍԵՒԱՆ.— Ամէն մէկ հայու ճամբան, պէտք է գինքը Հայաստան տանի:

ԱՐՇԱԿ.— Հայաստա՛ն, via Moscou.

ԳԵՂԱՄ.— Ինչո՞ր Հայերուն՝ բոլոր ճամբաներն ալ հասնելու են Հայաստան, երկիր դրախտավայր, շնորհիւ Սովետական Մեծ Միութեան:

ՍԵՒԱՆ.— Պէտք չէ պառտաբանել, ու պատգամը մոռնալ:

(Մթնոլորտը չափազանց պայծառացաւ: Տրամադրութիւնները անգամ մը եւս բարձրացան, իսկ բաժակները փայլելով լեցուեցան):

ՄԱՐՏԻՐՈՍ (*Թատերական ձեռնոց*).— Հայաստանա-
սէրներ, քիչ մը քիչ սիրեցէ՛ք Հայաստանը, ի սէր Հայաս-
տանի:

(*պառուզա*):

ՄԱՐՏԻՐՈՍ.— Այս պատգամը պատին գամելու է:
Է՛, հիմա կերակուրները թո՛ղ գան: (*Տեսնե՛ցի՞, որ Ար-
թիւր աչքերը սեւեռած է Անժելիքին վրայ...*)՝ Արթիւր,
բան մըն ալ դո՛ւն ըսէ:

ԱՐԹԻՐ.— Կը բաւէ որքան մենք սիրեցինք Հա-
յաստանը: Հիմա կ'ատեն է, որ Հայաստանը սիրէ մեզ:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Աս պատգամն ալ դէմի պատին
վրայ կախելու է:

ԳԻՐ, ԿԱՐՄԻՐ ՈՒ ՄՈՒՆԻՐ

Մարտիրոս, օր մը, երբ *բոնֆէքսիոնի* գործերը
առժամապէս դադրած էին, իր կնոջ հաւանութիւնը
առնելէ զկնի, Եդուարդը տարաւ տունը մաշի, այդ առ-
թիւ անոր ծանօթացնելու ծաղիկներ, որոնք հազ-
ւագիւտ են, ինչպէս նաեւ աւելի ծանօթացնելու ծաղիկի
մը, որ իր կինն էր:

Ընկերուի Սեւան ջերմ ֆաղափաղարութեամբ
ընդունեց հիւրը:

Ճաշի ընթացքին, բաւական խօսեցան ու խմեցին:
Սկսան օղիով, շարունակեցին գինիով եւ վերջացուցին
սուրճով ու ֆոնեակով: Ընկերուի Սեւանն ալ ֆաջա-
բար եւ հաւասարապէս մասնակցեցաւ:

Եդուարդը ստացած էր տեղեկութիւններ ֆանի մը
ծաղիկներու մասին, որոնք կը գտնուէին մեծ ու պերճ
բաղարներու մէջ, ու զետեղուած էին պատշգամին եր-
կու ծայրերը:

Եդուարդը սակայն, կ'ուզէր առաւելապէս մանչ-
նալ մեծ, շարժուն, դժոխքի ծաղիկը, ընկերուի Սեւա-
նը:

Անոր մասին թէ՛ յաճո՞նքը, թէ՛ տեսածները հա-
կասական էին: Առեղծուածային վիուկի մը կը նմանէր
այդ սեւորակ կինը՝ թէ՛ ներքնապէս, թէ՛ արտաքինապէս:

Երբ Մարտիրոս ծխիկ գնելու եւ մամակ մը
թղթատարին յանձնելու, համար դուրս ելաւ, Եդուարդ
օգտուելով ընկերուի Սեւանի լաւ տրամադրութենէն,
ժպտուն վիճակէն, Սեւանին սիրալիբ կերպով հարցուց.

— Կրնա՞մ բաց սիրտ խօսիլ ձեզի հետ...

— Պարտիք միշտ բաց սիրտ ըլլալ. մա՛նաւանդ՝
իմծի հետ:

— Ձեր մասին լսած եմ թէ՛ նպաստաւոր, թէ՛
աննպաստ տեղեկութիւններ:

— Բնաւ չեմ գարմանար: Շարունակեցէք:

— Իմ տեսածներս ալ հակասական են:

— Նմանապէս չեմ գարմանար:

— Բարի՞ էք թէ անբարի, մարդասէ՞ր էք թէ մար-
դատեաց, մոլեռա՞նդ թէ յայնախոհ, խի՞ստ թէ քաղցր,
քա՞ղցր թէ դառն, մարդոց հետ համաձայն թէ ընդդի-
մադիր...: Ո՞ր մէկն էք, ո՞ր մէկը չէք...

— Պարոն Եղուարդ, ի՛նչ կ'ուզէք կարծեցէք գիտ,
միայն ապուշի տեղ չդնէք:

— Օ՛, ո՛չ. ընդհակառակն...

— Այսի՞նքն:

— Դուք չափազանց խելացի էք, սակայն միշտ կը
մնաք առեղծուածային:

— Չափազանցութիւն: Ինչ որ է: Քիչ առաջ, բա-
ւական բաներ թուեցիք: Լաւերն ալ կան մէջս, գէշերն ալ
կան: Թէ առաւելապէս ո՞ր բաներով լեցուն եմ, ատիկա
ո՛չ ոք գիտէ ճշդօրէն, ո՛չ կիները, ո՛չ ճիշերը. ըսե՛մ
աւելին. ե՛ս ալ չեմ գիտեր, հակառակ թէ՛ կին, թէ՛ ճիշ
ըլլալուս, եւ հակառակ ապրանքը ի՛մս ըլլալուն: Մէկ
բան բացորոշ է, որ ունիմ համակրութիւններ ու հա-
կակրութիւններ: Առաջինները բնականաբար քիչ են:
Մնացեալը ենթակայ է տրամադրութիւններու: Կեանքը
գիտ թթուեցուցած, դառնացուցած է: Սիրելի աւելի,
ատելու պահանջը անած է մէջս: Սիրելի, սիրուելի յու-
սահատած, յանձնուած եմ ատելութեան: Խօսքը մեր
մէջ, բացարձակապէս մեր մէջ, եթէ Հայաստանսեր
եղած եմ, Հայաստանը սիրելու աւելի, Հայաստանը չսի-
րողները ատելու համար եղած եմ:

— Եւ ինկած էք, այո՛, ինկած էք, կը ներէք, խայ-
տառակ սխալի մը մէջ, պարզ այն պատճառով, որ Հա-
յաստանը չսիրողներ չկան:

— Ըսել կ'ուզեմ հորհրդային Հայաստանը, այն-
պէս՝ ի՛նչպէս որ է, իր *նեժմով*:

— Բայց այտեղ է ձեր սխալը, անտրամաբանա-
կան դատաստանը: Ինչո՞ւ հայրենիքը ու ռեժիմը դար-
ձուցած էք անբաժանելի: Մէկը յաւիտենական է, իսկ
միւսը՝ անժամեայ: Լեւին չէր սիրեր ցարական ռեժիմը.
բայց ո՛չ ոք իրեն համար չըսու «հայրենիքի ռեժիմիմ
թշնամի, երդուեալ թշնամի»:

— Այդպէս է ու այդպէս չէ:

— Այդպէս է, ու միայն այդպէս է: Հապա ի՞նչ է ձեր հայրենասիրութիւնը. ատելութի՞ւն. որո՞ւ դէմ եւ ինչո՞ւ: Անոնց դէմ, որոնք տասնեակ տարիներով հայրենիքին համար գործեցին հերոսաբար կամ մարտիրոսաբար: Ինչո՞ւ այդ ատելութիւնը. որովհետեւ վիշապը կը սիրէք, հայրենիքէն շատ ու շատ աւելի: Այն վիշապը, որ ռեժիմն է, որ ընկերվարութիւն չէ, այլ՝ կատարեալ չարիք: Որ մեր ժողովուրդին, աշխարհի ամէնէն աշխատունակ ժողովուրդին հետ եղաւ անողորմաբար անարդար: Որ անդամահերձեց մեր հայրենիքը, որ տաժանեղի պայմաններու մէջ մահացուց հայորդիները, որ խաթարեց մեր նկարագիրը, հայը ըրաւ մատնող, գող, խաբէբայ: Որ ստեղծեց «փափախ»ը, այսինքն՝ կաշառքը, նաեւ «խ.ծ.բ.», այսինքն՝ կողմնակցութիւնը ինամիի, ծանօթի, բարեկամի: Եւ ռեժիմին հետ անբաժանելի ձեր հայրենասիրութիւնը...: Պահ մը դուք ձեզ դրէք դաշնակցական մարտիկի տեղ. իրաւումք չունի՞ ձեզ անուանելու «ձրի հայրենասիրութիւն», ցաւագար հայրենասիրութիւն: Դառնօրէն խնդացողներ կան, ձեր կաթուածահար հայրենասիրութեան վրայ:

— *հալթ* են կերեր:

— Տակաւին միամտաբար է, որ այդպէս կ'անուանեն ձեր հայրենասիրութիւնը:

— Միամտաբար...: Հապա եթէ այդ սատանաները միամիտ չըլլային, ինչպէ՞ս պիտի անուանէին մեր հայրենասիրութիւնը...

— Շահաւէ՛տ հայրենասիրութիւն: Հին հայրենասէրները մինչեւ իրենց վերջին շունչը կու տային Հայաստանի համար: Խորերը՝ Հայաստանի վերջին շունչն ալ կ'անեն, եթէ կարենան, անշուշտ հայրենաշունչ դառնալու համար:

— Քիչ մը խրթին եղաւ...

— Բայց թողունք այս վէճը, որ մեզ տեղ մը պիտի չհասցնէ: Կրնա՞մ երկու հարցում ուղղել ձեզի...

— Հարցուցէ՛ք:

— Ճի՞շդ է, որ ձեր եղբօր թաղումը կատարուած է առանց կրօնական արարողութեան:

— Ճիշդ է: Ի՞նչ կայ որ...

— Ձեր եղբայրը կոպալա՞շտ էր թէ կրակապաշտ:

— Մոխրապաշտ էր: Կտակով պահանջած էր, որ մարմինը այրուի եւ վերածուի մոխրի: Բայց ատիկա կ'ապացուցանէ, որ եղբայրս մասամբ քրիստոնեայ էր,

ֆանի որ կը հաւատար դժոխքին, ու հոն յաւիտեան այրել խուսափելու համար, հոս ֆանի մը վայրկեանի մէջ մարմինը մոխրացնել տուաւ:

— Իսկ ձեր մեծ ազգիկը կարմիր պսակով մտնուեցաւ...

— Այո՛, մասնաւոր աշխարհական, համայնավարական արարողութիւնով: Կարմիր հագուեցաւ: Իսկ փեսանիս ալ հագուած էր կարմիր շապիկ:

— Ուրեմն ձեր մեծ ազգիկը անաստուած է:

— Մե՛ղք, որ ազգիկս չէ՛ք տեսած: Շատ ազուր է: Բարեբախտաբար, ո՛չ ինձի ելած է, ոչ ալ՝ հօրը:

— Անաստուած է...

— Ազգիկս աստուածուծի մըն է: Աստուածուծի մը Աստուած կ'ունենայ...

— Իսկ ձեր փեսան...: Ան Աստուած է թէ անաստուած...

— Փեսաս Աստուած ունի: Իր Աստուածը, կամ աւելի ճիշդը՝ իր աստուածուծիին՝ իմ ազգիկս է: Փեսաս կը պաշտէ ազգիկս, իր կիներ, որուն երկրպագուներուն առաջինն է:

— Ուրեմն ձեր ազգիկը բազմաթիւ երկրպագուներ ունի:

— Բայց, բնականաբար: Մէկ երկրպագուով աստուածուծի կ'ըլլայ: Երկրպագուներ ունի ամէն ազգէ: Անցեալ տարի, այր ու կիներ, գացած էին Սպանիա: Կիրակի առաւօտ մը, երբ ազգիկս մինակը կը շրջի եղէր Պարչելոնայի մէկ երապարակին վրայ, երեք երիտասարդ սպանացիներ կը ծնրազրեն աղջկանս առջեւ ու կը խաչակնքեն: Ազգիկս կանգ կ'առնէ, իբրեւ աստուածուծի երկարօրէն կը դիտէ անոնց ծնրազրութիւնը ու խաչակնքումները եւ կ'ըսէ.

— «Ձեր երեքին երկրպագութիւնը կ'ընդունիմ, սակայն, կը մերժեմ ձեր խաչակնքումները, որովհետեւ ես յառաջդիմական եմ, իբրեւ աստուածուծի»:

— Ետքը ի՞նչ կ'ըլլայ...

— Ուրիշ երիտասարդներ, որոնք հանդիսատես էին, մէկ կողմ կը հրեն խաչակնքողները, իրենք կու գան ծունկի, ու կը համբուրեն աղջկանս ոտները: Ազգիկս ալ գանձնէ ոտքի կը հանէ, ու կը վարձատրէ մէյ մէկ համբոյրով, միշտ շրթունք շրթունքի:

— Ետքը... ետքը...

— Ետքը, ետքը ազգիկս կը ձերբակալուի, իբրեւ հրապարակով համբուրուող: Ի՞նչ կ'ուզէք, Սպանիան

յետադիմական երկիր է: Հոն համբոյրը գայթակղութիւն է:

— Ձեր աստուածուհի աղջիկը դիւցազուններու ծնունդ տուա՞ծ է...

— Երկու հատ: Երկուքն ալ մանչ, բարեբախտաբար:

— Ինչո՞ւ «բարեբախտաբար»:

— Է՛, այրերը միշտ աւելի կը նպաստաւորուին բախտով:

— Կը հաւատա՞ք բախտին: Համայնավարութիւնն ալ, քրիստոնէութիւնն ալ դէմ են բախտին հաւատալուն:

— Չարաչար սխալ: Անշուշտ երկուքն ալ անբախտական չեն: Իրաւամբ ըսուած է, որ Աստուծոյ ծածկանունն է բախտը: Աստուած ուրիշ ծածկանուններ ալ ունի.— Դիպուած, Գիր, ըսել կ'ուզեմ՝ Ճակատագիր:

— Ի վերջոյ, չնանչցայ ձեզ:

— Ի՞նչ պիտի շահէիք նանչնալով. ի՞նչ պիտի կորսնցնէք չնանչնալով: Կարելի բան չէ մէկը նանչնալ ամբողջապէս ու ճշգրտօրէն: Բազմադիմակ մարդիկ կան: Մէկ քանի դիմակ վար առնելով չեն նանչցուիր: Եւ որքա՞ն վարպետ կեղծողներ կան: Նոյնիսկ անակներ կան, որ ամէն մէկ ծանօթի համար ունին տարբեր դիմակ մը: Մարդ ո՛չ ուրիշները կը նանչնայ, ոչ ալ ինքզինքը երբ, մա՛նաւանդ՝ ինք բարդութիւն մըն է, իսկ ուրիշներն ալ հանգոյցներ են: Կրնաք քառասուն տարի մէկուն հետ ապրիլ ու կարծել, որ նանչցած էք զինքը: Վերիվայրում մը քաւական է, որպէսզի գտնուիք անծանօթի մը առջեւ, քիչ անգամ լաւ անակնկալներով, յանախ գէշերով լի: Իւրաքանչիւր մարդ նակատագրական գաղտնիք մըն է: Ինչպէ՞ս չհաւատալ Բախտին, երբ բիր բան կը տեսնէք անբնական: Յիմարներ կան լաւ ու լայն պայմաններու մէջ, ու հանճարներ՝ նեղութեան տակ ճնշուած: Կան անշուշտ թէ՛ հանճարեղ, թէ՛ հարուստ մարդիկ ալ: Միշտ ճակատագիրին խոզերով: Բայց երբ կը տեսնէք մակաբոյծներ, որոնք կ'ապրին փառաւորապէս, կը համոզուիք, որ Բախտին խորհրդաւոր քայլներուն հետեւանում է:

— Համայնավարութեամբ պիտի պայքարիք Բախտին դէմ:

— Համայնավարութիւնը ինքն ալ Բախտին կապուած է: Ոչինչ կայ, որ խոզալիքը կամ խամանիկը չըլլայ Բախտին կամփին կամ քայլին:

— Ուրեմն չպայքարի՞լ...

digitised by A.R.A.R.@

— Պայջարիւն ալ, չպայջարիւն ալ կապուած են Բախտին, կախուած են Բախտէն, կը հանգչին կամ կը շարժին Բախտով: Երբ մարդ, միշտ Բախտի բերումով, եղած է ոչ-ունայնամիտ, այլ գիտակից, անպատճառ կ'իյնայ առաւել կամ նուազ յոռետեսութեան, յուսահատութեան մէջ: Կը զգայ իր անգօրութիւնը: Վատած մարդը կը տարուբերի հակասութենէ հակասութիւն: Մարդ արարածը մահէն ետքը միայն քիչ մը կը ճանչցուի, եթէ գաղտնիքները գերեզման չէ տարած ամբողջովին: Գիտցէ՛ք, որ Բախտին մէկ հպատակն է՛ք:

Վրայ հասաւ Մարտիրոս ու ըսաւ.

— Բախտի մասի՞ն կը խօսիք: Ահա իմ հաւատամքս. Բախտը Աստուածն է, Դիպուածը՝ Որդին, Ճակատագիրն ալ՝ Ոգին:

Ապա, անելցուց.

— Լա Ռուշֆուօ իր մտածումներուն մէջ, երբեմն ունի հակասութիւններ: Օրինակի համար երբ կ'ըսէ. — «Մարդկային անհատներու երջանկութիւնն ու թշուառութիւնը ոչ նուազ կախում ունին իրենց բնատրութենէն, որքան Բախտէն»: Բայց մարդ իր բնատրութիւնն ալ, առողջութիւնն ալ, գեղեցկութիւնն ալ, խելացութիւնն ալ, հակառակներն ալ ընդունած է Բախտէն: Ո՞վ տուաւ ինձի այս կուզիկը, այս տգեղութիւնը ու խայտառակութիւնը, եթէ ոչ Բախտը: Դարձեալ շնորհակալ եմ, որ քանի մը կուտ խելք շնորհած է ինձի:

Տիրեց լոռութիւն:

Եղուարդ մեկնելէ առաջ, ձեւի մը դրաւ ու փափաքեցաւ տեսնել մեծ ազգական, «աստուածուհի» Գլուտէի լուսանկարը:

Սեւան մեծապէս գոհ մնաց այդ հետաքրքրութենէն ու ընտանեկան ալպոմ մը դրաւ Եղուարդին առջեւ: Քանի մը պատկերներու նայելէ ետքը, Եղուարդ յայտարարեց.

— Ձեր դուստրը, տիկին Գլուտէն, իրապէս շատ գեղեցիկ է: Կրնաք հպարտանալ: Ծովածին Աֆրատիթէ, որ հոգիները կը վերածէ ծովի ու կ'ալեկոծէ: Թագուհի ծովերու եւ կայսրուհի ովկիանոսի:

Իսկ մտէն ըսաւ.

— Վոքկածին մէկը: Միշտ կիմասերկ լուսանկարուած է, ցուցադրելով մարմինին գանազան կողմերը: Ցայտնի է, որ պոչ խաղցնող պչրուհի մըն է: Իր բոյրերն ալ գինգը կը կապկեցնէ: Անժելիքը աստուց մէջ շողշողուն լոյս է, իրական իշխանուհի: Մա՛նաւանդ՝ որ ունի

ներքին գեղեցկութիւն ալ: Եւ եթէ Պարչելունայի մէջ, երիտարդներ իր առջեւ ծունկի գայիմ ու խաչակըն-
 ֆէիմ, վստահաբար Անժելիֆ պիտի փոխէր իր ճամբան,
 ու պիտի հեռանար:

Սեւան իր ամուսինին ըսաւ.

— Թեթեւամիտ կամ կեղծաւոր Գաթարին կը
 կարծէ, թէ իր ջանքերով պարոն Եղուարդը՝ ընկեր
 Եղուարդ ըլլալու ճամբուն վրայ է: Հաւանաբար ինք ալ
 չի հաւատար իր ըսածին: Բայց ես կը նախընտրեմ խե-
 լացի ու անկեղծ հակառակորդ մը, աննկարագիր ընկե-
 րուհիէ մը: Բարեբախտաբար, Անժելիֆը բնաւ, բայց
 բնաւ մօրը ելած չէ: Կերպարանքով ու բնաւորութեամբ
 հօրաբոջը հարագատ պատկերն է: Ոսկի աղջիկ է. ասի-
 կա կ'ըսեմ, հակառակ շանիցս իր կողմէ ընդդիմախօս-
 ւած ըլլալուս: Ուրեմն՝ պարոն Եղուարդը համոզուած
 հակահամայնավար մըն է: Կը գովեմ իր անկեղծու-
 թիւնը:

Մարտիրոս աւելցուց.

— Ինձի հետ ալ միշտ անկեղծ եղած է:

Եղուարդ ծխիկ մը վառեց ու խօսեցաւ.

— Ինչպէ՞ս համայնավար ըլլայի, երբ տեսայ, որ
 համայնավարութիւնը իրեն աներածեշտ հրէշը գտաւ
 Ստալինով: Եւ Ստալինն ու համայնավարութիւնն եղան
 իրարու համաձայն, հոմանիշ: Որքան ալ համայնավա-
 րութիւնը մնաց առանց Ստալինի, նոյնիսկ եղաւ հա-
 կաստալինեան, սակայն առաւել կամ նուազ կայ ստա-
 յինութիւնը այդ կարմիր կուսակցութեան արեան մէջ:
 Ստալինը որքան ալ տապալեն իբրեւ կուռք, անոր ուր-
 ւականը կայ, ու կը մնայ անպարտելի: Իսկ եթէ անոր
 ուրուականը պարտուի, պարտուած է համայնավա-
 րութիւնն ալ, քանի որ մէկը միւսով կը տեսէ: Եւ անա-
 պատ մը մոխիրի... պատուա:

ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ



Եկ անուն դնենք այս երեկոյին,
կոչենք յայտնութիւն, կամ կոչենք դիպումս,
մենք հիւլէներն ենք անկայուն գոյի,
այս ժամանակի շարժումին հայումս:
Եւ այս յորձանքի փլուզման միջով
վերակերտում ենք գալիքն ու ներկան,
ո՛չ գանձեր ունենք եւ ոչ էլ միջոց
ու մեր երազի գոյներն են ներկումս,
որ հա՛ք են տուել հոգմից ու քամուց,
լոյսն է խաւարկել, անարեգ ամառ,
մնացել են լռի օրերը սամում
եւ մի շրջանակ խարոյկի համար...



Գողացող ձեռքս պարզեցի մի օր
եւ լոյս մուրացի ամբոխի առաջ.
կապոյտ մուրացի,
մի փշուր հաւատ
ու յոյս մուրացի մի օր դրանից...
Եւ պարզումս ձեռքս ծանրացաւ մէկէն
այնտեղ շարտումս ժանգոտ դրամից...



Գարունն ապրեցի,
լուռ շրջանցեցի ամբան վրայով:
Աշնանը միայն տերեւներ տեսայ,
ի՞նչ խօսք՝ դեղնաւուն:
Եւ իմ պաշարած ամբան արեւով
ձմրան ձիւներից գարուն ձուլեցի...

ՎԻԳԻՆ ԲԱԲԱՏԵԱՆ

Գ. ԱՐԷԼԵԱՆ

ԱՆՆԱ ՀԱՐՍԸ



ՄՏԱՄՈԼՈՐ ԶՈՒՈՂՆԵՐԸ

Կարաւանը կազմուեցաւ եւ ճամբայ ելաւ:

Ամէն մարդ իր խոկումներուն, յուշերուն եւ տառապանքին մէջ կորսւած էր:

Սրնգաւար Սողմոնը, բարտիի հասակով այդ հսկան, կքիլ սկսած էր: Ձէր կրնար մարտիլ շաւուշ Հասանին կոպտութիւնը: Ոտքին տակ ճզմած էր իր սրինգը: Երկրորդ սրինգ մը ունէր թէեւ, բայց այդ մէկը ուրիշ էր: Ասոր եղէզը գտած էր Յ ժամուան հեռաւորութիւն ունեցող եօթը հեղեղատներու՝ «Ենչտի տէրէնի շրջանէն»: Որքա՛ն գուրգուրացած էր անոր մօր՝ եղէզին վրայ: Իւրաքանչիւր ծակ, գոր տաղած էր անոր իրանին վրայ, խլած էր երկար ժամանակ: Պէտք էր զգոյշ ըլլալ, փոքր թեքում մը՝ եւ ճայնը լաւ դուրս չէր զար:

Այդ սրինգին վրայ քանի՛-քանի՛ տարիներ նուազած էր: Տխուր թէ ուրախ առիթներով, միշտ փնտռած էին զինք: Ամէն երեկոյ, երբ տուն զառնար, կը նստէր իրենց տան առջեւ փռուած ցածիկ ախոտին տանիքին մէջ անկիւնը եւ յողնութիւնը կ'առնէր՝ սրինգը նուազելով: Տխուր ու մելամաղձոտ եղանակներ դուրս կու գային անոր փողէն, բայց ինք կը հրճուէր, իր յողնութիւնը կը մոռնար:

Երբ փոքր եկեղեցիին գմբէթին նայեցաւ վերջին անգամ, յիշեց, թէ ինչպէս կրած էին անոր հաստ գերանները: Ամբողջ գիւղակը գործի լծուած էր: Երիտասարդներ խումբ-խումբ գացած էին անտառ, խնամքով զատած էին երկնուղէշ ծառեր եւ հատած զանոնք: Իրենց ուսերուն վրայ կրած էին այդ գերաններն ու սիւները: Իւրաքանչիւր խմբակի ընկերացած էր Սողմոն: Ինք շալակի տակ մտած չէր. ընդհակառակն, զինք վերցուցած էին գերաններէն մէկուն վրայ, ամբողջ ճամբու տեսողութեան, սրինգ նուազելու համար: Տիրոջ տուն կը շինուէր. գերանները մէկտեղելէ իսկ առաջ, շարինգով սաղմոս՝ կ'երգէին գիւղացիք: Սողմոնին սիրտը կ'եղուեցաւ, երբ վերջին անգամ տեսաւ փոքր եկեղեցւոյ գմբէթը:

Առանց Սողոմոնի ոչ մէկ Հարսանիք տեղի կ'ունենար: Թմբուկն ու զուռնան մէկ կողմ, սրնգահար Սալենց Սողոմոնը՝ մէկ կողմ: Իր փշրուած սրինգով քանի՛-քանի՛ գոյգեր առաջնորդած էր եկեղեցի եւ եկեղեցիէն տուն...: Քանի՛-Քանի՛ երիտասարդներ, տարեցներ, այր թէ կին, պարել տուած էր Սողոմոնին սրինգը, որ հիմա չաւուշ Հասանին ոտքերուն տակ փշրուած էր:

Ամէն անգամ, որ սանին մէջ ցորեն ծեծէին, յատկապէս Հարսանեկան Հերիսայի ցորեն, կամ պահեստի ձաւարի ցորեն, Սողոմոն իր սրինգով ներկայութիւն կը դառնար: Քանի մը սրինգ խրած կ'ըլլար գօտիին մէջ: Իւրաքանչիւրը տարբեր ձայն ունէր: Թակ բռնողները, իրենց յոգնութենէն ետք, երբ պարի պիտի ելլէին, անպայման կը պահանջէին, որ Սողոմոն նուազէր այն սրինգով, որ ահաւաստիկ, այդ առաւօտ, նոյն սանտին առջեւ, ճգմուած էր չաւուշ Հասանին ոտքերուն տակ:

Կէս անօթի, կէս կուշտ, կէս տկլոր Սողոմոն, իր սրինգով շատերուն սրտերը թուռը հանած էր: Թշուառութենէ զատ բան ճանչցած չէր թերեւս կեանքին մէջ: Ուրիշներուն հանդիման կէտադրած էր իր թշուառութիւնը: Իսկ հիմա կ'ապրէր մեծագոյն թշուառութիւնը:

Իր երկնուղէչ Հասակը կոտցած էր այդ մեծ թշուառութեան տակ...:



Պատու Օսան մտահոգ էր: Խնչ պիտի ըլլային: Ո՞ր պիտի երթային: Որքա՞ն պիտի մնային շրջապատութեան մէջ: Արդէն իսկ իր զաւակները օտարութեան մէջն էին: Մա՛նուառը ի՞նչ պիտի ըլլար իր Տիրանը. օսմանցիին բանակին մէջ ի՞նչ վիճակուած էր իր տղուն: Խնչ պիտի ըլլային իր կովերն ու Հորթերը, որոնք ձգանձ դրուած էին իր ամուսնոյն հին բարեկամին: Ազիզին մօտ: Խնչ պիտի ըլլար իր Աննան: Հապա եթէ...: Ո՛չ, ո՛չ, չէ՛ր իսկ կրնար երեւակայն այգալիսի բան, բայց թուրքը զապան էր, կրնար նսեւ իր Հարսին...:

Թէեւ ընկճուած էր, բայց դեռ միջոց կը գտնէր այս ու այն միտքերով լուր կամ քաջալերելու: Իր մէջ կը պահէր իր ցաւը եւ կը ջանար ուրիշին հասնիլ...:

Բոլոր կրններուն հետ, սակայն, ինք եւս երանի կու տար ձապրենց Հարսին, զոր այդ առաւօտ, արեւածագէն իսկ առաջ, թաղած էին:

Պատուելի Տիրան կորսուած էր իր վշտին եւ տառապանքին մէջ: Երէկ յատուկ «բարեհաճութեամբ» դայմազամ էֆենտիին, իր ձեռակերտին մէջ, որ առանց տանիքի էր, տուած էր իր առաջին եւ վերջին քարոզը: Հիմա ինք եւս շէր յիշեր, թէ ինչ ըսած էր խուռներամ բազմութեան: Բոլոր քեսապցիք հոն էին. աւելի ճիշդը անոնք՝ որոնք տակաւին գաղթի չէին ելած: Կը յիշէր պատուելիին, որ իր բացառիկ քարոզն էր այդ: Շատեր լացած էին. ինք եւս լացած էր: Նսեւ ըսած էին, որ դայմազամ էֆենտիին աչքերուն մէջն ալ արցունք տեսած էին...: Թրքերէն քարոզած էր. բոլորը կը հասկնային դինք այդ լեզուով: Գայմազամ էֆենտիին ալ պայմանը այդ էր: Արդեօ՞ք բորենիներէն տարբեր էր այդ մարդը, էֆենտին:

Այդ առաւօտ, ձապրենց Հարսը թաղիլէն ետք, զացած էր իր ձեռակերտին: Թռչունները վախուորած, փախած էին: Ներս մտած էր չեմէն: Նստած էր լողաբարէն մէկուն վրայ, որ դետին պառկած էր: Այդ լողերը գէպի վեր պիտի բարձրանային, Տիրոջ տան տանիքը կռելու համար: Հիմա անոնք, որ սահմանուած էին զանոնք վրայ վրայի շարելու եւ բարձրացնելու, անոնք ալ պիտի իյնային:

Դուրսը, վերջին անգամ ըլլալով, կարգացած էր «Էմմանուէլ եկեղեցի»։ Ապա՝ չրջան մը ըրած էր իր կիսաշէն ձեռակերտին շուրջ։ Ձախ ձեռքով շոյած էր պատը, երեխայի մը նման։ Ձէր կրցած տոկալ լացած էր։ Դիմացը ցցուած էր Արմենակին պառաւը։ Երէկ միայն ա՛ն լացած չէր։ Պատուելին չէր կրցած նայիլ այդ կնոջ աչքերուն։

Պարտուած էր ինք։ Պարտութեան կ'առաջնորդէր իր հօտը։

Մէկ օր առաջ ուրիշ Տիգրան պատուելի մը, Անդրէասեանը, Մուսա լեւրան դազաթէն նամակ հասցուցած էր իրեն. պատուիրած էր, որ գոնէ մնացորդացը Լեւի հաննէ։ Ձէր կրցած որոշում առնել։ Ձկայի Գարատայի միջոցով, Տէր Աբրահամը, Տոբթ. Արամը։ Հիմա իր հօտը կ'առաջնորդէր դէպի անորոշութիւն, դէպի Մեծ անձանոթը...։ Եւ կը տառապէր։ Արմենակին պառաւն էր, որ կը քաջալերէր զինք հիմա.

— Պատուելի էֆենտի, ըլլալիքը պիտի ըլլայ. վախուստ չկայ. մեր տանիքներուն վրայ խոտ պիտի բուսնի։ Եկեղեցիդ ալ կիսկատար պիտի մնայ. բուեր պիտի բոյն դնեն հոն։ Դուն ճամբադ քալէ. տէր եղիք ժողովուրդին։ Ըլլալիքէն չես կրնար խոյս տալ...

Պատուելին չէր լսեր...

Ինչո՞ւ իրենք եւս չեռ չեկան մուսախոցիներուն պէս...։ Ինչո՞ւ ինք չզննուցեց եղելութիւնը բոլորին, բոլորին...

Հիմա ինք իր հօտը կը տանէր դէպի սպանդանոց։



— Աստուած վկայ, եթէ Աստուած կեանք տայ ինձի, գալ զարնան ես ալ պիտի լարեմ մետաքսի անիւ անիւ մը. իմ խոզակէս ես մետաքս պիտի քաշեմ, ինչո՞ւ Շամոն կամ սա կամ նա ուսնէ իմ արդար վաստակա։ Ես պիտի լարեմ իմ մետաքսին անիւը, ուղողը թող ուզածը ըսէ...

Սա անձանոթ մը չէր։ Անթէպլենց Սիմոնն էր։ Հիմա կարաւանը հասած էր իր «թթենիստան»ի եզերքը։ Ամէն անգամ, որ երկու դուռով թուզի օդի նետէր եւ գլուխն ալ քիչ մը բռնէր, Անթէպլենց Սիմոնը մեծ-մեծ կը շարժէր, թէ՛ ինք իր մետաքսի անիւը պիտի սարքէր յաջորդ զարնան եւ իր խոզակը ինք մետաքսի պիտի վերածէր...

— Սա Սիմոնին «թթենիստան»ն է, — շշնջաց Օսան իր շուրջիներուն։ Իր սպրած դառնութեան մէջ Աննան չկրցաւ ժպիտ մը խեղդել։ Սա ի՞նչ «թթենիստան» էր, հինգ թէ՛ վեց թթենիներ, որոնցմէ երեք հատը կիսով ալ չորցած էին։

— Մի ինդար, հարսնա՛, այս մարդուն կաշուածը այս է։ Մեղք է։

Սիմոն չէր կրնար հեռանալ իր «թթենիստան»էն։ Հարկ եղաւ չաւուշ Պուրհան էլ-Տիւնի մտրակին, զինք զգաստացնելու համար...

— Ինչ ուզէ՛ ա՛յն թող պատահի, եթէ Աստուած կեանք տայ ինձի, գալ զարնան ես պիտի սարքեմ իմ մետաքսի «տուլապը»...



Աննան ի՛ր մտածումներուն հետն էր։ Ձէր կրնար ըմբռնել այս պատահարը։ Ինչո՞ւ տուն-տեղ կը լքէին ու կ'երթային դէպի անձանոթը։ Ո՞ւր գրուած էր սա, ո՞ր գիրքին, ո՞ր օրինագիրքին մէջ։ Ինք, իր հարազատները, համազօրեղացիները անյիշելի օրերէ ի վեր հող սպրած էին։ Ոչ ոք յստակ զաղափար մը ունէր, թէ՛ ե՞րբ հիմնուած էր Քեսապը։ Սերունդէ մերունդ հոն սպրած էին։ Լեռներէն, սփ առ սփ, թիւ առ թիւ գողցած էին հողը։ Ժայռերու մի-

ընե թաշկինակի ծաւալով հողամասեր գողցած էին, շինած էին ու լաւ կամ գէշ կ'ապրէին: Իրենց ի՞նչ սա պատերազմը:

Շրք կարաւանը ճամբայ ելած էր, Աննան չէր կրցած իր աչքը հեռացնել Թանթանենց արտէն, ուր պիտի շինուէր իրենց ազարակը: Կաթ, պանիր, թան, պղինձներ, տաշտեր...

Իր ամուսնոյն եւ տաղբոյ մէկ պատահական խոստումը, Աննային համար վերածուած էր իտէալի, երազի: Այդ երազն էր, որ խոյս կու տար: Հիմա իր երկու տղեկներուն ձեռքերուն մէջ կը տեսնէր մէկական փոքր դոյլ: Բերած էր Իսկէնտէրունէն այդ դոյլերը, որոնք մնացած էին իբրեւ շօշափելի մասնիկը իր մեծ երազին...: Մեծ պղինձները, տաշտերը, ինք եւ իր Օսան կեսուրը պահած էին թուփերուն մէջ, կամ հողին տակ...: Ձէին կրնար ուշանալ, պիտի վերադառնային ու ամէն բան լոյս աշխարհ հանէին: Կաթը պիտի փրփրէր ու յորդեցնէր կաթսաներն ու տաշտերը, միայն թէ...

Շրք Ամերիկա մեկնելու համար ճամբայ ելած էր Աննա հարսը, դժուար եղած էր բաժանումը զիւզէն, հարազատներէն: Այն ատեն ինքզինք մեղադրած էր իր մեկնումին համար...: Հիմա մեռնելու չափ, նոյնիսկ մեռնելէն աւելի դժուար էր բաժանումը: Ո՞ւր կը տանէին զիրենք...

Հոն, իտալացի գինով նաւաստին համբուրած էր զինք: Այդ սրիկային բերնի ալքոլին հոտը թունդ կը հանէր զինք, ամէն անգամ, որ յիշէր գէպքը...: Իսկ հիմա Պուրհան էլ-Տին շաւուշն ու իր ոստիկանները ի՞նչ պիտի ընէին իրեն եւ ուրիշներուն...

Օսան կեսուրը կրցածին չափ տղեզցուցած էր իր շքնաղ հարսը: Ո՞վ գիտէ...

Աննան դեռ մտահոգ էր իր Կարօ եղբոր վիճակով: Ո՞ւր տարուած էր: Ո՞ւր տարուած էին միւս հարազատները: Քոյրերը, ասոնց ամուսինները ո՞ւր հասած էին: Ի՞նչ կ'ուտէին: Ո՞ւր կը քնանային: Իր քոյրերուն ալ սպանալիք կա՞ր:

Տիրան տաղբը, Քերոք ամուսինը, Սթաք մարքէթ խաղացող միւս տաղբը, Սերոբը կամ Շէքէրճին...

Մշուշ մը պատած էր Աննային գիտակցութիւնը:

Միշտ կը դառնար ետին, վերջին նշույլ մը եւս քաղելու համար իրենց գիւղէն, արտէն, նուններներէն...: Նուռերը, գլխահակ, կը պատրաստուէին աշնան. ո՞վ պիտի քաղէր զանոնք. ո՞վ պիտի դասաւորէր ու զատէր քաղցրը թթուէն...: Հապա խաղո՞ղը, տեսակ-տեսակ թուզե՞րը, սերկեւիչները...: Եւ այդ տարի, բոլոր տարիներէն աւելի առատ էր բերքը: Բերքի մասին մըտմըտալ պէտք չէր. բերքը ուտողներուն մասին պէտք էր մտածել եւ, ո՞վ գիտէ, թերեւս նոյնիսկ ողբալ...

— Ո՞ւր են մեր մեծամեծները, մայրիկ. չէ՞ որ Ովսիա Գարատային կար, տոբթ. Արամը, Տէր Աբրահամը. այդ անպիտան ամերիկացին ի՞նչ եղաւ. ինչո՞ւ մէկ գիշերուան մէջ փախաւ գնաց...

— Աղջիկս, հոգիս, ես ալ չեմ գիտեր: Համբերէ, Աստուած մե՛ծ է...

— Մենք անտէր մնացեր ենք, մայրիկ: Տես սա պատուելին, ան՝ որ իր եկեղեցին շինած ատեն առիւծ կտրած էր, հիմա խեղճ ու կրակ բանի վերածուած է:

— Լուէ՛, աղջիկս, լուէ: Աստուած մե՛ծ է...



Հասան ջաղացքին ճորը: Աննան ապրեցաւ սոսկում մը: Գիշերով ինք

առանձինն անցած էր այնտեղէն: Վախցած էր. մա'նաւանդ ապահով վայր հասնելէ ետք, Հիմա, օր ցերեկով, երբ այդքան մեծ բազմութիւն կար իր շուրջ, Աննան աւելի կը վախնար: Իր հարսնութենէն ի վեր այդ տեղէն չէր անցած. հիմա կ'անցնէր ու կը սարսափէր...

Կարաւանը ձորն ի վար իջաւ: Ինք դիմացի արհն անցեր էր ժամանակին եւ դիմեր Գերորին: Հիմա ձորն ի վար կ'երթային: Աննան կը ստուգար:

ՃԸՍՐ ԷԼ-ՇՈՒՂՈՒՐ

Ճըսր էլ-Շուղուրին անունը ծանօթ էր բոլոր քեսապցիներուն: Իրենց Գեսապէն մէկ օրուան ճամբայ էր, մինչ հիմա աւելի քան մէկ շաբաթ քալած էին հոն հասնելու համար:

— Եսհօ՛, — կ'ըսէր փերեզակ Ղազարը, — ես իմ կեանքիս քառորդը անցուցած եմ Ճըսր էլ-Շուղուրի մէջ: Մէկ օրէն տեղ կը հասնէի, հիմա ինչո՞ւ մէկ շաբաթ քալեցուցին մեզ. ի՞նչ կ'ըլլար՝ եթէ շիտակ հոս բերէին:

Միայն փերեզակ Ղազարին խելքը չէր, որ չէր հասներ եղածին: Ըստ լորն ալ շշմած էին:

Իսկ Ճըսր էլ-Շուղուրը նշանաւոր եւ ծանօթ էր՝ առաւելաբար փերեզակ Ղազարին շնորհիւ: Ան ամիսը նուազագոյնը մէկ անգամ կ'երթար հոն, պազարի: Նշանաւոր էր Շուղուրի պազարը: Ետտեղ, փոխան երկար-բարակ Ճըսր էլ-Շուղուր ըսելու, արդէն Պազարը կ'ըսէին: Փերեզակ Ղազար հաւկիթ կը հաւաքէր եւ կը տանէր հոն: Անկէ կը բերէր զանազան ու զարմանազան բաներ, Հալէպի ձիւթ, չիթի տեսակներ, դերձաններ, ասեղներ, յիրիւններ, կարշի, օճառ, գոյնզգոյն շաքարներ: Կը բերէր եւ իշուռն վրայ բեռցուցած, դիւղէ դիւղ ու թաղէ թաղ կը դառնար ու կը ծախէր: Կը ծախէր ու Պազարին գովքը կը հիւսէր...: Հոն ինչե՛ր-ինչե՛ր կային: Մէկ անգամուան պազարը կրնար քանի մը ամիս ամբողջ Գեսապը ապրեցնել...

Դեռ անկէ երբեմն կը բերէր ձի, ոչխար, կով, այծ: Օր մը նոյնիսկ ուզտ մը բերած եւ ծախած էր:

Ըստ իրեն, ինք Պազարին ծակ ու ծուկին ծանօթ էր. կը ճանչնար շատ մեծ վաճառականներ: Իսկ հիմա շշմած էր, անոր համար, որ չէր կրնար մարսել այն նուաստութիւնը, որ ամբողջ շաբաթ մը քալեցուցած էին գիրենք:

— Մի վախնաք, — կ'ըսէր իր ճակատագրակիցներուն, — ես Ճըսր էլ-Շուղուրը լաւ կը ճանչնամ, բնաւ հոգ չընէք: Բոլորս ալ լաւ հանգիստ պիտի ըլլանք, ինչալլա՛հ...

— Մտիւրը շապիկիդ, — խայթեց Օսան պառաւը, — պէտք եղած վախը քաշեցինք, ասկէ աւելին ի՞նչ կրնայ պատահիլ: Դուն քու գործին նայէ...

Ճըսր էլ-Շուղուրը տեսակ մը հաւաքաժայր եղած էր գաղթական կարաւաններուն: Հոն տեսակ-տեսակ հայեր կային, սակայն զիրար չէին հասկընար: Այդ քանի՛-քանի՛ տեսակ լեզու կը խօսէին: Իրենց հազուադէպ պոռակտն ալ տարբեր էր: Իւրաքանչիւրը իրեն հետ բերած էր իր աշխարհը եւ կը տատապէր...

Շատեր կը զարմանային, որ Քեսապէն եկողները չէին ջարդուած: Ուրֆացիներ, այնթապցիներ, մարաշցիներ, սսեցիներ, որքան ջարդ տեսած էին եւ կոտորակուած:

— Այդ որքան բարի է եղեր ձեր Պուրհան չաւուշը, — կը կրկնէին այլ տեղերէ եկած զաղթականներ, երբ մէկն ու մէկը փորձէր չաւուշին մասին գէշ բան խօսիլ: Մեզ ջարդեցին, մեր ոսկորները կոտորեցին: Մեռա՛նք, մեռա՛նք: Մեր ոստիկանները բորենիներ էին. երանի՛ թէ Պուրհաններ ըլլային անոնք ալ...

— Վա՛յ, — կ'աւաղէր Հաննոն, որ չէր կրնար ներել Պուրհանին՝ իր ջորին գրաւած ըլլալուն համար:

— Մեզի ո՛չ ջորի թողուցին, ո՛չ ոսկի, ո՛չ դրամ, ո՛չ պատիւ եւ ո՛չ ալ ապրելու ուժ. դուն լեզուդ հաւաթէ:



Հաննոն Գանաց իր ընտանիքին ապահով անկիւն մը գտնել: Ամառ էր, տաք ու փոշի: Շուք մը կ'արժէր հազար լիբա: Հաննոն կրցաւ գտնել կիսաշոր ծառ մը, որուն շուքը հազիւ թէ մէկ երկու հոգիի գլուխ կրնար ծածկել: Եւ Հաննոն այդ ծառով ուրախացաւ ու հպարտացաւ... «Մեր ծառին շուքը», ըսելով կը դառնար:

Շուքը թերեւս շուք էր, բայց փոշին ի՞նչ կրնար ընել: Խեղճ ու կրակ վիճակ էր: Փաղաքը, եթէ կարելի էր այդպէս կոչել զայն, աղոտ ու անհրապօր բան մըն էր: Հովը, ամառ օրով իսկ, իրեն հետ կը բերէր շորս կողմի լեռի ու ճերմակ բլուրներուն փոշին:

Իսկ ճանճը կարծէք ամբողջ ճրագաքը վերածած էր փեթակի պէս բանի մը: Ամէն կողմ ճանճ ու ճանճ: Եթէ փայտօղկին ալ աւելցնենք, կրնանք հասկընալ խեղճներուն վիճակը: Շուտով փոքրիկներուն աչքերը «բռնեցին» ու փակուեցան. ամէն առաւօտ պէտք կ'ըլլար մէկ ժամ յատկացնել խեղճներուն աչքերը լուսուելու: Փորհարութիւնն ու տենդը աւելիով կը թշուառացնէին զիրենք: Ամէն օր մարդ կը մեռնէր, յատկապէս մանուկներ: Ո՞վ էր հաշուողը: Բաւ էր քանի մը բաւ հող լեցնել մահացածին վրայ. այդ ալ միտքարութիւն մըն էր: Այլ չըջաններէ եկածներ առեւթ պատմութիւններ կը պատմէին. ջարդեր, կողոպուտներ, կամուրջներէ վար նետուելով անձնապանութիւններ, բռնաբարումներ: Կիներ իրենց ամուսիններուն առջեւ, աղջիկներ իրենց մայրերուն գիրկերուն մէջ բռնաբարուած էին: Այս բոլորը երբ կը լսէր Աննա, երանի կու տար իրենց վիճակին, նոյնիսկ տարբեր աչքով կը դիտէր Պուրհան չաւուշը: Այս խենչը, գոնէ թուփի մը ետեւ կ'անցընէր իր գոհը, քիչ մը աւելի կը թեւալ էր կարծէք:

Ներկան հիմա աւելի լաւ էր: Անօթի չէին մնար. ծարաւ ալ չէին մնար: Բայց ի՞նչ պիտի ըլլային. ո՞ր պիտի երթային: Ուրֆացի պառաւ մը, որ խնայաբար էր, օրն ի բուն կը թափառէր թաղէ թաղ, փողոցէ փողոց, ծառէ ծառ՝ իր տառապանքը երգելու համար: Եւ ինչ որ կը նախատեսէր ապագային համար, պարզապէս քստմնեցուցիչ բան մըն էր: Եւ բոլորն ալ, յատկապէս կիները, կը սարսափէին:

Պազարի օր մը, Հաննոն գնաց հոն, ուր տեղի կ'ունենար վաճառքը: Այդ ի՞նչ հարստութիւն էր, ահագին կովեր, ձիեր, ոչխարներ, այծեր, ուղտեր, գէզ-դէզ հագուստներ, կօշիկներ, ուտեստեղէն, օճառ, ծխախոտ, տակաւններով իւզ, ձէթ ու շաքարեղէններ բերուած էին հոն: Մարդիկ իրարու հետ կը սակարկէին, կ'առնէին-կու տային, կը հայհոյէին, կը շնորհաւորէին: Տենդ մը կար, կեանքի հակայ տենդ մը:

Ոմանք պարզապէս ուտելիքներ կը ծախէին. հոս մէկը գետնախնձոր կը տապակէր, ուրիշ մը Հաննոյին համար անծանօթ բան մը կը տապակէր, յետոյ պիտի իմանար, որ ասոր ֆելիքիլ կ'ըսեն, որ շատ ժողովրդական բան մըն է արարներուն մօտ: Դեռ քեզպապ շինողներ, իրենց խորովածներով ամբողջ պագարը անուշ բուրմունքով կը լեցնէին: Հաննոն ուզեց գնել քիչ մը քեզպապ, բայց չհամարձակեցաւ, հագիւ մօտեցած, նշմարեց ճանճերու ռապարս մը հում միսին եւ նաեւ դիզուած խորոված միսին վրայ: Փո՛ւհ: Ինչպէ՞ս կ'ուտէին այդ բոլորը...: Ինք ճանճ շատ տեսած էր Անտիոքի մէջ, բայց այս պագարին ճանճը այլ բան էր: Քիչ մը անուշեղէն ուզեց գնել. դարձեալ չեղաւ. ճանճերը հոն ալ գործի լծուած էին: Հաննոն շատ կը զարմանար, որ մարդիկ ահռելի անորոշով ճանճերէն աւելցածը կ'ուտէին...:

Իր գաղթականի վիճակին մէջ Հաննօ զեռ ուրիշները կը մեղքնար: Քիչ մըն ալ քայեց: Անասունի մը խրխիւնը հասաւ ականջին: Մանօթ ձայն մըն էր այդ: Չորս դին սկսաւ դիտել մարդուկը: Անասունին խրխիւնը աւելի կը կրկնուէր: Վերջապէս տեսաւ զայն: Ի՛ր ջորին էր...: Ծօղուտ օսմանեան պետութեան զբաւուած ջորին ծախու հանուած էր: Եւ Պուրհան էֆենտին վստահեցուցած էր, որ պատերազմէն ետք իր ջորին պիտի վերադարձուէր իրեն: Ահաւասիկ հոս էր ջորին, պագարին մէջ, ծախու հանուած:

Մօտեցաւ կենդանիին: Զորիի ցեղը, որ ճանչցուած է իր ապերախտութեամբը, Հաննոյին պարագային տարբեր նկարագիր մը կը պարզէր: Զորին սկսած էր լիզել իր տիրոջ ձեռքերը: Երկուստեք կարօտցած էին իրարու:

Այլ ճար չկար. պէտք էր գնել զայն: Հաննոն երկընտրանքի մէջ ինկաւ. ի՞նչ ընէր, ինչպէ՞ս ընէր: Ընչէ՛ր է, որ դրամ ունէր քովը, բայց չէր կրնար ջորին համար յատկացնել զայն: Միւս կողմէ, չէր ալ կրնար թողուլ կենդանին: Ինչպէ՞ս ընել, Տէր Աստուած:

Վերջ ի վերջոյ կատարեց ընտրութիւնը: Ինչ ուզէր՝ թող պատահէր. ինք պիտի գնէր իր ջորին: Աստուած ողորմած էր, դուռ մը կրնար բացուիլ: Անօթի չէին մնար:

- Սակարկութեան համար մօտեցաւ վաճառորդ միջնորդին:
- Դո՛ւն, հայու կտոր. եալա՛ր գործիդ գնա:
- Որքա՞ն է գինը, տամ, աղա:
- Այս ջորին ծախեցի, նոր ծախեցի. հոն է նոր տէրը, գնա՛ քովը: Տե՛ս, եթէ կը ծախէ, աւ իրմէ:

Հաննոն դիմեց նոր տիրոջ: Սա չուզեց լսել Հաննոյին առաջարկը: Ատանկ ջորի կը ծախուէ՞ր:

- Աղա, ուզածիդ լափ տամ քեզի, սա իմ ջորին է, դրամած էին ինձմէ:
 - Ես դրամով գնած եմ. ասանկ ջորի մարդու ձեռքը չ'անցնիր. ուզածիդ լափ դրամ տուր, ես չեմ ծախեր: Գործի՛դ գնա:
- Հաննոյին պնդումները արդիւնք չտուին: Վերջին անգամի մը համար չոյեց կենդանիին ճակատը, բաշերը, աչքերը, ապա վերադարձաւ իր ծառին: Հոն այլ պատկեր մը պարզուած էր: Օսան եւ Աննա, վիզ վզի ինկած՝ կու լային: Հաննոն սարսափեցաւ: Շատ ծանր բան մը պատահած ըլլալու էր: Սա մահուան լաց էր:

- Ի՞նչ կայ, ի՞նչ պատահած է:
- Ինք՝ Հաննոն ալ սիրտ չուներ խօսելու, բայց շատ զարմանալի բան էր կեներուն լացը:
- Այդ քու Ազիզ բարեկամդ...
- Ի՞նչ ունի Ազիզ բարեկամս, խեր ըլլայ, գէշ բան մը պատահած չըլլայ խեղճ մարդուն:

— Մտխրը շապիկիդ, այ մարդ: Գնա՛, հոն կովերուն...
 Հաննոն, որ ընդհանրապէս արագ բան չէր ըմբռնէր, հիմա հասկացաւ բաներ մը: Փռւթաց հոն՝ ուր կովերը մէկտեղուած էին: Օհօ՛, իրենց կովերը հոն էին: Մարդ մը իր ձէյրան կովուն վիզը պարան մը անցուցած, կը պատրաստուէր քշել գայն...
 — Սա իմ կովն է, ո՛ւր կը տանիս...
 — Ես քեզի հետ գործ չունիմ: Ես դրամով գնած եմ գայն:
 Այս ըսելով՝ նոր տէրը փորձեց շոյել կովուն վիզը: Կովը ջանաց խուսափել այդ փայփայնքէն:
 Հաննոն ինք ծօտեցաւ. կովը վիզը երկարեց, կըցածին շափ, եւ աղիոզորմ ձայնով մը բառաչեց:
 Ընդհանրապէս պաղապուր Հաննոն կատղեցաւ: Թելացնոր վիճակով մէջտեղ ինկաւ: Աջ դարձաւ, ձախ դարձաւ: Նշմարեց իր զանկեղծ եւ մտերիմ թարեկամը, Ազիզը: Սա նստած էր հրեպապհեթի մը խարխուլ սեղանին առջեւ եւ քեպպա կ'ուտէր: Է՛հ, մարդը յաջող վաճառք մը կատարած էր, կ'արժէր համով պազարի քեպպա մը ուտել: Տակաւին իր առջեւ դրած էր մեծ ծրար մը կնոջ համար չիթ գնած էր, հագուստացու գնած էր:
 — Ազիզ, ո՛ւր ես կովերս, — կարմրած աչքերով պտասց Հաննոն:
 — Ի՞նչ ունին կովերդ, Հաննօ եղբայրս. եկուր պատառ մը բան կեր:
 Բիլօ մըն ալ քեպպա կտրել տամ, տար ընտանիքիդ, մե՛ղք են, թող ուտեն: Կե՛ր, կե՛ր, մի՛ քաշուիր:
 — Կովերս, Ազիզ, ինչո՞ւ ծախեցիր կովերս:
 — Է՛հ, կեր չկար, Հաննօ եղբայրս. ինչալլահ, Աստուծով շուտով կը դառնաք, ես քու կովերուդ տեղ նորերը կը գնեմ. իմ ձեռքովս կը բերեմ եւ ձեր ախտոսն մէջ կը կապեմ: Դեռ վրան հորթ մըն ալ նուէր կը բերեմ:
 Եւ աներես մարդը շարունակեց լափել խորովածը: Հացի մեծ կտորի մը մէջ կը փաթթէր միսի պատառները եւ բերանը կը թխմէր, աչքերը դուրս կու գային, կարծէք պատառին մեծութիւնը պիտի խեղդէր զինք:
 — Ա՛խ, ի՞նչ բնեմ, Հաննօ աղա, ակոյ չկայ, ակոյ՛...
 Հաննոն չկրցաւ բան ըսել: Զգեց ու գնաց: Մինչեւ իրիկուն չհամարձակեցաւ վերադառնալ իրեններուն. երես շունէր կնոջ եւ հարսին նայելու...



Հոն, ձըսը էլ-Շուղուրի մէջ, զիրար գտան Տրգրան եւ Նոխուտեան պատուելիները: Նոխուտեան պատուելին գլուխ քաշած էր: Երբ Մուսա լերան ժողովուրդը կ'որոչէր Լեռ ելլել, Անդրէասեան պատուելիին տեղեկութեանց եւ թելադրութեանց վրայ, ինք, Նոխուտեան պատուելին, կըցած էր իր հօտը համոզել, որ լեռ չելլէ: Հոս բերած էր իր հօտը:
 — Մեր ապուշները Լեռ ելան, Մուսա տաղ: Տեսնե՞ք թէ ի՞նչ պիտի բերեն խեղճ ժողովուրդին գլխուն: Ի՞նչ պիտի ուտեն, ինչպէ՞ս պիտի զիմադրեն օսմանցիին բանակին: Ապուշ են, ապո՛ւշ: Դուն լաւ ըրեր ես, Տրգրան եղբայր, որ չորզուիները չես զրգռած: Լաւ է, գանձ ժողովուրդը կը փրկուի:
 — Եւ ասոր գուն փրկութի՞ւն կ'ըսես, պատուելի եղբայր:
 — Անշուշտ, անչո՛ւշտ: Սա Տիրոջ կամքն է, թող սրհնեալ ըլլայ Անոր կամքը:
 — Սա սատանայի կամք է, պատուելի եղբայր, սատանայի՛:
 — Դուն աւետարան չե՞ս կարդացած. պէտք է հնազանդիլ իշխմանաւորներուն. այդպէս կը պատգամէ Երանելին՝ Փօղոս առաքեալինս:

— Դու եկել կարգացր ես, պատուելի եղբայր. նոյն Պօղոս առաք-
եայնիս նաեւ կը պատուիրէ իշխանաւորներուն խոհեմութեամբ վարուիլ իրենց
հպատակներուն հետ: Սա ի՞նչ խենչի իշխանաւորներու ձեռքն ենք ինկեր,
Դո՞ւն...

— Ես ի՞նչ:

— Ձտեսա՞ր աղջիկներու եւ հարսներու բռնարարուիլը:

— Այո, առանկ բաներ տեսայ, պատուելի եղբայր. ի՞նչ ընենք, սա
զազթականութիւն է. պիտի պատահին այդ տեսակ դէպքեր: Թող Աստուած
վրէժ լուծէ անոնցմէ...

— Քու տեղը ի՞նչն էր, պատուելի՛, — գրեթէ պոռաց Տիգրան պատուելին
իր պաշտօնակիցին երեսն ի վեր:

— Ոչ, պատուելի եղբայր, պէտք է հնազանդիլ պետութեան հրամանին:

— Եթէ դուն այս անպատին աւազին ու փոշին կրնայիր համակեր-
պիլ, գոնէ հօտը չքշէիր եւ հոս չհասցնէիր. դուն առանձինդ դայիր հոս: Ես
չկրցայ իմ հօտիս տիրութիւն ընել, վա՛յ ինձ, վա՛յ ինձ...

ՆՈՐ ԵՐԹ

Ճըսր էլ-Շուղուրը հանգրուան մըն էր պարզապէս:

Իուն երթը անկէ անդին էր: Եւ հոն էր երկընտրանքը: Ի՞նչ երկընտ-
րանք սակայն: Ընտրութիւնը քմահաճոյք էր: Գաղթականութեան յանձնա-
խումբի նախագահը ինքն էր, որ կ'որոշէր: Կը կարգադրէր.

— Այսինչ քապուրը դէպի արեւելք...

— Այնինչ թապուրը դէպի հարաւ, Հոմսի դաշտերը, Դամասկոս կամ
Հաուրան...

Այլեւս մնացածը մանրամասնութիւն էր էֆենտիին համար...

Գաղթողին համար ըլլալ-չըլլալու հարց էր, ջարդուելու կամ չջարդուե-
լու հարց: Սկզբունք չկար: Էֆենտի պէյին քմահաճոյքէն կախեալ էր ամէն
բան:

Երբ իր վերին կամքով տնօրինէր թապուրի մը ուղղութիւնը, եւ այդ
ուղղութիւնը ըլլար դէպի արեւելք, կը փրթէր վայնաստուն մը: Արեւելքը ստոյգ
ջարդ էր, տառապանք էր:

Ճըսր էլ-Շուղուրի կեղբորն տեսակ-տեսակ տեղեկութիւններ կը հաս-
նէին: Երբեմն չափազանցուած, երբեմն իրական լուրեր, բայց բոլորն ալ
իրականութիւն, բոլորն ալ ողբերգութիւն:

Պատմութիւնները քստմնելի էին պարզապէս: Մէկը եկած ու պատմած
էր.

— Ես կրցայ փախիլ, սակայն ընտանիքիս անդամները սուրէ անցուցին
թուրքերը:

— Իմ ընտանիքէս վեց հօգի օրօրեցին...

— Ի՞նչ օրօրոց է այդ, եղբայր...

— Ահա ինչ բան է օսմանի օրօրոցը. մետաղէ շինուած է, մէջը մետաղէ սուր-սուր փուշեր կան: Երբ մէկը մէջը դնեն, կը սկսին օրօրել. մետաղէ սուր փուշերը հետզհետէ կը խորին ենթակային մարմնին մէջ: Արիւնաքամ կ'ըլլայ ու վերջապէս կ'ազատի:

— Ո՞վ կ'ազատէ զայն...

— Մահը...: Մեռնիլը երանութիւն է. դանդաղ կու գայ անիկա, բայց կը փրկէ. ահա ինչ բան է. ձայնդ երկինք կը հասցնէ...: Իմ վահէ եղբայրը, վահադ եղբայրը, Սիրան հարսը, Մանուշ քոյրիկը, Գուրգէն եղբայրը...: Ծնթական կը նուաղէր...: Ինք կրցեր էր ձեռով մը խուսափիլ եւ հասնիլ հող:

Ուրիշ մը կը նկարագրէր, թէ ինչպէս կը բռնաբարուէին զեռաստի աղ-ջիկներ, նորահարսեր: Ապա կը նկարագրէր, թէ ինչպէս կը սպաննուէին մարդիկ, առանց խորութեան...

Բոլոր լուրերը սահմակեցուցիչ էին եւ ահաւոր: Ատոր համար ալ, երբ թաղուրի մը ցոյց տրուէր արեւելքի ուղղութիւնը, անյուսութեան աղաղակը կը հասնէր մինչեւ երկինք:

Բախտաւոր կը համարուէին բոլոր անոնք, որոնք կը զրկուէին զէպի հարա...: Հոն, արաքական դաշտերու մէջ, ջարդեր տեղի չէին ունենար գրեթէ: Անօթութիւնը, հիւանդութիւնը շատ անմեղ պատիժներ էին: Ահա ինչն թուրքի եւ քիւրտի եաթաղանն էր...

Պատուելի Տիգրան թեթեւացած դուրս եկաւ Գաղթականութեան յանձնախումբի նախագահ էֆենտիին գրասենեակէն: Այս վերջինը, օդին դրած սեղանին՝ անդուզ կը խմէր: Բերանը թեղանիքով սրբելէ ետք, նայած էր ցանկի մը վրայ, դարձեալ զուամբ քաշած գլխուն, ապա հրահանգած իր ստորադասներուն, որ Տիգրան պատուելիին թաղուրը զրկեն զէպի հարա...

Այդ տաք գլուխը կրնար ձեռքը մեկնել զէպի արեւելք. ո՞վ ինչ կրնար ըսել իրեն...: Ինք բացատրիկ լիազօրութիւններով օժտուած մարդ էր. ինք փոքր «ալլախ» մըն էր, որուն զինով քմահաճոյքէն կախեալ էր հազարներու կեանքը...

Պատուելի Տիգրան թեթեւացած դուրս եկած էր էֆենտիին օդերոյր գրասենեակէն: Կարելի պիտի ըլլար կոտորածէ փրկել ժողովուրդը. ո՞վ գիտէ, թերեւս այդ ձեռով աւելի լաւ ըլլար...

Շուտով ճամբայ պիտի ելլէր կարաւանը:

Ամէն մարդ ունեցած-չունեցածը հաւաքելու ելաւ: Հաննոն զնած էր իշուկ մը, որ պարզապէս խեղճութիւն մըն էր իր բռնագրաւուած շորիին քով: Նիհար, վատ սրունքներով իշուկ մըն էր, բայց զոնէ կրնար աղեկները կրել փոխն ի փոխ: Բաշեց իշուկը, վրան բեռցուց քանի մը բազմոց, վերմակի պէս բաներ, եւ աղեկներէն փոքրիկը, ձիմին տեղաւորեց անոնց մօտ: Ու ճամբայ ինկան զէպի հարաւ, զէպի Ղապի ընդարձակ հովիտը...

Մնացողները երանի կու տային այս թաղուրին: Արեւելք չէին երթար, զէպի եաթաղան չէին երթար...: Հոմսի դաշտերուն մէջ, Հաուրանի մէջ կըրնային փրկուիլ սպանդէն: Եւ ո՞վ գիտէ, թերեւս շուտով վերջանար պատերազմը եւ կարենային վերադառնալ իրենց տունները...: Երանելի էին հարաւ դապոյղները...

Աննան թէ՛ ուրախ էր եւ թէ տխուր: Ամէն մէկ քայլը զինք կը հեռացնէր իր տունէն, ազարակի երազէն: Հիմա, որ կորսնցուցած էին ամէն բան, աւելի եւ աւելի կը մեծնային այդ կորուստները իրենց աչքերուն: Հիմա Աննան կը մտածէր իրենց նաչսուն հաւերուն մասին, կատուին մասին: Կը մտածէր, որ ինչ պիտի ըլլային պարտէզին մէջ թաղուած պղինձները, տաշ-

տեղը. ինք՝ որ կաթով պիտի լեցնէր այդ բուրբը, հիմա ի՞նչ պիտի ըլլային անոնք: Հասկա խնոցին, զոր այդպէս, ծառի ճիւղէն կախուած ձգած էր: Թերեւս թուրք զինուոր մը քարով նշան բռնէր ու ջարդուփշուր ընէր զայն: Նոյնիսկ քաղհանի հին ու մին դանակը կը մեծնար իր աչքին...: Որքան բան ձգած էին ու կը քալէին գէպի անորոշութիւն...:

Փառք Աստուծոյ սակայն, գոնէ իր ձաղուկները իր աչքերուն առջեւ չէին կոտորեր. եւ ինչ լաւ էր, որ աղջիկ գաւակ չէր ունեցած: Ինք՝ որ ժամանակին միշտ ազօթած էր աղջիկ գաւակի մը համար, հիմա փառք կու տար Աստուծոյ, որ խնայած էր իրեն եւ չէր տուած իր սւգածը: Երբեմն կ'երեւակայէր, որ իր փոքր տղան աղջիկ էր, անուշիկ աղջիկ մը եւ Պուրհան էֆենտիին գրկին մէջ...: Աչքերը կը լեցուէին: Ձէ՛, ճիշդ էր այն, որ ամէն շարքի մէջ բարիք մը կար...:

Ճըսր էլ-Շուղուրի պագարը, ճանճերու պարսերը, քեպապի թոք ծակող բոյրերը, եւ գաղթական դարձած հայորդիներու հազարաւորներ բռնեցին հարաւի ճանապարհը...:

Թապուրին պատասխանատուն էր արաք ոտտիկան մը, Մուսթաֆա: Ճըսր էլ-Շուղուրէն որոշ չափով հեռանալէ ետք, Մուսթաֆա շատու կարգադրեց, որ ոտտիկանները շատ նեղը չդնէին գաղթականները: «Հարամ, հարամ», կը կրկնէր իր ոտտիկաններուն: Արտաքուստ, սակայն, կը ջանար կարելի եղածին չափ խիստ երեւիլ...:

Առաջին օրը քալեցին Ղապի հովիտին բերանն ի վար...: Դաշտային այդ ի՞նչ ընդարձակ շրջան մըն էր: Լեռնային գիւղէն եկող այս գաղթականներուն համար տարօրինակ բան մըն էր այդ ընդարձակութիւնը...:

— Հէ՛յ, Հաննօ՛, այս գաշտին լայնքը կրնա՞ս քու ջորիովդ մէկ օրէն կտրել...: Եղբայր, այս ի՞նչ դաշտեր են, որքան աչքդ կը տեսնէ՝ դաշտ է:

— Աստուծոյ ուժին մեռնիմ, Մինա՛ս: Դուն օրն ի բուն լեռան եւ ժայռերուն հետ կը կոտէիր. դուն քեզ կը տեսնէիր ըսելով, որ արտ ունիս, Կնկայ լաչակի մեծութեամբ հողիդ հողի կու տայիր...:

— Ասիկա ընդարձակ է, Հաննօ, բայց մի յիշեցներ, իմ արտս ի՞մն էր. քարէն, լեռնէն ձեւած էի զայն: Հոն Ասի գետին չափ քրտինք թափած եմ: Դեռ հօրս քրտինքին ալ հոտը կ'առնէի արտս ելած ատեն...:

— Մինաս, Մինաս, ճամբադ քալէ. դաշտ ասոր կ'ըսեն: Հերկէ, Հերկէ, չի վերջանար...:

— Հապա մեր ածուխն պէս, — մէջ մտաւ Նշան, — հայրս ձգած էր մեր ածուխ. եղբօրս հետ, եղբայր բաժին, բաժնուեցանք, մէջտեղն ալ վարդենի մը տնկեցինք՝ իբրեւ սահման: Վերի գլուխն ալ ծղօտի հաստութեամբ աղբիւր մը ունէինք: Իմ բաժինս կէս լաչակի տարածութեամբ, եղբօրս բաժինն ալ կէս լաչակ...: Մէջտեղը՝ վարդենին: Եթէ ուզէինք, մինչեւ կէսօր իւրաքանչիւրը կը փորէր իր բաժինը: Բայց օրերով կը խաղայինք, հողին հոտն ու համը երկար ատեն զգալու համար: Այս դաշտին դաշտ կ'ըսեն...:

— Երանի թէ հոս ձգեն մեզ...:

— Ես իմ կէս լաչակ արտս կ'ուզեմ, Հաննօ, ուրիշինը ուրիշին, թող մեզ ետ տանին...:

— Է՛հ, մի՛ վիճիք, եղբայրներ, ազօթեցէք, որ մեր ուղղութիւնը չփոխեն, — մէջ մտաւ պատուելի Տիգրան, — դեռ ճամբայ ունինք կտրելիք. պարզ մի վիճիք, դուք ձեզ մի յոգնեցնէք:

— Պատուելի եղբայր, դեռ շա՞տ պիտի քալենք:

— Ձեմ գիտեր, Նշան եղբայր, միայն թէ գէպի արեւելք չդարձնեն մեզ:



Մինչև կէսօր քալեցին: Դաշտը հետզհետէ կ'ընդարձակուէր: Տեղ-տեղ կ'երևէին կանաչ կէտեր: Երբեմն զալարիքը կ'ընդարձակուէր ու կը մեծնար: Ղապի ճարճախուռն էր սա: Որոնդէս դետը տեղ-տեղ կը ճահճանար: Եւ տեսակ-տեսակ թռչուններ թռչէր կ'առնէին շամբուտներէն եւ ջուրէն: Փոքրիկները թռչուններով կը տարուէին ու կը հրճուէին:

Ձէ, կարծէք լաւ էր հոս: Բայց ոչ, գէթ մեծերուն համար այդ բոլորը մոխիր ու փտուփիւն էին: Իրենք կը հեռանային ֆեսայէն, եւ սա կորուստ էր, տառապանք էր:

Ճամբուն վրայ արարներ կանգ կ'առնէին ու կը մեղքնային զաղթականներուն: Չնայած իրենց կիսամերկ վիճակին, ասոնք կը մեղքնային տուն ու տեղ կորսնցուցած մարդոց:

Արեւամուտէն առաջ, հետուէն, երեւցաւ մութ ու խոշոր զանգուած մը:

Հինաւուրց բերդ մըն էր:

Հոն պիտի գիշերէին, բերդին պարիսպներուն տակ:

Բերդ չհասած՝ ճամբուն վրայ տեսան մարդ մը, որ եղ մը եւ էջ մը լծած՝ կը հերկէր իր դաշտը:

Աչնանամուտ էր:

Մարդը սկսած էր հերկել իր դաշտը: Մինասին արիւնք եռաց: Եթէ մընացած ըլլային Քեսապ, ինքն ալ պիտի պատրաստուէր իր զարտըը հերկելու: Օրեր առաջ պիտի ծրագրէր ցանելիքը, երբեմն քանի մը անգամ փոխէր միտքը, մինչև որ վերջնականապէս որոշէր ցանելիքը: Հիմա սա մարդը կ'երթար ու կ'երթար՝ վերջը ետ կը դառնար: Իր զարաշին քանի՞ պատիկն էր արդեօք սա արտը: Երանի կու տար օտար հողամշակին: Եթէ իր արտը ատոր կէսին շափ, թէկուզ քառորդին շափ ըլլար, ամէն մարդ մատովը ցոյց կու տար զինք՝ ինքն ալ ֆէսը ծուռ կը դնէր: Այդ պատասիկն ալ շատ տեսան մարդիկ, որ հիմա կը քչէին զինք ղէպի անորոշութիւն:

Ձկրցաւ փորձութեան դիմանալ:

Կանգ առաւ:

Հերկուած հողին բոյրը անուշ էր թէեւ, բայց իր հողին բոյրը ուրիշ էր, ուրիշ՝ Քանի մը անգամ լեզուն դարձուց բերնին մէջ: Պիտի բսէր մարդուն, որ արտօնէր մէկ ակօս, միայն մէկ ակօս հերկելու արտօնութիւն տար իրեն: Բառերը գուրս չէին դար: Թուքը կուլ տուաւ քանի մը անգամ:

Ոստիկան մը, նկատելով Մինասին զանդաղիլը, մարակի հարուածով մը արթնցուց զինք իր երազէն ու մղեց քալելու...: Մինասին աչքերը ետեւ մնացին:

— Գոնէ ակօս մը, միայն ակօս մը մանր բունէի ու հօօօօօ՛օ կանչէի, — կը մրթմրթար...

Բերդին չհասած, երեկոյեան մթութեան մէջ մօտեցան կրակի մը: Ընդարձակ դաշտին մէջ, այդ կրակին լոյսը մազիսի մը պէս կը քաշէր կթոտած սուքերով զաղթականները:

Քոնիր մըն էր: Երկու-երեք կիներ հաց կը թխէին: Հացին բոյրը կը հասնէր զաղթականներուն ու կը հայեցնէր զիրենք:

— Օօօ՛օփ, — կը ներշնչէին հացին բոյրը: Ի՞նչ անուշ բոյր էր այդ: Իրենց տուններէն ելլելէն ասդին, Քոնիր չէին վառած, հաց չէին թխած:

Յատկապէս կիներուն յուզումը մեծ էր: Ո՛րքան մօտենային Քոնիրին, ա՛յնքան աւելի թոք կը պատուէր հացին բոյրը: Հացին բոյրին անուշութիւնը ուրիշ ոչ մէկ բան ունէր...

Աննան գիտեց կեսուրը: Կեսուրն այլ, իր կարգին նայեցաւ Հարսին: Ջիրար շատ լաւ կը հասկնային: Երկու օրը հեղ մը, Հարս, կեսուր եւ Փարուն տալը թոնիր կ'իջնէին: Փարուն խմորը կը գնտէր, Աննան գունտերը կը բանար, իսկ Օսան բացուած խմորները թէ՛ պատերուն կը փակցնէր: Առաջին խմորը փակցնելէ ետք, ժանկիկներուն համար մէկական հացիկ կը փակցնէր թոնիրին պատին:

— Առաջին հացը իրենք թող չուտեն, յետոյ իրենց առաջին կիները կը մեռնին, — կ'ըսէր իր մօրմէն եւ մեծ մօրմէն լսած խօսքը, պատաւ Օսան: Ան խորապէս կը հաւատար այդ նախապաշարումին: Թոյլ չէր տար, որ առաջին նկանակը ուտէին յատկապէս երիտասարդներ: «Առաջին հացը ուտողին կիներ կը մեռնին» կ'ըսէր: Կը խառնէր այդ հացը միւսներուն հետ:

Երեքը միասնաբար կը թխէին հացը: Վերջին նկանակը երբ դուրս կը բերէր թոնիրէն՝ Օսան կեսուրը փառք կու տար Աստուծոյ: Հաց ունենալը Աստուծոյ մեծ շնորհքն էր:

Իսկ հիմա, քանի՛-քանի՛ շաքաթէ ի վեր Աստուծոյ այս շնորհքէն զրկուած էին: Ճշրը էլ-Շուղուրի մէջ հացը գնած էին փուռէն: Ինչ այլ հաց, մեղա՛յ քեզ, Տէր. մինչեւ գունտը նետէին փուռ, ետ դուրս կը հանէին: Խմոր, խմոր. հացի բոլոր իսկ չուէր. ի՞նչ կրնային ընել սակայն:

Թոնիրին կից, ճամբու եզրին կանգնած մարդ մը, մէկ ձեռքին բռնած հաստ գաւազան մը, միւսով լաւաշ հաց կը մեկնէր իր առջեւէն քալող գաղթականներուն: Ենթական գաղտագողի կը կատարէր իր բարիքը: Եթէ ոստիկանները տեսնէին...

Տուածը սեւ հաց էր, բայց թոնիրի մէջ եփած հաց: Իւրաքանչիւր ընտանիքի մեծաւոր, թաքուն կերպով, հացը կը բաժնէր իր ընտանիքի անդամներուն: Մարդիկ անյազութեամբ կ'ուտէին գարիի հացը: Օ՛խ, վերջապէս հաց կ'ուտէին, իրական հաց:

Կարաւանին վերջին ընտանիքները սակայն չկրցան հաց ստանալ: Թուրք ոստիկան մը մտրակի հարուածներով արգիլած էր բարեսէր մարդուն բարեխրութիւնը: Մուսթաֆա չաւուշն այլ հեռու էր կարաւանին սկզբնաւորութեան. ան թոյլ չէր տար այդպիսի բան մը...

Բերդին պարիսպներուն տակ կուչ եկած գաղթականները, հակառակ իրենց կրած յոգնութեան եւ դժուարութեանց, ուրախ էին անո՛ր համար, որ իսկական հաց կերած էին, թոնիրի՛ հաց: Բոլոր անոնք, որոնք չէին կրցած արար մարդուն ձեռքէն հաց ստանալ, իրենց բախտաւոր ճակատագրակիցներէն ստացած էին որոշ բաժիններ:

Գիշերը, նոյն արար մարդը, կրցած էր սողակի կարաւանէն ներս: Իրեն հետ բերած էր երկու խոշոր ծրար հաց.

— Ասիկա առաջինը չէ, անուշ ըլլայ, կերէք: Հացը Աստուծոյ բարիքն է. կերէք, անուշ ըլլայ: Վալլահի հարամ, հարամ... Թող Աստուած օգնէ ձեզի: Ա՛խ սա անհաւատ թուրքը, մեր կրօնն այլ խայտառակ ըրաւ, ձեզ այլ կը ջարդէ: Թող Աստուած պատիժը տայ այդ անօրէն եւ անհաւատ ազգին:

••

Ժողովուրդը հսկայ ու մութ պատերու տակ թափեցաւ: Գիշերը հոն պիտի անցընէին: Մուսթաֆա չաւուշին զինուորները կրակ մը վառեցին իրենց մեծաւորին համար: Նստաւ կրակին առջեւ Մուսթաֆա չաւուշ... Այդ գիշեր բան չկերաւ: Կիներն ու աղջիկները, սրտատրոփ, կը սպասէին: Չաւուշը չաւուշ է. Գուրհան էֆէնտի, Մուսթաֆա էֆէնտի, Հասան չաւուշ, բոլորն այլ Օսանի զարմերն են, կամակատարները եւ արիւն խմողները...

Չարմանայի՛: Մուսթաֆա շաուչ գլխուն քաշեց լայն եսփնճին ու քնացաւ: Կիներ, հարսներ եւ աղջիկներ ի զուր սպասեցին սարսափին, որ բարեբախտաբար չեկաւ: Մուսթաֆա շաուչը տարբեր խմորէ էր կարծէք...:

Աշնանամուտին, գիշերային պաղը խեղճուկրակի դաղթականներուն մինչեւ ոսկորներուն ծուծը թափանցեց: Այդ ի՛նչ պաղ էր: Սեպտեմբերի վերջերը իրենց քովն ալ օդը կը փոխուէր. անուշ պաղութիւն մը կը պարուրէր ամրան շոգէն ծանձրացած մարմիններն ու հոգիները: Բայց հօս, Ղապի ընդարձակութեան մէջ, սա հսկայ բերդին պարիսպներն իսկ չէին կրնար պաղէն պաշտպանել մասն ու սառած մարմինները: Քնանալը կը դառնար անկարելիութիւն, հակառակ յոգնութեան: Ամբողջ գիշերը, շատերու համար եղաւ քաշքշուք. ամէն մարդ կը ջանար իր կողմը քաշել վերմակի նմանող բանի մը մէկ ծայրը:

Մայրեր, կրցածնուն չափ, կը ջանային իրենց կուրծքերուն մօտեցնել ու սեղմել իրենց ձագուկները: Պէտք էր, ամէն գնով, տաքուկ պահել փոքրերը: Տնքոցը շատ ծանր էր. ամէն մարդ կը տառապէր իր ջուշին մէջ: Կը բաւէր ճեղքուուած ոտքերուն ցաւը: Կօշիկները կա՛մ լլրիւ փճացած էին կամ ալ աշխարհ մաշած՝ որ դարձած էին բո՛ւ՝ իրենց տէրերուն:

Վաղ առաւօտուն, պաղը աւելի կ՛ծող դարձաւ: Բոլորն ալ կը դողային: Կ'աղաչէին Աստուծոյ, որ շուշացնէր արեգակին շողերը: Սա ինչ սուկալի բան էր: Բայց լոյսը նաեւ կը նշանակէր երթ, տառապանք ու ցաւ: Ոչ մէկ բանէ ուրախութիւն, ի՛նչ ուրախութիւն, թէկուզ եւ քիչ մը հանգիստ յուսալ: Մուսթաֆա շաուչին բարեբախտութիւնը եւս սահմանափակ էր: Ան ալ իր գլխուն վերեւ գերադաս իշխանութիւններ ունէր: Այդ գերադասներուն մէջ զժուար թէ կարելի ըլլար գուժ ըսուած բանը գտնել: Արեւու առաջին շողերուն հետ իսկ, պէտք էր ճամբայ ելլէին: Մէկ միտիմարանք կար միայն. քիչ մը պիտի ջերմանային մարմինները...:

Կարաւանը հաւաքուեցաւ ու ճամբայ ելաւ: Քանի մը հոգի ճամբայ պիտի չեւէին. աւելի ճիշդ՝ պիտի չկարենային շարժիլ, որովհետեւ մեռած էին:

— Մինաս, Մինա՛ս, մինչեւ հիմա քանի՞ հոգի թողուցինք ճամբու վրայ:

— Ճամբայ ելանք 315 հոգիով. մինչեւ օրս 48 հոգի մեռան, Նշան: Այս տառապանքին դժուար թէ կարենանք դիմանալ: Մենք սուրի չենք բռնուիր եւ աշպէս կը մեռնինք. հասա սուրի բռնուողները ի՞նչ կ'ըլլան, Աստուած:

Կարելի եղաւ մեռածները փոքր փոփ մը մէջ գետեղել եւ քանի մը բուռ հող նետել: Տիգրան պատուելին կրցաւ Հայր Մերը ձեւով մը արտասանել ու կարաւանը ճամբայ ելաւ...:

(Շար. 8)

ԳԷՈՐԳ ԱՐԷԼԵԱՆ

ԹՈՒՐԲԱԿԱՆ ԱՇՏԱՐԱԿ՝ ՍԵՐԲԱԿԱՆ ԳԱՆԳԵՐԻՑ

Մենք գիշերով
հանում էինք մեր հարազատներին
ու թաղում նորից
մեր պարտեզներում,
ալբոմներում,
ֆերբուածներում:

Եւ երբ դու՝ հիւսիսի մարդ,
տեսնում ես այս հայեացքները կեղծաւոր,
երբ արեւելքն արեւմուտքին
«բարի լոյսի» փոխարէն՝
աշտարակն է ցայց տալիս,
տեսնում ես
լուկ այն, ինչը
տեսնում ես:

Ջահելի տեղ չի անցնում
ջահելն այստեղ,
ու հիւանդի՝ հիւանդն էլ,
սերքն էլ սերք չէ,
բայց անկախ են, վերջապէս,
մեր բոլորի տեղն են անցնում նրանք հիմա:

Ահա ինչու, հանգարտ, հանգիստ,
նայում են մեզ
իրենց անխախտ ու հնամեայ աշտարակից:

Իսկ թէ նրանք, որ խօսում են,
մեզ են դիմում գետի միջով ու բոյերից խոտհունձի,
այն գոհերը՝ պարտեզներում, ալբոմներում ու տողերում,
ոզնածուծի, գեների մէջ, մաշկի տակ...

Այդքան լոյսը ո՞վ կը տայ մեզ՝ նրանց համար...
Այդքան տապան... Քանի սերունդ...
Եւ ով պիտի պատասխանի, հումանիշներ փնտռի՝ գտնի
չանքերին:

Բայց կայ մի բան.
Գատաստանն անեղ:
(Թարգմանութիւն՝ Ա. Թոփչեանի)



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ՀԱԻԱՏԱՐԻՄ՝ ԻՐԵՆՑ ԿՈԶՈՒՄԻՆ

Այս թիւով կ'աւարտին Արցախեան Պաշտպանական Շարժման նուիրուած «Բազմա»ի բացառիկին Համար խմբուած եւ պատրաստուած գրութիւնները: Վերջ կը գտնեն անոնք, երբ Հայաստան այցելած բարեկամներու խմբապետ թեանս տրամադրած հայրենի մամուլի թիւերու ն մէջ կը շարուանակենք կարողալ ծաւալուն թէ կարճ ուշադրաւ գրութիւններ, որոնք լուսարձակը կեդրոնացած կը պահեն Արցախի Ազատագրական Պայքարին, արցախահայութեան ճշմարտացի անցուղարձերուն, հայրենի իշխանութեանց օգտակար քաղաքականութեան, բայց մա՛նաւանգ՝ հայրենի այս եղբրքին կեանքի գծով կառուած մնալու ուխտով առնականացած արցախահայութեան մարտունակ սքիին վրայ:

Արցախեան Պաշտպանական ակունքներէն եւ արցախահայութեան գոյամարտի նորագոյն հերոսամարտերէն ծնունդ առած հրապարակագրական թէ գեղարուեստական այս պոսթկուժները, բնականաբար, նաեւ բաց կը պահեն մեր անաւարտ էջերը: Պիտի շարունակենք մօտէն հետեւիլ շուրջ եօթնամասուն տարիէ ի վեր Հայաստանի այս անբաժանելի մասը պեկոծած պարտադիր տագնապին, այն խոր հաւատքով, որ քարեկամ ձեռքեր»ու եւ երբեմնի չեղարայրչներու կողմէ կունակէն անդադար դաշունահարուող հայ ժողովուրդի արժանաւոր զաւակներուն՝ գրազէտներուն, արուեստագէտներուն եւ մասուորականներուն Համամարդկային ու ազգային խոռվքները պիտի նուաճեն գեղարուեստական եւ հրապարակագրական նորանոր ոլորտներ, աւելի եւս Հարստացնելով հայ ստեղծագործ մտքին հարուստ գանձարանը:

Ազգային ու մարդկային իր գիտակցութեան պերճաբոս փաստերով հայ մշակոյթը միշտ նոր ստեղծագործութիւններով օժտած հայ գրագէտին եւ արուեստագէտին Համար, Արցախեան Ազատամարտը ներշնչման անսպառ աղբիւր եւ բաց գիրք է՝ սեւ ու ճերմակ ուսանելի բազում դասերով: Հայաստանեայց գրականութեան արժանի ժառանգորդները, հայրենի թէ արտերկրի մեր գրազէտները, որոնք առաջին իսկ օրէն փաստեցին, թէ տէրն են իրենց կոչումին եւ լիիրաւ ներկայացուցիչները, հայ ժողովուրդի քաղաքակիրթ որազիւն, իրենց մշարորդ խոռվքներէն պիտի շարունակեն ոսկեճուլի ողելչելող նոր ստեղծուժներ, յանուն արդարութեան ազգովին ծառայած մարտունակ հայութեան զիրքերը ամբապնդելով անխոցելի զաղափարական վահաններով, անպարտելի բազմապատկուած ոգիով, հայկեան վճռականութեամբ:

Աւա թէ ինչու «Բազմա»ի էջերը պիտի շարունակեն բաց մնալ, այնքան ատեն որ Արցախի ազատամարտիկներն ու հայ գրազէտները կը շարունակեն մզել հայ ազգի արժանապատուութեան գոյամարտը, անշեղօրէն, անսասան հաւատքով, անանձնական նուիրումով՝ իբրեւ գերագոյն գոհարեութեան ուխտ ու պատգամ եւ դարաւոր աւանդ:

Գ. ՍԱՐԳՍԵԱՆ, Պ. ՄՈՒՐԱԳԻԱՆ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՇԱԻԱՆՔ
Ի ՀԱՅՍ
(ԿԱՄ ԹԷ ԻՆՉՊԷՍ ԵՆ
ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ)**

Բաճուժում լոյս տեսնող «Աղարիյաթ վա ինջասանաթ» («Գրականութիւն եւ արուեստ») շաբաթաթերթի Յունուարի 15ի համարում հրատարակուել է Աղբը- ՍՄՀ ԳԱ ակադեմիկոս Զիա Բունիաթովի «Ճշմարտութիւնը մահ չունի» աղբբնջաներէն ընդարձակ յօդուածը՝ իբրեւ արձագանգ «Գրական թերթ»ի 1987 թ. Օգոստոսի 14ի համարում լոյս տեսած «Պաշտօնական պատասխան» խորագիրը կրող հրատարակման: Ընթերցողին յիշեցնենք, որ «Գրական թերթ»ը փոքրիկ առաջարանով թարգմանաբար տպագրել էր ՍՄՀՄ ԳԱ պատմութեան ինստիտուտի պատասխանը (ինստիտուտի գիրեկտորի տեղակալ Ա. Ն. Սախարովի ստորագրութեամբ) ՀՍՄՀ ԳԱ գրականութեան ինստիտուտի աւագ գիտաշխատող Ա. Մուշեղեանին, որը կիւսակցական վերադաս մարմինների եւ ՍՄՀՄ Միմիստրների խորհրդին առընթեր բարձրագոյն ասեստացիոն յանձնաժողովի ուշադրութիւնը» հրատիրել էր Ֆ. Մամեդովայի «Կնովկանեան Աղուանքի Լադաֆական պատմութիւն եւ պատմական աշխարհագրութիւն» գրքում (Բաքու, 1986) շեյ ժողովրդի պատմութեան բազմաթիւ փաստերի հակագիտական վերլուծութեան ու միտումնաւոր խեղափոխումների վրայ»: Յիշեցնենք նաեւ, որ Ֆ. Մամեդովայի գրքում տեղ գտած գիտական խեղափոխումների մասին մեր մասնագիտական մամուլում լոյս տեսաւ երկու ընդարձակ գրախօսական՝ «Լրաբեր հասարակական գիտութիւնների» ամսագրում (Բ. Յ. Յարութիւնեան. «Նոր բացակայում է գիտական բարեխղճութիւնը», 1987, N° 7, էջ 33-56) եւ «Պատմա-բանասիրական հանդէսում» (Ա. Յ. Յակոբեան, Պ. Մ. Մուրադեան եւ Կ. Ն. Իւզրաշեան. «Կնովկանեան Աղուանքի պատմութեան ուսումնասիրութեան շուրջ», 1987, N° 3, էջ 166-189), երկուսն էլ ուսերէն:

Ահա այս գրքի եւ նրա հեղինակ Ֆ. Մամեդովայի պաշտպանութիւնն է Զ. Բունիաթովի յօդուածի հիմնական նպատակը: Յօդուածագիրը ձեւացնում է, թէ նշուած մասնագիտական գրախօսականներին ծանօթ չէ, եւ ոչ պատահակաձեւով: «Լրաբեր»ի եւ «Պատմա-բանասիրական»ի գրախօսականները շարադրուած են պատմական սկզբնաղբբերների լիակատար օգտագործմամբ եւ նշումներով, ուստի՝ նրանց եզրայանգումները հերքելու փորձը կը նշանակէր դործ ունենալ հենց սկզբնաղբբերների հետ, որոնց խեղափոխումն ու անտեսումն էլ Ֆ. Մամեդովայի գրքի եւ Զ. Բունիաթովի այս յօդուածի ամէնէնից աւելի բնորոշ յատկանիշն է:

Զ. Բունիաթովն ըմբոստանում է՝ ի՞նչ իրաւունքով է աղուանագիտական աշխատանքի մասին կարծիք յայտնում Ա. Ն. Սախարովը, որը կովկասա-

մերժում են «Աղուանքի քաղաքական կարգի», «աղուանական մշակոյթի» եւ ուղղակի «աղուաններ» անուան տակ հանդէս եկող բնակչութեան դոյութիւնը: Մնում է խորհուրդ տալ Ջ. Բունիաթովին մէկ անգամ եւս ընթերցել մասնագիտական գրականութիւնը, ըստ որի «աղուանից միասնական ազգութիւն գոյութիւն չի ունեցել», որ «աղուաններ» անուանումը հաւաքական է եղել այդ ազգաբնակչութեան համար» (առաւել հանգամանայի քննութիւնը ընթերցողը կարող է գտնել Ա. Յակոբեանի «Ալլամիա—Աղուանքը յումա—լատինական եւ հիմ հայկական աղբիւրներում» գրքում, Երեւան, 1987, ռուսերէն): Այս է արդէ գիտական տեսակէտը, ընդ որում՝ Բունիաթովի թուարկած գիտնականները դրա հակառակը ո՛չ գրել են, ոչ էլ, առաւել եւս՝ ակացուցել: Յնդային էթնոսների քաղաքական, լեզուական, դասնական, մշակութային համախմբման պրոցեսները կարող են եւ շատ արագ իջնակական ակնյի բարձր մակարդակի՝ ազգութեան առաջացմամբ եւ կանգ առնել մետաէթնիկական ընդհանրութեան փուլում: Նշենք, որ պատմական սկզբնաղբիւրների մասնագիտական համակողմանի քննութեամբ պարզուած է, որ Աղուանից թաղաւորութեան (Կուրի ձախափնեակում, մ.թ.ա. I — մ.թ. V դդ.) «աղուաններ» անունով օտար սկզբնաղբիւրներում յայտնի բնակչութիւնը, որն ըստ Ստրաբոնի՝ բաղկացած էր 26 ցեղերից, իր համախմբման ընթացքում կանգ առաւ հենց մետաէթնոսի փուլում, չվերածուեց միասնական էթնոսի՝ իր միասնական ինքնագիտակցութեամբ ու «աղուաններ» ինքնանուանմամբ, ուստի՝ «աղուաններ» անունը մնաց հաւաքական այսանուանում, չվերածուեց էթնոսի (տերմինի՝ ազգաբնական արդէ գիտութեան ընդունած նշանակութեամբ): Եւ ահա, փորձ է կատարում օգտագործել խնդրի բարդութիւնը (մասնաւոր աերմիւնների օգտագործման խտունչիթը) Աղուանքում բնակուող 26 ցեղերին կազմաւորում էթնոս յայտարարելու համար (նման շփոթի մասին մանրամասն գրում է Յու. Վ. Բրովկէյը իր «Յօդուածներ՝ էթնոսի տեսութիւնից» գրքում, Մոսկուա, 1983, էջ 7-22):

Գիտութեան համար ինչո՞ւ է կարեւոր աղուանների էթնիկական համախմբումութեան աստիճանի որոշումը. այս իրողութեան հետ են կապուած աղուանական ցեղերի հետագայ ճակատագրի ճշգրտումը եւ նրանց հարեւան ժողովուրդների էթնիկական պատմութեան բազմաթիւ հարցեր:

Մ. թ. 428 թ. Անդրկովկասին տիրացած Սասանեանները վերացրին Մեծ Հայքի թագաւորութիւնը եւ ստեղծեցին մարզպանութիւններ: «Աղուանից» մարզպանութեան մէջ նրանք մտցրին ո՛չ միայն Բուն Աղուանքի տարածքը Կուր գետի ձախափնեակում, այլեւ՝ վերացուած Հայոց թագաւորութեան երկու մարզերը՝ Ուտիքը եւ Արցախը Կուրի աջափնեակում: Սկզբնապէս միայն Կուրի ձախափնեակին տրուած «Աղուանք» անունը մարզպանութեան վարչա-քաղաքական ամրապնդմանը զուգընթաց տարածուեց նաեւ աջափնեայ հայկական շրջանների վրայ, իսկ այդ տերմինն ստացաւ նոր՝ վարչական իմաստ: Մինչեւ 8րդ դ. կէսերը այդ մարզպանութեան վարչական ու եկեղեցական կենտրոնները գտնուում էին բուն աղուանական ձախափնեակում, իսկ այնուհետեւ տեղափոխուեցին հայկական աջափնեակ՝ Պարտաւ քաղաքը: Մարզպանութեան էթնիկական բաղադրիչների միջեւ ընթացած էթնիկ մերձեցման պրոցեսների հետեւանքով նրա աջափնեակի հայ բնակչութիւնը ո՛չ միայն չկորցրեց իր էթնոլեզուական դիմագիծը, այլեւ, ընդհակառակը, իր լեզուն եւ մշակոյթը որոշակիորէն տարածեց ձախափնեայ բուն աղուանական շրջաններում: Այսպիսով, մարզպանութեան ստեղծումն ու վարչական ամրապնդումը յանգեցրեց մի կողմից Կուրի ձախափնեակի բուն աղուանական ցեղերի հայացմանը, միւս կողմից՝ Կուրի էթնիկապէս հայկական աջափնեակի

վրայ «Աղուանք» անուան տարածմանը: Տերմինի այս երկնիչութեան վրայ է խաղում Ֆ. Մամեդովան՝ Զ. Բուենիաթովի նուազակցութեամբ:

VII դարից ի վեր բուն աղուանական ցեղերի մէջ սկսեց տարածուել իսլամը, եւ աղուանական մետաէթնոսի բաղադրիչ մասերը սկսեցին զարգանալ նոր էթնիկական պրոցեսներէ ուրոտում: Այսօր նրանց ուղղակի յետնորդներն են Հիւսիսային Ազրբեջանի եւ Հարաւային Դաղստանի՝ լեզգիական լեզուախմբի լեզուներով խօսող բազմաթիւ մեծ ու փոքր հանրութիւններ՝ սուխները, լեզգիները, թարասարանցիները, ծախսուները, կուխները, բուշուլցիները, հինալուղցիները, եւայլն: Միեւնոյն ժամանակ, հայացած, վրացիացած եւ մահաձեղականացած (պարսկալեզու դարձած) բուն աղուանական ազգաբնակչութիւնը աղուանական մշակոյթի ժառանգորդներ դարձրեց նաեւ Կուրի ձախափնակէ հայերին, վրացիներին եւ թաթերին:

XI—XIII դդ. նշուած էթնիկական ձեւաւորումները փաստօրէն ոււարուած էին, երբ Առաջւար Ասիայում հոծ զանգուածներով սկսեցին յայտնուել թուրքալեզու ցեղերը: XIV—XV դարերից սկսած նրանց լեզուն սկսեց տարածուել (որպէս դաւանական բազայի վրայ էթնոմերձեցման արդիւնք) նաեւ երկրամասի մահաձեղական ոչ թուրքական ծագման բնակչութեան մէջ: Այդ նրկու դաւանական եւ լեզուական հիմքերի վրայ Արեւելեան Անդրկովկասում եւ Հիւսիս-արեւմտեան Իրանում ընթացաւ այսօր աղբբեջանցի կոչուող էթնոսի համախմբումը:

Այսպիսով, կազմաւորուող ազրբեջանցի էթնոսի կազմի մէջ մտան ո՛չ միայն նրան հիմնական բաղադրիչ թուրքական ցեղերը, այլեւ՝ մահաձեղական պարսիկներ, շրտերի, թաթերի, թալիշների մի մասը, մահաձեղականացած հայերը, վրացիներն ու երբեմնի բուն աղուանական հայացած, վրացիացած ու պարսկացած ազգաբնակչութեան հատուածները, ձեւաւորուող ազրբեջանական մշակոյթի գանձարանը ներմուծելով իրենց նախկին էթնոսների մշակոյթների բազմաթիւ տարրեր: Ի յիշեցումն այս ամէնի, ՄԱՀՄ ԳԱ պատմութեան ինստիտուտի պաշտօնական պատասխանի մէջ ասուած է. «սովետական երեք ակաւաւոր գաղտնարանների (Ա. Պ. Նովոսելցեւ, Վ. Տ. Պաշուսո, Լ. Վ. Չերեպնիմ) գրքում նշուած է, որ թուրքական էթնիկական տարրի ներթափանցումը Անդրկովկաս մինչեւ XI դարը եղել է աննշան»: Այս կապակցութեամբ Զ. Բուենիաթովն իրեն հերթական անգամ միամիտ է ձեւացնում եւ տարակուսում, թէ ինչու է ասուած այս միտքը, «չէ՞ որ Ֆ. Մամեդովայի գրքում թուրք էթնոսի պրոպիմները ամենեւին ուսումնասիրութեան տարկայ չեն»: Նա պարզապէս փորձում է թաքցնել Ֆ. Մամեդովայի (եւ իր) թերեւս զլխաւոր կանխադրոյթը, ըստ որի՝ ազրբեջանցի ժողովրդի կազմաւորումը նշանակում է պարզապէս իր վին կազմաւորում էթնոս աղուանների թուրքալեզուացում ու անուանափոխում, ուստի՝ Ազրբեջանին համապատասխանում է Աղուանքը: Գրքում Աղուանքը կոչոււմ է պարզապէս «պատմական Ազրբեջան» եւ ցոյց է տրոււմ, որ «աղուանական ազրբեջանական հողերը» անհրաժեշտ է պաշտպանել «սուրբ կտիւ» հայ եւ վրացի դիւնականների սոսնձգութիւններէ»:

Զ. Բուենիաթովը յաւակնում է «վերապացուցել» Ուտիբի ու Արցախի (իր մօտ՝ Լեւոնային Ղարաբաղի)՝ բոլոր իմաստներով աղուանական լինելը: Նրա ապացուցման եղանակը ամենեւին էլ յունահռոմէական, հայկական, բիւզանդական, արաբական եւ այլ սկզբնաղբբերների տեղեկութիւնների նոր բիւզանդական, արաբական եւ այլ սկզբնաղբբերների տեղեկութիւններին նոր քննութիւնը չէ: Նա դիմում է «հնգիւնակութիւնների յղելու» եղանակին: Եւ որպէս պատասխան ՄԱՀՄ ԳԱ պատմութեան ինստիտուտի կարծիքի, «բնակ-

չութեամ աջափնեայ մասը հայացուած է եղել առնուազմ V դարում» արտայայտութեանը յղում են Յ. Օրբելու 30ական թուականների երկու յօդուածը: Ի դէպ, Յ. Օրբելին նույնպէս պնդում էր աղուանների բազմացեղութիւնը եւ ամենեւին փորձ չի արել ապացուցել կուրի անփնեակում նրանց առկայութիւնը XII դարում: Բարեխիղճ լինելու դէպքում՝ Բունիաթովը իր իսկ յղած պարբերութիւնների արանքում կարող էր կարգաւ: «Աղուանները քաղաքական իմբնություններ կորցրել էր դրանից (իմա՝ XII դարից — Հեղինակներ) շատ անելի առջ, եւ եթէ Յրա վաղեմի անունը այս կամ այն ձևով տակաւին յիշատակուէ է այս (իմա՝ XII դ. — Հեղինակներ) դարաշրջանում, ապա սակ իրրեւ վերապրուէ՝ իրական Ոչանակութիւնը կորցրած տիտղոսների կազմում» («Ղնտիր երկեր», 1963, էջ 347): Կուրից հարաւ վաղ միջնադարում աղուանական ցեղեր փնտելու Յ. Օրբելու անսակէտը միմիայն իր ժամանակի, այն էլ չափազանց ընդհանուր մտեցման արգասիքն է, ուստի՝ դիտութեան այսօրուայ հիմնաւորուած եզրակացութիւնը «հերքել» Յ. Օրբելու իսկապէս մեծ հեղինակութեամբ՝ անկարելի է ու անարդարացի:

Ուտիքի եւ Արցախի մշտապէս աղուանական լինելն այսպիսի փայլուն եզանակով «ապացուցելուց» յետոյ, Ձ. Բունիաթովին, ի հարկէ, ոչինչ չի խանդարում բացազանչելու: «Պետք է ուղղակի անգէտ լինել յայտարարելու համար, ինչպէս Ա. Ն. Սախարովը, թէ Միխայիլ Գօշը, Դաւիթն ու Կիրակոս Գանձակեցի... աղուանական պատմիչներ չեն: Այն դէպքում, երբ այս կապակցութեամբ բաւական է ծանօթանալ Յ. Ա. Օրբելու, Տ. Ի. Տեր-Գրիգորեանի աշխատանքներին»: Թէ Տէր-Գրիգորեանը, որ օրուայ հետազոտողն է՝ Բունիաթովին է յայտնի, բայց իրօք պէտք է անգէտ լինել Յ. Օրբելու բերուած վկայակոչութիւնը կարգաւց յետոյ նրա «սակ իրրեւ վերապրուէ» յիշատակած «աղուանը» XII դարում էջնիկապէս աղուան ընկալելու համար:

Առեղծուածային է այն սկզբունքը, որով Բունիաթովն ու նրա դործընկերները միջնադարեան դործիչների էջնում շակութային պատկանելութիւնն են որոշում: «Խուրք» էջնոյնիմը իրրեւ քամահարանք օգտագործող, բացառապէս պարսկերէն ստեղծագործող եւ քրտուհի մօրից ծնուած Նիդամուն, իր ասորի մօրը պարսկերէնով ներդրող Ութանուն նրանք աղբիւրնական եւ քանստեղծներ են ճանաչում, բայց մերժում են Գոչի, Գանձակեցու եւ միւսների հայկականութիւնն ընդունել, թէեւ նրանք ո՛չ միայն բացառապէս հայ լինելով են ստեղծագործում, այլեւ տասնեակ անգամ վկայում են իրենց հայ լինելն ու Հայաստան հայրենիք ունենալը: Չենք կարծում, թէ մշակութային այս մերօրեայ գերեմարութիւնն անցեալը հարստացնելու կարելի եղանակ է:

Ի դէպ, այս յօդուածում էլ Ձ. Բունիաթովը չի խորշում աղբիւրագիտական նիւթը կեղծելուց: «Մոտանալով» Մովսէս Կաղանկատուացու տեղեկութիւնը Պարտաւ քաղաքում ուռւ (առւզիկ) զինուորների նկատմամբ անյաջող մահափորձի կազմակերպման մասին, նա գրում է, թէ ճոռուներն այնտեղ ուղղակի շատ կիսաեհաս մրգեր կերան եւ դրանից յետոյ ջուր խմելով, քունաւորուեցին ու զոհուեցին»: Ով-ով, բայց Ձ. Բունիաթովը պիտի իմանար, որ մրգերի փաստը յիշատակող Իրն Միքայելայի (X-XI դդ.) եւ Իրն ալ-Ասիրի (XIII դ.) տեղեկութիւնների համաձայն՝ այդ բանը տեղի է ունեցել ուռւական ջոկատի՝ ոչպի Մարաղա կատարած արշաւանքի ժամանակ, Մարաղայի մտերբում, եւ ոչ թէ Պարտաւում (այդ մասին անհրաժեշտ է մէկ անգամ եւս կարդալ գոնէ Ն. Եւ. Պուլոյի [ոռուներէն աղբիւր — «Բ.»³] ամփոփիչ յօդուածը՝ «Վիզայնտիսկի վրէմնիք»ում (Հ. 14, 1968, էջ 138-147):

Բայց մենք ի դուր ենք աղբիւրների իմացութիւն կամ ստուգապատում վկայակոչութիւն պահանջում, երբ Ձ. Բունիաթովը ի զօրու է այլափոխելու

մեր օրերում ուսերէնով հրապարակուած աշխատութեան բուն իմաստը: Ա. Փերիխանեանը մասնաւոր յօդուածով ապացուցել է («Առաջաւորաւորական ժողովածու», II), որ եթէ Կորիւնի տեղեկութիւնն անգամ չունենայինք Մաշտոցի ստեղծած այբուբենների մասին, ապա այդ այբուբենների ուսումնասիրութիւնը դարձնաւ պիտի յանգեցնէր Կորիւնի նոյն վկայութեանը: 2. Բուսնիաթովը լիովին չըլի է այս եզրակացութիւնը եւ իր ընթերցողին մատուցել նրա հակոտնեան՝ իբր Ա. Փերիխանեանը ապացուցել է, որ Մաշտոցը առընչութիւն չունի վրաց եւ աղուանից այբուբենների հետ:

«Գրական քերթ»-ի առաջաբանում բերուած էր Ա. Մուշեղեանի նամակի այն հատուածը, ուր նա լիովին արդարացի կերպով նշում է Յ. Մամեղովայի գրքում տեղ գտած Յ քարտէսների՝ պատմական որեւէ հիմք չունենալը եւ փաստորէն 1944 թ. Ստամբուլում, այսինքն՝ Հիտլերեան Գերմանիայի դաշնակից թուրքիայում, լոյս տեսած «Ռայսի» եանրագիտարան»-ի կերպովը հատորում տպագրուած «Միացեալ Աղրբեջան»-ի քարտէսից պատճենուած լինելը, որն ընդգրկում է Սովետական Հայաստանի տարածքը՝ ընդհուպ մինչեւ Սեւանայ լճի աւազանի կէտը: 2. Բուսնիաթովն անվերապահօրէն պաշտպանութեան տակ է առնում Յ. Մամեղովայի բոլոր քարտէսները եւ յայտարարում է, թէ դրանք գրքի մէջ են մտել ՍՍՀՄ ԳԱ պատմութեան ինստիտուտի կազմակերպած Կովկասի ժողովուրդների պատմական աշխարհագրութեան խնդիրներին նուիրուած խորհրդակցութիւնում (1983 թ. Մայիսի 4-8) հաստատուելուց յետոյ: Այդ յայտարարութիւնը արուած է անտեղեակ ընթերցողին մոլորեցնելու նպատակով: Նշուած խորհրդակցութեանը մասնակցող հայ եւ վրացի մասնագէտները (Ս. Յրմեան, Բ. Յարութիւնեան, Գ. Մուխիշվիլի, Գ. Բերձենիշվիլի) ընդհակառակը, կտրականապէս մերժել են Յ. Մամեղովայի ներկայացրած քարտէսները՝ պահանջելով հանել սահմանագծերը:

Ս. վերջապէս, 2. Բուսնիաթովը յայտարարում է. «Ռայսի հանրագիտարան»-ի էարտէր կազմուած է թուրքիայում ոչ թէ 1944, այլ՝ 1949 թուականին եւ թուրքիան, սկսած 1944 թ. ամրանից, դադարեց օգնութիւն ցոյց տալ հիտլերեան Գերմանիային եւ հակուելով Անգլիայի ու Ֆրանսիայի հետ դաշինքի, 1945 թ. Փետրուարի 23-ին Գերմանիայի հետ դիւանագիտական յարաբերութիւնները խզելով՝ պատերազմ յայտարարեց Արմէն: Ուրեմն պարզուած է, որ 2. Բուսնիաթովը իր պաշտպանութեան տակ է առնում «ոչ Ֆաշիստական» թուրքիայում լոյս տեսած «Միացեալ Աղրբեջան»-ի քարտէսը՝ Սովետական Հայաստանի տարածքի մօտ կէսի ընդգրկմամբ:

Սակայն այս էլ բոլորը չէ. նա մի հարց էլ է տալիս. «Ինչո՞ւ Ալբերտ Մուշեղեանը չի ցանկացել նայել Աղրբեջանի էարտէրը, որը լոյս է տեսել «Ռայսի» հանրագիտարան»-ի ֆրանսերէն (հ. 1, էջ 196) կամ անգլերէն (հ. 1, էջ 198) լեզուով տարբերակներում: Այդ հանրագիտարանում Կովկասը ոչ մի կապ չունի Հայաստանի հետ, եւ Հայաստանը տեղադրուած է Արաքսից շատ հարաւ, այդ գետի Կարաչայ վտակից շատ արեւմուտք: Ահա թէ որն է հայ ժողովուրդի բնակութեան իսկական տարածքն ըստ 2. Բուսնիաթովի: Իսկ աւելի ճշգրիտ: Դա էլ կարող ենք իմանալ, որովհետեւ քիչ յետոյ յօդուածագիրը հետեւեալ խորհուրդն է տալիս. «Բանի որ Ա. Ն. Սախարովը քրիստոնէական արարողութիւնների մասնագետ է, եւ նրան խորհուրդ եմ տալիս հայերէնին արարողութիւնների մասին, որպէսզի վերջինս Ազաթանգեղոսի մօտ նրա տիրապետող մի մարդ գտնել, որպէսզի վերջինս Ազաթանգեղոսի մօտ նրա համար կարգայ, թէ որտեղ եմ մկրտել հայերին, թող իմանայ, թէ որտե՞ղ, եւ՞ր գտնուած է կատարուել այդ արարողութիւնը»: Այդ գետն Արածանին է, ո՞ր գտնուած է կատարուել այդ արարողութիւնը: Այդ գետն Արածանին է, այսօրուայ Մուրադուան Արեւելեան թուրքիայում կամ Արեւմտեան Հայաստանում, որտեղ թուրք ջարդարները ոչ այնքան վաղ անցեալում բնաջնջել

կամ արտաքսել են ողջ հայութիւնը: Ահա թէ կովկասի փոխարէն որտեղ պիտի լինէին հայերն ըստ դրկից ժողովրդի ակադեմիկոսի կարծիքի: Որհետեւ տալուց առաջ վատ չէր լինի, եթէ յօղուածագիրը ինքն այդ ֆայլին դիմէր եւ տեղեկանար, թէ որն էր հայոց թաղաւորի նստավայրը, որտեղից էր մեկնել եւ ուր էր վերադարձել Գրիգոր Լուսաւորիչը: Ձ. Բունիաթովը չի հաշուում ո՛չ միայն պատմական, այլեւ՝ Սովետական Հայաստանի գոյութեան փաստի հետ: 1980 թ. նա հրատարակեց Ալ-Հուսայնիի «Տեղեկութիւններ սելմուկեան պետութեան մասին» երկը: Այստեղ պատմում է, թէ Սաֆիդ-շահը (Թեթրիցի-խէ) եւ Ախալկալան (Ախալքալաք) գրաւելուց յետոյ Ալփ-Արալանի բանակը ձեռնամուխ է լինում մօտակաջրում զտնուող «մէկ այլ հզօր բերդին» գրաւման (գլ. 13): Թարգմանիչը չի վարանել ծանօթագրել, թէ Սաֆիդ-շահը «զընդրում էր Դեբեդ գետի (Կուրի վտակ) ստորին հոսանքում, Չալդր լիճից արեւելք, Կարսից Ախալքալաք տանող ճանապարհին» (էջ 190, ծան. 10): Դժուար չէ նկատել, որ ակադեմիկոսի կամքով Դեբեդ գետը փոխել է իր հունը եւ գաղթել Սովետական Հայաստանից: Այդ զեռ ոչինչ. «Մէկ այլ հզօր բերդը» նոյնացնելով Լոռէ ամրոցի հետ, Ձ. Բունիաթովը ծանօթագրում է, որ այն «գտնւում է վրացական ՍՍՀ Բորչալուի շրջանի այժմեան Ջալալ-օղլի գիւղի մօտ» (ծան. 15): Այստեղ ամէն բանի մէջ ոչ այնքան անգիտութիւն, որքան հետեւողական կեղծիք կայ. ծանօթագրողը չէր ուզենայ, որ երբմեկ Ջալալ-օղլի գիւղը այսօրի պատիւ Ստ. Շահումեանի Ստեփանաւան կոչուէր եւ քաղաք դառնար (նաեւ չընկենտրոն), որ ցարական շրջանի «Բորչալուի ուէղղը» վերանար, Լոռէ բերդն էլ Սովետական Հայաստանում զտնուէր: Թող ներքոյի հարցնել՝ ի՞նչ տարբերութիւն կայ ակադեմիկոս Ձ. Բունիաթովի եւ պանթօքրիստ այն մասնագէտների միջեւ, որոնք այսօրուայ սուրբատական քարտէսի վրայ «Լենինական»ի փոխարէն «Գիւմրի» են գրում, «Սեւան»ի փոխարէն՝ «Գոգչա»: Մենք երկար ժամանակ անուրջ ենք համարել եւ կարեւորութիւն չենք տուել այս եւ նման բարբալանքներին, իսկ Ձ. Բունիաթովը ոգեւորուել է եւ ծաւալել էքսպանսիան: Բոլորովին վերջերս հրատարակած Շիրաբերդերի «Ուղեգրութիւններ»ի բնագրից՝ (Բաքու, 1984), «սխալաստիկ հատուածները կրճատելու» պատրուակով նա թեթեւ ձեռքով սուս ու փուս գուշս է նետել հայերին վերաբերող բազմաթիւ կարեւոր վկայութիւններ, մասնաւոր, եթէ դրանք չեն համապատասխանում Հայաստանի պատմութեան ու աշխարհագրութեան իր ունեցած պատկերացումներին: Ահաւասիկ մէկ օրինակ. «Հայաստանի մասին» գլխից չբացել է հետեւեալ «սխալաստիկան».

«Թեւեւ այդ եարթավայրը (խօսքը Դաշտային Լարարաղի մասին է — հեղինակներ) գտնւում է Հայաստանում, այնուամենայնիւ այն հեթանոսներին է պատկանում, որոնց հայկական գիւղերը հարկադրուած են տուրք վճարել: Հայերը ինձ միշտ լաւ էին վերաբերում, քանի որ ես նեմեց էի, իսկ նրանք՝ խիստ հակուած են դէպի նեմեցները՝ ինչպէս նրանք մեզ կոչում են: Նրանք ինձ սովորեցնում էին իրենց լեզուն եւ ինձ տուեցին իրենց Հայր մերը»: Աւելի՛ն. այս ակադեմիկոս յօղուածագիրը վաղուց եւ հետեւողականօրէն օգտուում է գրագողութեան «պտուղներից»: Տարիներ առաջ նա թարգմանեց Հիւզնի յօղուածը կաղանկատուացու ժամանակագրութեան մասին եւ հրատարակեց իր անուշո՛ղ, յաղողութեամբ սեփականեց Գօշի «Աղուամից ժամանակագրութեան» Դովաթի շատ ծանօթագրութիւններ՝ անգլերէն բնագիրը յաճախ ճիշտ չհասկանալով: Դաւիթ Շիրաբարի որդիներից մէկի անունն աւելացնելով՝ տէր կանգնեց պրոֆ. Հաղի Հասանի կազմած «Ճանաչարանական աղիւսակին», ինչպէս որ իւրացրեց նրա իսկ պատրաստած Շիրվանիի քասիդի տեքստը, եւ այլն: Յաւալի է, գիտութեան տիրողուսուր ներկայացուցչին անվայել, բայց

փաստ: Այս ամէնից յետոյ կարելի՞ է պահանջել, որ Զ. Բունիաթովը գէթ իրեն առարկող հեղինակների անձը չվիրաւորի: Կաղանկատուացու ուսերէն թարգմանութեան աշխատատիրոջ, Մատենադարանի աւագ գիտաշխատող Շ. Սմբատեանին ակադեմական հանդէսում նա կոչեց շոմն կղերական», «Գրական թերթ»-ի յօդուածագրին՝ «միջակ քանասէր», եւսյլն: Ժամանակը չէ՞, որ Զ. Բունիաթովը սկսի քաղել իր ցանած որոմի պտուղները:

Զ. Բունիաթովը հակուած է խեղաթիւրելու ո՛չ միայն պատմական սկզբնաղբիւրները, այլեւ անգամ այսօրուայ մամուլը: Յօդուածի յետագրութեան մէջ նա յղում է Փրանսիական կոմկուսի «Իւմանիտե» թերթին ու գրում. «Փարիզում, Վոստրկոմսոհնետայ» հիւրանոցում Ա. Գ. Ադամբեգ-եանը դաշնակցական էլիտայի առջեւ փորձում էր ապացուցել Ղարաբաղը Ադրբեջանական ՄԱՀից անջատելու օրինակները, եւ նրա խօսքը, չարամիտ ելույթից քացի, ոչինչ չարժէ: Այն, որ «Իւմանիտե» նշած եւ իրականում վերակառուցման մասին իր գիրքը Փարիզ տարած Ա. Գ. Ադամբեգեանի հետ հանդիպած հայ համայնքի ներկայացուցիչներին Զ. Բունիաթովը յայտարարում է դաշնակցականներ, դա հաւանաբար նրա քաղաքական իւրայատուկ միտումնութեան արգասիքն է: Անհասկանալի է, սակայն, թէ ինչպէ՞ս է նա կարողանում լուսանկարով կուսակցական պատկանելութիւն որոշել:

ՄԱՀՄ ԳԱ պատմութեան ինստիտուտի պաշտօնական պատասխանի վերջում ասւում է, որ Ֆ. Մամեդովայի գիրքը չէի մպստում անդրկոմկուսեան երկու համրագետութիւնների՝ Հայաստանի եւ Ադրբեջանի պատմաբանների եւ հասարակութիւնների փոխըմբռնմանը: Այս արդարացի գնահատականը լիովին վերաբերում է նաեւ Զ. Բունիաթովի գործերակերպին ու յօդուածին:

ԳԱԳԻԿ ՄԱՐԳՍԵԱՆ
ՀՄՍՀ ԳԱ ակադեմիկոս

ՊԱՐՈՅՐ ՄՈՒՐԱԿԵԱՆ
պատմական գիտութիւնների դոկտոր

Յ.Գ. «Գրական թերթ»-ի խմբագրութեան պատուերով գրուած սոյն յօդուածը տպագրութեան էր ներկայացուել ստեփանիթեան ողբերգութիւնից շաբաթներ առաջ: Այդ միջոցին Զ. Բունիաթովը ո՛չ միայն քանապոհովական մեղադրի արժանացաւ, այլեւ աներածից իր արեւելիկ շրջանառութեան մէջ դնելի իր յօդուածի ռուսերէն տարբերակը եւս («Գրական թերթ», 1988, թիւ 27):

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1. — Մոյսէյ Կալամկատսկիի «Ակադեմիկները պատմութիւնը» իրեն արելիք նախախնայքներով Ալպանիայի ընկերային կառոյցի:
2. — Մոյսէյ Կալամկատսկիի «Ակադեմիկները պատմութիւնը» աղբիւրների ուսումնասիրութեան ասպեկտում:
3. — Իկարի յոյների վրայ երկրորդ արշաւանքի եւ Պերտայի վրայ ռուսների արշաւանքի քուսկանի մասին:

ԻՄ ԱՐՑԱԽ

Մանկութեանս կապոյտ երագ, իմ Արցախ,
 Մանկութիւնից՝ շուքդ վրաս, իմ Արցախ,
 Հագար տեսակ հմայք լինի աշխարհում,
 Գու ինձ համար հմայք անհաս, իմ Արցախ:
 Փայռի մեղքից բխած զանգակ ջուր ես դու,
 Ձմրան ցրտին ջերմացրնող հուր ես դու,
 Հագար ծաղկից քամուած անուշ բոյր ես դու,
 Անուշ բոյրով միշտ անպակաս, իմ Արցախ:
 Սուփրի մէջտեղ դրած յուսին-հաց ես, ջա՛ն,
 Ազնիւ ու ջերմ սրտի մեան բաց ես, ջա՛ն,
 Շողուշաղով, վարդաջրով բաց ես, ջա՛ն,
 Երգդ՝ զանգակ, լեզուդ՝ այմագ, իմ Արցախ:
 Մտո ու ծաղկիդ սրտեր թռվող բոյրը՝ շա՛տ,
 Անտառներիդ զանգակ աղբրի գուռը՝ շա՛տ,
 Ծարաւ սրտին քաջ օգնական բուռը՝ շա՛տ,
 Միրհաւի կանչ, եղնիկի նագ, իմ Արցախ:
 Փռք ես թէ մեծ, ինձ համար դու մայր ես միշտ,
 Հագար ծայնով կանչող անուշ վայր ես միշտ,
 Աշխատատէր, ջաջակտրով ա՛յր ես միշտ,
 Աղուհացով միշտ անպակաս, իմ Արցախ:
 Արդարութեան ամուր շաղախ, հիմն ես դու,
 Երգիչներիդ քնարի ոսկի սիւն ես դու,
 Սերուն սասց՝ որտեղ լինեմ, ի՛մն ես դու,
 Եղբ՛ւ ես, կա՛ս ու կը մնա՛ս, իմ Արցախ...

*

ԵՐԲ ՂԱՐԱԲԱՂ ԵՆ ԱՍՈՒՄ

Երբ Ղարաբաղ եմ ստում, դէպի ձմեռը թե՛ժուող
 Տարիս եօթը տարով բախնում եմ կարծես,
 Ես այն լեռներն եմ տեսնում՝ յաւերժական ու անկոր,
 Որոնց ուրցի բուրմունքը ինձ բայասան է դարձել:

Այնտեղ, հողի տաք կրծքին, առանց յանգի ու վանկի
 Առաջին երգս եմ գրել պապենական արօրով,
 Այնտեղ մի պարզ ջարի տակ պապիս շիրիմն է անգին,
 Փռքիկ այդ հողն է ծնել, դարձել ինձ մայր օրորոց:

Երբ Ղարաբաղ եմ ստում, եթէ հոգս էլ ունենամ,
 Մէկ է... հոգսն իմ անյապաղ անհետանում է կարծես,
 Ես այն սարերն եմ տեսնում, որոնց բուրմունքն անմահ
 Ի սկզբանէ միւնչ այսօր ինձ ուղեկից է դարձել:

ՍԵՐՈ ԱՐԲԱՂԱՄԵԱՆ

Ռ. ՄԱՐԳԱՐԾԱՆ

«ԻՄ ՅԵՆԱՐԱՆԸ
ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ Է»

Այն, ինչ կատարում է ընդդէմ զորաբանի ժողովրդին, հասնում է փրակառուցման զոչափարեմբին:

Եզրայրների ինտ պրելու: Եղաւ: Եր միանդամայն քնական է, եւ կատարեալ սրգ որոցի կը լինի Լեւոնային Ղարաբաղի միացումը Հայաստանին:

Արզարութի: Են այն է, որ մի ժողովուրդ, որն ուզում է ինքնորոշուի, պէտք է ստանայ ուղղ իրու: ու նոր:

ՎԵՆՈՒՄԻՆ ԿԱՐԵՐԻՆ

Տասը տարի առաջ Հայաստանի գրողներին միութիւնը Եղիշէ Չարենցի ծննդեան 80ամեակի կապակցութեամբ ինձ գործուղեց Մոսկուա՝ Հանդիպումներ ունենալու քանաստեղծի ականաւոր ժամանակակիցների հետ: Նրանցից շատերին՝ Նիկոլայ Տիխոնովին, Սերգէյ Շերվինսկուն, Մարինա Կապուսինսկային, Ալեքսէյ Սուրկովին շարենցեան աղբնութիւններով եւ արդէն Հանդիպել էի:

Գործուղման արդիւնքներն արտայայտուեցին Հանրապետական մամուլում, մասնաւորապէս Վենիամին Կաւերինի խօսքը ապագրուեց «Կոմունիստ» թերթի յոբելեանական համարում:

Պէտք է ասեմ, որ ամէնից «Հայկական յարկը» Վենիամին Կաւերինին էր. կարծես Հայկական օջախ էի մտել. գեղարւեստական կաւարման մէջ ամէնից շատ տեղ եւ Հնչեղութիւն ունէին Հայկական իրերն ու յիշատակները: Իսկ օջախի տէրն

այնպէս էր խօսում. Հայ հին ու նոր գրականութիւնից, ասեա ինքը դրա մասնագէտն էր կամ, ներկայացուցիչը:

Իմ այս այցելութիւնը Վենիամին Կաւերինին թելադրուած էր մեր ժողովրդի ցաւազին զգացումներով եւ ապրումներով: Կրողն ինձ ընդունեց Պերեդելկինոյի իր առանձնատանը, եւ որքան էլ զարմանալի է, այստեղ եւս կային Հայկական «նշաններ»: Այլաստանեակում Մինասի կտան էր՝ Կաւերինի գիմանկարը, աչքի էին զարնում Հայկական խեցեղործութեան եւ դրուագաւարակի նմոշները: Կաւերինը չէր մոռացել մեր առաջին Հանդիպումը...

— Վենիամին Ալեքսանդրովիչ, «Երգ-վեստի» թերթում կարդայով Ձեր, Աւերինցեի եւ Ուլիանովի խօսքը Լեւոնային Ղարաբաղի եւ մրա շուրջը տեղի ունեցող իրազարձութիւնների մասին, հայերիս

հասան արտացառ մտաւորականի ազ-
րումները, այն անհանգստութիւնը, որը
չի կարող չհամակել ինտերնացիոնալիզմի
գաղափարներով սնուած եւ իր արուես-
տով մարդկութեան վեհ իդէալներին ծա-
ռայող ստեղծագործողին:

Իրամիջ յետոյ շրջանառութեան մէջ
մտաւ Սիլվա Կապուտիկեանի մամակը
Էնզիկատիստի թղթակցութեան եեղի-
նակներին...

— Այո՛, զա ինձ յայտնի է:

— Բայց, ինչպէս երևում է, Ղարա-
բաղեան հարցը ո՛չ միայն եեջտ չի լուծ-
ւում, այլև տեղի ու անելի է քարդանում,
տասնամեակներ տեւած ազգային, բարո-
յակամ, մշակութային ու եռզեւոր խտրա-
կանութիւնն այսօր եւս իրեն զգացնել է
տալիս: Իսկ միութեանկան մամուլը շատ
դէպքերում մալուրութեան մէջ է գցում ըմ-
բերցողին: Մասնաւորապէս Սիլվա Կա-
պուտիկեանի մամակից Դու՛՛ք, անշուշտ,
շատ քան պարզած կը լինէ՛ք...

— *Խորականութիւնը եւ Համարում եմ*
յանցագործութիւն, այն պէտք է արմա-
տարի անել, քանի որ դրա կազմակեր-
պիչներն անարժան մարդիկ են, եւ, բացի
այդ, նրանք զուրկ են պետական մտածո-
ղութիւնից: Խորականութիւնը երբեք քա-
րենպաստ արգելներ չի հասցրել: Վնա-
սում է ո՛չ միայն նրան, ով ենթարկւում
է խտրականութեան, այլ նաեւ՝ կիրառո-
ղին:

— Ինչպէ՞ս են կապուած դարաբաղեան
իրադարձութիւնները վերակառուցման
հետ:

— Այն, ինչ հնարաւոր էր 30-50ական
թուականներին, այժմ, հրապարակա-
յնութեան ժամանակաշրջանում, դարձել է
անհնար, եւ այն, ինչ կատարւում է ընդ-
դէմ դարաբաղեան ժողովրդին, հակասում
է վերակառուցման գաղափարներին:

Լեւոնային Ղարաբաղի իրադարձու-
թիւններն աննախադէպ են, եւ պէտք է ելք
գտնել ստեղծուած իրավիճակից. դժ-
բախտաբար, ինքս այդ ելքը մատնանչել
չեմ կարող:

— Որպէս գրող, որպէս նշմարաւ-

թեան եւ արդարութեան ջատագով, ինչ-
պէ՞ս է՞ք մայում Ղարաբաղի հայութեան՝
Մայր Հայաստանի, իր եղբայրների հետ
ապրելու պահանջին, որն անբեւակայելի
արձագանգ գտաւ ողջ աշխարհում եւ ազ-
գային մղձուսանջի մէջ գցեց համայն հա-
յութեանը:

— *Եղբայրների հետ ապրելու ճգնու՛մը*
միանգամայն բնական է, եւ կատարեալ
արդարացի վճիռ կը լինի Լեւոնային Ղա-
րաբաղի միացումը Հայաստանին: Միայն
եւ չեմ հասկանում, թէ այդ ինչու հնա-
րաւոր չէ, եւ ուղղակի գլուխ չեմ հանում
դրանից:

էթերիկական մի Հատուած մայր ժողո-
վրդին միացնելը ամէնից խելամիտն է:
Ես հոգով ամուր կապուած եմ հայե-
րին, ամբողջ կեանքում մտերիմ եմ եղել
նրանց, եւ դառն է ինձ Համար այն դի-
տակցութիւնը, որ իմ հարազատներին
այսպիսի վիրաւորանք է հասցուած: Այդ
վիրաւորանքն ինքս էլ կրում եմ:

— Ինչպէ՞ս ընդունեցի՞ք Սոււգայիթի
լուրը:

— Սարսափով... Թէեւ ողջ իրողու-
թեանը ծանօթ չեմ: Ընդունեցի այնպէ՞ս՝
ինչպէս իւրաքանչիւր մտաւորական, իւ-
րաքանչիւր հումանիտտ, ով ընդունակ է
իրեն տեսնելու մէկ այլ մարդու վիճա-
կում: Ամբողջ արտով կուլի՞ծ եմ ապրում
հեղուած արեան Համար:

— Վեցիսմին Ալեքսանդրովիչ, ես յի-
շում եմ այն պատմութիւնը, թէ ինչպէս է
Ձեզ Ուլիթի իր *«Երկիր Նայիրի»* Նդիշէ
Չարեմցը: Յօդակն քուականներին Դու՛՛ք
մտերիմ էի՞ք մեր շատ մտաւորականների
հետ:

— Գիտէի այդ մարդկանց. սիրում էի,
գնահատում նրանց կանխատեսումներն
ու ստեղծագործութիւնը, նրանց վերա-
բերմունքն իմ հանդէպ եւ, Համոզուած
եմ, նրանք անասելի ցնցումներ կ'ապրէին
այսօր:

— Իսկ ինչո՞վ կարող էիմ օգնել:

— Ոչնչով: Բայց քանի որ տաղանդա-
ւոր էին, կը լինէին հայ ժողովրդի ոգու
առասել ակնասու մարմնաւորողները:

Հայ ժողովուրդը, կորցնելով նրանց, կորցրել է նաև անարդարութեան դէմ պայքարող մարտիկներին, խօսքի վարպետների բողոքի ձայնը, նրանց հիմնաւոր փաստարկներն ու իմաստուն ընդհանրացումները:

— Տասնամեակների քարայկամ տնորը, մշակութային, տնտեսական բռնութիւնները իսկական ազգային աղէտի եզրին էին կանգնեցրել զարարացիներին: Լոնլն ախօր համակերպուել է նշանակում Առյճ իրաւագրկութեան, հալածամքի, վիրաւորամքի եետ եւ...

— Ինքս այդպիսի վիրաւորանքի հետ չէի հաշտուի...: Ձգիտեմ, դիմակալելն էլ վտանգներով յդի է. շարունակել ընդվըզո՞ւմը, թէ՞ զսպութեամբ վարուել: Անհանդուրժողութիւնը նոյնպէս խելամիտ պէտք է լինի: Ես յենում եմ տարբա-

կան պատկերացումների վրայ, իմ յենարանը նշմարութիւնն է, խիղճը, արժանապատուութիւնը, պատիւը, ես համարձակօրէն կարող եմ ասել, որ դրանք դըրսեւորել եմ պատերազմի ժամանակ եւ իմ ողջ կեանքում:

Իմ գլուխը քաղաքապետի գլուխ չէ, գեղապետի գլուխ է, քայց ես պատասխանունեմ. հարցը պէտք է լուծել նշմարտացիօրէն եւ արդարացի: Իսկ արդարութիւնն այն է, որ մի ժողովուրդ, որն ուզում է ինքնորոշուել, պէտք է ստանայ այդ իրաւունքը:

— Ի՞նչ կը մտղթէք Ղարաբաղի ժողովրդին:

— Արիութիւն: Արիութեան կորուստն ամէն ինչի կորուստ է («Դրական թերթ», 1988, թիւ 44):

ՌԱՅԱՅԷԼ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Ռ. ԴԱԻՈՅԵԱՆ

ՆԱՄԱԿ՝ ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ

Սահմանադրական իրաւունքով Լեւոնային Ղարաբաղը պահանջում է ինքնորոշում՝ իր պատմական տարածքի վրայ, պահանջում է մէկ մարդու նման, իբր արեան ու հաւաստի դարուստ կանչում...

Հայկական Եղեռնի խորանջը դրուեց նաեւ Սոսիալիստիկ ճակատին:

Լեւոնային Ղարաբաղը նահանջելու սեղ չունի:

ՌԱԶՄԻԿ ԴԱԻՈՅԵԱՆ

Յարգելի նախագահ եւ նախագահութեան յարգելի անդամներ,
Ողջ հայ ժողովրդի եետ միասին եւ նրա անուկից դիմում եմք ձեզ մեր տարաբախտ ժողովրդի չափազանց կարեւոր մի հատուածի՝ Լեւոնային Ղարաբաղի հարցով, որին, բուն է, գտնէ այս վերջին հինգ ամիսների ընթացքում, դուք պիտի ծանօթանայիք հիմնովին եւ վերջնականապէս, մինչդեռ դատելով մամուլի երապարակումներից ու քարոզաստիճան դեկլարաների թռուցիկ յայտարարութիւններից, իւրաքանչիւր հայ այն տպաւորութիւնն է ստանում, թէ դուք լրիւ անտեղեկ էք հարցին եւ կամ՝ միտումնաւոր ձեւով անտեղեկ էք ձեւանում: Ո՞ւր հաշուին: Ինչո՞ւ: Մասնաւորապէս «Պրաւդա» թերթի՝ դեպքերի առաջին իսկ օրից պրովակացիոն, գրպարտչական ելույթները վաղուց ի վեր հիմք են տալիս դատի կանչելու այդ թերթին, որպէս ո՛չ միայն մամուլի տարրական էտիկան խախտողի, այլեւ որպէս ազգամիջեան արհմահեղութիւններ երահողի, որ, ինքներդ էք հասկանում, արժանի է ամենախստագոյն պատժին: Սակայն մեր կուսակցութեան, կառավարութեան եւ ռուս ժողովրդի հանդէպ մեր անմնացորդ նւիրումածութիւնը մեզ դեռեւս զսպում են այդպիսի քայլերի դիմելու: Մենք բոլորովին չենք հասկանում, թէ ո՞վ եւ ի՞նչ նպատակով փաթաթեց Ղարաբաղի եւ ամբողջ հայութեան վզին «սահմանային վերանւումներ» արտայայտութիւնը, որ հիմա հարցի բոլոր հակառակորդների յօսքի առանցքն է դարձել: Սահմանադրական իրաւունքով Լեւոնային Ղարաբաղը պահանջում է ինքնորոշում՝ իր պատմական տարածքի

վրայ, պահանջում է մեկ մարդու նման, իր արեան ու հաւատի դարաւոր կանչով, եւ դուք էիմնայի գիտե՛ք, որ դա եղել է առանց որեւէ կողմնակի միջամտութեան, բայց այստեղ էլ խեղաթիւրում են փաստերը՝ կրկին խոնարհելով ռուս առաջ:

1921 թուականին Լեռնային Ղարաբաղն ապօրինի ձեռով, Ստալինի անմիջական բռնութեամբ շղթայուել է մահմետական Ադրբեջանին, հեթարկուել է ազգային ու հոգեւոր դիսկրիմինացիայի, կրել է տնտեսական ու մարդկային հալածանքներ, տուել է մարդկային թաւաճանակի կորուստ, եւ այսօր, իր պատմական հողի վրայ նստած, հրապարակայնութեան եւ վերակառուցման լուսաւոր ժամանակներում, շղթաներից յուսահատ ճիզով ազատած իր գլուխը շրջել է դէպի քրիստոնեայ Ռուսաստանը, դէպի իր մայր ժողովուրդը, եւ ի՞նչ է ցոյց տրուում նրան նշումած ու հալածումած ազգերի իրապէս պաշտպանի կողմից: Յանուն ռուս: Մի՞թէ այդ բոլորի նպատակը ազգամիջեան պատերազմ հրահրելն է՝ մինչեւ այն աստիճան, որ ռուս զինուորը աշխարհի աչքի առջեւ զենք բարձրացնի ադրբեջանցու եւ հայի վրայ: Մենք խորապէս համոզուած ենք, որ ՍՍՀՄ Գերագոյն Խորհրդի եւ ՍՍՀՄ կառավարութեան հովանու տակ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ինքնորոշման հարցը դրականապէս լուծելու դեպքում միայն Ղարաբաղն, ապահիւնելով իր վերջերը, կը կարողանայ իսկական բարեկամութեան ուժ գտնել իր մէջ մեր երկրի բոլոր ազգերի, այդ թւում՝ եւ ադրբեջանցիների հետ:

Հայկական Եղեռնի խորանը դրուեց նաեւ Սումգայիթի ճակատին: Իբր դադարեցուած կեղծ դատավարութիւնը հիմա շարունակուում է գաղտնի, առանց մամուլի հրապարակման: Այդպէ՞ս պիտի վարուի հրապարակայնութեան դրօշակակիր մեր երկիրը: Ո՞ւմ շահից նյնելով: Զե՞ որ հայ ժողովուրդն ամբողջ հոգով տագնապում է հրապարակայնութեան ու վերակառուցման նպատակաւորի համար: Լեռնային Ղարաբաղը նահանջելու տեղ չունի: Մենք խնդրելով պահանջում ենք, որ ձեր բարի կամքը հետեւի արդարութեանը եւ ստատար կանգնի նրանց:

ՌԱԶՄԻԿ ԳԱՒՈՅԵԱՆ

Երեւան, 29 Յունիսի 1988 թ.

Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԱՐՑԱԽԵԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

Տանտեսակներ շարունակ Սրբապետ Վրթոյի մեծ ստանայու փառան իսկ Ազգրեղանի գնկաժարութեան հողմից պիտուած էր, մեզմասց, որպէս որինպանցութիւն եւ լուս հրաման անվասաւութեան ու հասկանի որպէսպատանկում լրջափակելու երիտասարդ մասնագէտները որեւէ առաջիազացում, որեւէ սակցազործակոն նախամեծութիւն:

Ինչոր լաս նուրբ բան փչուեց մարդկանց հոգիներում, թե՛րեւս, բնութեան մեծ՝ համակեցութեան կանոնը, տեղը զինկում որսափին: Այս՝ ամենասարսփակիւն այս պատմութեան մէջ մարդկանց սարսփն է:

ԱՎԱՐԿ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ասում են՝ նահանջ տարին դժուար տարի է: 1888ը... Քանի հարիւր հազար կորստի յիշողութիւն՝ ծննդավայրի, տունի, ազգի, սերնդէ սերունդ փոխանցուած, զուամբուեց իրար ու սրտի նոյն տրոփիւնում, արեան նոյն կանչում երեւանցիներին (ինչո՞ւ միայն նրանց, ընդորին) 1888ի Փետրուարի 20ին դուրս բերեց իրենց յարմարուածութեան պատեաններից, իրենց տներէ ապահով պատերից, փողոցների անվթար անցուղարձի խաչմերուկներից, մայթերից՝ դէպի ինքնարուխ մղումով ստեղծուած մի հաւաքատեղի, դէպի ասպարէզ, ուր ժողովրդի հաւաքական մեծ սիրտը սկսեց բաբախել՝ ներդաշնակ, լիարիւն, առողջ տրոփիւնում: Յոյսի ու հաւատի տրոփիւնում: Օպերայի դասական բարեկրթութեամբ շնչող լայնարձակ հրապարակը, որ ցերեկները մայրաքաղաքի կենտրոնում ապրող մանուկների զբոսատեղին էր, ծերերի հանգստավայրն ու զբոսալրջիկների հպանցիկ երթուղիներից մէկը, փետրուարեան այդ օրը միանգամից, անսպասելի դարձաւ աշխարհի կենտրոն, հայկական երազների, քաղաքացիական ակտիւութեան ու զրազիտութեան դարձ, մարդասիրութեան, համակեցութեան կանոնադիրք: Եւ քննասենեակ՝ մի տեղ, ուր ժողովուրդը քննութիւն տուեց քաղաքական սկզբունքների հաւատարմութիւն, բարոյականութիւն, ազգային յիշողութիւն, պատմութիւն, սահմանադրութիւն, մարդու իրաւունք եւ օրէնք առարկաներից: Գերազանց տուեց:



Արցախ...

Քանի տարի պիտի վերապրէինք մեր կորուստները տուն առ տուն, վանք առ վանք, անուն առ անուն, քանի տարի պիտի Մասիս, Վան, Մուշ, Կարին թառանջէինք, «Գորաւի» ու «Ձալն մը հնչեց» կանչէինք, Անդրանիկ ու Ջալալ սգեկոչէինք, Սարգսրապատ ու Բաշ-Ապարան վկայակոչէինք, որ գա- յինք, հասնէինք քեզ: Մօտը թողած՝ հեռուն փնտռէինք, դրսի Սփիւքը ուխ- տատեղի դարձրած, թողնէինք, որ դէպի քեզ բերող ճանապարհները կածան դառնան, կածաններն էլ մոռացութեան խոտով ծածկուէին, թողնէինք, որ ո՛չ միայն Հայրենիք ամբողջութիւնից դուրս մնայիր, այլեւ՝ «էրզր» կո- րուսեանալից էլ, ու նոր միայն, նոր հասկանայինք, թէ ինչ ենք արել:

Ինչ-որ պաշտօնեաների լուռ հրամանով, թողել ենք, որ մերը՝ մեր ժո- զովորը, մեր հողը շահատակուի հողեւոր ու մարմնաւոր քաղցից, թողել ենք, որ այլանդակուն մեր արեան ժառանգութեան բնական պատմութիւնը, հազարամեակներէ յիշատակները՝ վանքերը, դպրատները, բնակատեղի անունները, շէնքերը, քաղաքները, թալանուի հողը, ժողովրդի արժանա- պատգուութիւնը, երազելու իրաւունքը, ազգային պատկանելիութիւնը:

Ի՞նչն էր մեզ խանգարում ուշօրի դալու, սթափուելու, հասկանալու, որ սարսափելի մի ծուղակ, թող այն «կուսակցութիւն» կամ «լեւոնական» կոչ- ւի, այնուհանդերձ չպիտի աւելի հզօր ու ամենակուլ լինէր, քան է Հայրենիք ամբողջական գաղափարը, եւ պիտի գնայինք, գնայինք, գնայինք, գնայինք Արցախ:

Երեւի մեզքի այս զգացումն էլ փոթորկեց Հայաստանը, որ փետրուար- եան, չգիտեմ էլ թէ ինչ օր էր՝ միւս էր, արեւ, ցուրտ էր, թէ՞ տաք, ոտքի հա- նեց ժողովրդին:

Հրդեհուող տանը մոռացուած մանկանը փրկող սրտապատառ մօր պէս խելակորոյս նետուեցինք դէպի մեզ կանչող ձայնը, մեզ մեկնուած ձեռքերն ու աչքերը:

Մի քանի օրուայ մէջ՝ զրազէտ դարձանք՝ տեսանք անօրէն բան է կա- տարուել 1923 թուականին: Ոչ թէ կուրծք էինք ծծում, որ մեր արիւնից, նոյն մօր ու հօրից ծնուած հարազատ զաւակն է վառում հրդեհի բոցերի մէջ, այլ՝ քանի որ օրէնք է, ծննդեան վկայական ու սահմանադրական իրաւունք ներ- կայացրինք, ապացուցելու, թէ մենք իրաւունք ունենք գոնէ յաց լինելու մեր կայացրինք, ապացուցելու, որ հիմէ իրաւունք չունենք էլ մենք ինքներս դաւաճի համար, ապացուցելու, որ հիմէ իրաւունք չունենք էլ մենք ինքներս նրան փրկելու, ապա, եթէ, գոնէ, թէ ինչն իրեն փրկի եւ ցանկանայ մեր մայ- րական փրկելու, ապա, եթէ, գոնէ, թէ ինչն իրեն փրկի եւ ցանկանայ մեր մայ- րական փրկելու վերադառնալ՝ դէմ չենք, կը գրկենք նրան, կը սիրենք ու կը թուրաւորենք, կը բուժենք վէրքերն ու կը սրբենք արցունքները: Այո, զրա- զուրաւորենք, կը բուժենք վէրքերն ու կը սրբենք արցունքները: Այո, զրա- զուրաւորենք: Հայերէն էլ ենք կարդում, ուսեւրէն էլ, նոյնիսկ լատիներէն էլ:



Ստեփանակերտ-Վաքարակնը, Շուշ, Կրկժանը, սարերը, անտառները, գետերը, քարերը, պատմութիւնը, անցեալը, ներկան խոնարհ առեւծի պէս եկել ծունկ են շոքել ժայռակղզու կատարին թառած անկեալ հրեշտակի՝ Շու- շի առաջ ու սպասում են:

Ինչի՞ են սպասում, Աստուած իմ: Երկու սարերի միացման երկնածոցից մի փոքրիկ ինքնաթիռ յայտնե- ւեց ու սկսեց պտոյտներ գործել Ստեփանակերտի վրայ: Մահօթ ԵԱԿ-40ն է՝

Երեւանից, Լեւոնապարի երիզներով ձագարածու պատուելով, վայրէջքի է գնում:

Ուղեկիցս պատմում էր, որ փետրուարեան օրերին, ժողովուրդը Ստեփանակերտի հրապարակում ծովացած, երբ յայտնուեալ էր այդ փոքրիկ, խղճուկ, այս սարերին միայն յարմար օգանաւը ու պտոյտ էր գործում քաղաքի վրայ, ինչպէս հիմա, վայրէջքի գալու համար, եօթնասուն հազար զոյգ ձեռք դէպի երկինք էր ձգուեալ, եօթնասուն հազար զոյգ հայեացք դէպի երկինք էր յառուեալ, եօթնասուն հազար բերան մի բառ էր թառանչում դէպի երկինք՝ Հայաստան:

Երկինք համարձուող թառանչը դիպչելով այդ խեղճ մետաղին, շնչաւորում էր նրան՝ աւետարեւր ծիծեռնակ կամ աղանի էր գարձնում:

Ուղեկիցս պատմում էր, որ օգաչուններն էլ այդ փոքրիկ թռչող մետաղէ տուփի մէջ թպրտում էին ափ նետուած ձկների կամ վիրաւոր բազէների պէս, ուզում էին բացել զոններն ու ցած նետուել՝ դէպի իրենց մեկնուած ձեռքերը, հայեացքը, թառանչը, դէպի իրենց ժողովրդի գիրկը...



Մոսկուայից եկած նոր մարզկոմի երկրորդ քարտուղարը՝ Մալկովը, կուսակցութեան մարզային կոմիտէի Մարտի 18ին տեղի ունեցած պլենումում առաջինը ձեռք բարձրացրեց յօգուտ Լեւոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը մեր Հայրենիքին՝ Սովետական Հայաստանին միաւորելու կոմունիստների ճշտող մեծամասնութեան կամօքի:

Ազգային ինքնորոշման շնինեան տեսութիւնը օրէնքի սրբազան կանոններով են պահպանում Արցախի աշխարհում: Ժողովուրդների բարեկամութեան, ինտերնացիոնալ պարագի, մարդասիրական ու քաղաքական իրենց սկզբունքներն ու գաղափարներն էլ են պահպանում:

Պահպանում են ու հաւատում: Հաւատում են Մարտունու չըլանի Զարգարչէն ամայացած դիւղին կառչած երեք ընտանիքները: Գիւղ, որ պատերազմում 117 զոհ տուեց, Մամայ գիւղում մնացած 20 հօգին, Սխտորաչէնում մնացած երեք ծերունիները, Շարտարի 3786 բնակիչները, բոլորը, բոլորը, ողջ հայ ժողովուրդը: Այդ հաւատը պահպանելու համար լէ՛ր, որ այդքան զոհ, հերոս ու զօրավար տուեց Երկրորդ Համաշխարհայինին, առասպելական չափերով շատ, իր ուժերից վեր շատ:

Վարանդա Խոնաչէն-Մարտունի: Մինչեւ Վարանդայից Մարտունի վերանուանուեցիր, Խոնաչէն անուանեալ Նրոտատ դետղ սակաւաջուր առուակ դարձաւ: Քանի հազարամեակի ճանապարհ կտրեցիր, ինչքան լուր սուր-սուր-լուր առար, որ բարձր սարի ծերպին թառած Հաղորտի (լուր սուր, փոխանցիր) գիւղը փոխեց անունը՝ Քենդիսուրդ դարձաւ, կուսաբերող՝ Ղզղալա, Մաճկալաչէնից գիտան մաճկալներդ, Սովատեղը կորցրեց ծովի յիշատակը, Ամարասիղ մետրոպեան լուսատառերը սերտող սաներիդ փոխարէն ոչխարը մակաղեց կիսաւեր կամարներիդ տակ:



Հենց այդ, Շուշիից երեւացող լեւնանցքում տեղի ունեցաւ հանդիպումը: Արեւամուտի կարմիր կրակները շիկնանքի պէս վարդազունն էին Ղա-

զանչեցոց եկեղեցու վերականգնուող, մաքուր հարսնաներմակը։ Այդ նոյն կրակները շեղակի ընկել էին նաև քիչ ներքեւում երեսացող երկու մինարէթներէ վրայ։ Աւելի ցածում, արդէն մթնցող սարայանջերն էին, գիւղակները ու մշուշուող, ողջ լեռնապարի վրայ ձեռքերը տարածած Ստեփանակերտն էր։

Տեղ-տեղ վառուող լոյսեր էին երեւում։ Այդ օրը անձանգիստ ու ետուն էր փաղաքի կեանքը։ Սոււգայիթից զաղթած ընտանիքներին էին ընդունում ու տեղաւորում Ստեփանակերտի տղաները՝ ստաղիտնի դիրեկտոր Ռազմիկ Պետրոսեանի ղեկավարութեամբ։ Հանրակացարանները, հիւրանոցը, տները լիքն են փախտակական ընտանիքներով։ Մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսեանը անջնութիւնից տանջահար, փորձում էր մեր հարցերի տափի առջին առնել, եւ հեռախօսազանգերին պատասխանել, եւ յանձնարարութիւններ տալ։ Քարտուղարի գործնական, սովորական, պարզ պահուածքը բոլորովին չի համապատասխանում մեծ ղեկավարի իմ պատկերացումներին։ Մի մարդ, որի աչքերի գոյնից սկսած մինչեւ կենսազրուքեան մանրամասները հետաքրքրում են միլիոնաւոր մարդկանց, յոգնաստանջ, բայց պարտասակամ սիրալիրութեամբ գրուցում է մեզ հետ՝ մարդի սոցիալ-տնտեսական միեմակի եւ զարգացման հեռանկարների մասին, պրորէիմների մասին, մարդկանց եւ ի՛ր երազների մասին։ Բնիկ արցախցու ցաւով ու սպասումներով նրա հոգին էլ է լի՝ զումարած ամենադժուարին պահին ժողովրդի ղեկավարն ու առաջնորդը լինելու պարտքն ու պարտաւորութիւնները։ Երկրորդ անգամ էր հանդիպում նրան մէկ ամսուայ մէջ, բայց պրորէիմները նոյնն էին։ Բոլորս չտապում էինք՝ նա իր մեծ հոգների բեռան տակ կքած, մենք ղէպի Մաքսիմ Գորկու անուն թատրոնի հրապարակ՝ յեղափոխութեան մեծ երգչի, ուսու մեծ մարդասէրի, հայ ժողովրդի մեծ բարեկամի ծննդեան օրուան նուիրումած համաբարձաբային միտինգին։

Գրախանութի առաջ վազ առաւտից հակայական հերթ էր։ Հայաստանից հայ գրողների գրքեր էին ստացուել։ Զօրի Բայանյանի «Օղախ»ից յետոյ, կէտրկովի հրամանով, Ղարաբաղում հայերէն, հայաստա, հայ գրողի գիրք գրեթէ չէր վաճառուել այնուամենայն։ Ու հիմա, սովահարի պէս, մարդիկ ղէպի գրախանութի էին ձգուում։ Գնուած գրքերի կապոցները նորածնի բարուրի պէս գրկած, երջանիկ, հերոսական ժպիտը գէմքներին, նրանք հետանում էին գրախանութից, իսկ հերթը չէր պակասում, դնալով աւելանում էր։

Այս ինչ ենք արել, այս ո՛նց ենք թողել, որ հոգեւոր սովն ու ծարաւը այս մակարդակին հասնեն։ Մի քայլ հետու, մի շնչում-արտաշնչումի շափ հետու, Հայաստանի գրքաշատ, նկարաշատ, երգաշատ քաղաքներն ու գիւղերն են՝ այստեղ տարիներով սով է եղել։ Ու մի՞ց, ինչի՞ց ենք վախեցել։ Ներքին սփիւղօքի կոմիտէ գո-ցէ պիտի ստեղծէինք, պիտի յաղթահարէինք Ղազախ, կամ Լաչին ճանապարհների արգելքները, ալիեւան հոգեւոր մաքսատների ստեղծումները, կէտրկովեան երգիտական խորամանկութիւնները եւ պիտի տախիւք, բերէինք, մենակ չթողէինք։ Այս ի՞նչ ենք արել։ Ապրիլի տասնինն քայինք, բերէինք, մենակ չթողէինք։ Հիմա պարզուում է, այդ 26ն էլ էր էր։ Կ՛հ, Մարտի 26ից քանի՞ օր անցաւ։ Հիմա պարզուում է, այդ 26ն էլ էր։ մտնում լճացման երեք շաբաթուայ մէջ (ձեւակերպումը «Կումսումալալայայ մտնում լճացման երեք շաբաթուայ մէջ (ձեւակերպումը «Կումսումալալայայ մտնում լճացման երեք շաբաթուայ մէջ ընկաւ։ էլ ինչեր աւան, նորոգողով։ Մարտի 26ը հենց այդ երեք շաբաթուայ մէջ ընկաւ։ էլ ինչեր աւան, նոր չէին սպասում մեզինց այդ օրը կասկածամիտները, թշնամիները, վերա-որ չէին սպասում մեզինց այդ օրը կասկածամիտները, թշնամիները, վերա-կառուցման հակառակորդները։ Արդէն կանխորոշող պիտակներ՝ քսադրիչ-

ներ», «էքստրեմիստներ», «հակասոցիալիստական հոգիներ» կային, մնում էր գործով, գործողութիւններով արժանանալ այդ պիտակներին: Ժամկէտ էլ էր նշանակուած՝ Մարտի 26ը: Ի՞նչ էլ արեւոտ ու պայծառ օր էր, մաքուր, էլ էր նշանակուած՝ Քինուարներն էլ Թաղիկներ են ստանում երեւանեան շէտուած, հուսադադ: Զինուորներն էլ Թաղիկներ են ստանում երեւանեան շէտուած, հուսադադ չի օրիորդներէց, գրահամերկներն էլ անգործ ու անհեթեթ շարուէ մորով չի օրիորդներէց, գրահամերկներն էլ անգործ ու անհեթեթ շարուէ են Օպերայի հրապարակում, օրն էլ Շարաթ է, սովորական, գարնանային: Այդպէս: Զինուորների մի մասը զնաց Նորքի մանկական հիւանդանոցի բակում ծառատնկման՝ բուժաշխատողների հետ, յետոյ էլ միասին Երզնցին, պարեցին, ուրախացան: «Լաւ էիք կազմակերպել», — գրեց «Սորբսեղձիկ»ի թղթակիցը: «Է՛հ, ի՞նչ արած, — կ'ասէի նրան, եթէ հանդիպէի: — Լաւ կազմակերպելն էլ է արուեստ: Բայց աչքերիս մէջ նայիր, ուշադիր նայիր, այ աշամորդի, մէջը հէջ հաւատ չկա՞յ»:

Մեր մէջ կայ: Հաւատում ենք՝ քեզ չէ, գործընկերոջդ՝ Գուտիոնտովին ենք հաւատում, տիեզերազնաց Ակսիանովին, որ վերեւից՝ տիեզերքից է տեսել մեր Երկիր մոլորակը, մեր սովետական երկիրը, մեր Հայաստան երկիրը՝ Արցախ աշխարհով (Ստեփանակերտում ասել էր՝ այնտեղից սահմանները չեն երեւում): Սոււզայիթը, Երեւանը, Մոսկուան: Ի՞նչու ժողովուրդին ենք հաւատում, ազգերին ենք հաւատում, արդարադատութեանն ենք հաւատում՝ զգացմունքով ու բանականութեամբ ենք հաւատում:

*
**

Ապրիլեան անձրեւոտ գիշեր է, Գորկու անուան թատրոնի բուֆետում սեղանին կքած, անուշաբոյր թէյ էինք խմում: Ներկայացումը վաղուց վերջացել է, բայց ո՛չ դերասաններն են հեռանում, ոչ մենք: Այնպիսի անձրեւ է՝ իսկը իրար գլխի, թէյի սեղանի շուրջ հաւաքուելու գիշեր: Ժողովրդական արտիստ Բենիամին Օվչեանը ճերմակ, հպարտ առիւծաբաշը կիսամութի մէջ վալլեցնելով ինձ պարզում է իմ մայրական, զանգեզուրեան արեան արցախեան արմատները՝ ուրեմն զարարացիք Մեյիք Ստեփանեան Շուշան տատս, որ ծնուել է Կապանի Առաջածոր գիւղում, Արցախի Օրբելեան իշխանական տան մի ճիւղն է, որ զնաց Զանգեզուր եւ հաւանաբար, ի յիշատակ արցախեան Առաջածորի, այնտեղ հիմնեց նոր Առաջածոր, մեյիքական բնակավայրը, եւ իմ այս նորագիւտ սէրն ու կարօտը նոր չէ, ժառանգական յիշողութիւն է, արեան կանչ: Միւս կէսս էլ դէպի Կարնոյ աշխարհ է ձգտում՝ դէպի հօրս ծննդավայրը, սիրտս էլ դէպի Երեւան է ձգտում՝ իմ եւ որդուս ծննդավայրը, որովհետեւ Հայրենիքը ամբողջական, անպարագիծ, տիեզերական հասկացութիւն է՝ ոգի, որ չի պաշկում մի կէտի վրայ, դեզերում է արեան կանչի ու ժողովուրդի պատմութեան խորխորատներում: Այդ դեզերումի ճանապարհները չի կարելի մոռացութեան խոտով ծածկել («Դարուն», 1988, թիւ 6):

Ա.Ա.ՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԻՄ ՂԱՐԱԲԱՂ

ԱՐԹՆԱՑՈՒՄ

Օրերում այս վերածնման,
 Սրբ Երկիրն է ելել ստի,
 Սրբ զարթնումի լուսե ծնծղան
 Մունչ է բերում առաօտի,
 Սրբ կապանքը անարգ մութի
 Փշրում է սուփերի տակ,
 Ճարագում է հոգիս յուրքի,
 Ու դառնում է երգը վստահ:

Եւ Երազը ռոմանարուած,
 Եւ ամարգուած Կարօտը մեր
 Հիմա կեանքին սիրահարուած
 Հագնում են նոր լոյսի թւեր:
 Եւ դէպի վե՛ր, եւ դարն ի վե՛ր
 Տանում են մեր կամքը արի.
 Եւ դառնում են աստղանուէր
 Պարզելը նոր մանապարհի...:

Օրերում այս վերածնուող,
 Յեղափոխիչ ու անբեկան,
 Ես ելել եմ հաւատով նոր,
 Որ երդե՛նք մղնիմ ներկան,
 Որ օրերիս մէջ՝ ապագան
 Չկարկամի ճահիճներում
 Եւ չսուգուի արհեստական
 Խրախճանքի մահիճներում:

Եւ Երագի ճամբան բացուող,
 Եւ կարօտի զարգը գրկած՝
 Պիտի ելնեմ՝ առասպելի
 Իսկութիւնը դաւից փրկած,
 Եւ պատմութեան նետը պրկած՝
 Պիտի խրոյ՛ եմ ասուցերի մէջ.
 Ժողովրդիս սիրտը մրրկած
 Փրկեմ բոլո՛ր մահերի մէջ:

Զինադագեղ իմ Ղարաբաղ,
 Գեղեցկութիւն դու անարատ,
 Դու դալարուն բաղնիքի բաղ,
 Դու հայրենի հող հարազատ:

Քո գրկումն եմ, այգիներում,
 Քո լեռներում վսեմաշուք,
 Սոխակներն են ուր զայլաշյոււմ,
 Ասես վարդի սիրտը մաշում:

Ես երգում եմ կեանքը քո վառ,
 Համայնական էս դաշտերը,
 Արեգակը մեր կենսավառ
 Ու սառնորակ էս ջրերը:

...Դու անմահն իմ Ղարաբաղ,
 Գեղեցկութիւն շքեղագարդ,
 Դու միշտ դալար մի վարդի թաղ,
 Դու հայրենի հող հարազատ:

ԵՓՐԵՄ ԼՈՒԻՆՆՑ

ԱՐՑԱԽԱԿԱՆ

Մշուշում է նորից հոգիս
 Մղձաւանջից տիեզերական,
 Բայց ակորդը այս նոր երգիս
 Էլի սերն է արցախական...:

Կրկին պիտի նրան երգեմ,
 Եւ կսկիծը՝ երկար տարած,
 Ինչպէս, ինչպէս ես ինձ հերքեմ,
 Նրանով եմ ես միշտ հարբած:

Նրանով եմ ես ինձ մտնում
 Կամ արթնանում սին երազից,
 Նրա սերն է ինձ դարմանում,
 Ես ծնունդ եմ նրա լոյսից...:

ՀԱՄԼԵՏ ԿԱՐՃԻԿԵԱՆ

ԻԼԻԱ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԴՐԱՄԱՆ

... Այդ տրամաբանութեամբ է, որ անգամ խաչաքարը դասուած է մասնաւորական անբարարական կերպով (խաչաքար), բիրտական նախ Կառնակար՝ թուրքական քեզերի նախաձայր, Միտիթար Գուլ, Դուքակ Քերթուզը եւ Մովսէս Գաղանկատուացիին՝ ազուանական (ազգայնական) գրողներ, պատմիչներ:

Պատմութեան նման բնականութեան մասն է նիմաւորի, թէ այդ ինչ չորտրոմ է, որ շինք կհանձն ժողովուրդը մրդ, Երզ, Երզ, Երզ, Երզ գործերի իր նախապայտի է նախ քերպեր, վանքեր, կուսակցիներ, երբ քերպի ժողովուրդը նամարեա՝ ոչինչ չուրի քերպ չորտրոմ:

Այնք նախաձայր է նախ Լեւոնային Կարաբաղի պրոբլէմի արդարացի յանձնար, որովհետեւ խորացու նախաձայր է նախ վերականգնողական մեծ ծրագրի յաղթանակին:

ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ազգային յարաբերութիւնների իրավիճակն անցած տասնամեակների քամենաակնապատուած տարածքն է եղել, այստեղ պարզութեանը չին եղել, Հակասութիւնները քրայտուել են: Եւ ահա, մեր կուսակցութիւնը, իմաստուն շրջակայեացութեամբ, չեղկնչեց մատնանչել նաեւ այս բնազատութիւնները:

Լեւոնային Կարաբաղի իրադարձութիւնների առիթով Ազգայնական եւ Հայաստանի ժողովուրդներին ուղղուած յայտնի նամակում, նկատի ունենալով ազգային յարաբերութիւնների վիճակը պարզութեանը, Մ. Ս. Գորբաչովին ասաց. «Այնք կողմ չենք այն բանին, որ խուսափենք զանազան զազափարների եւ առաջարկութիւնների անկեղծ քննարկումից, բայց այդ հարկաւոր է անել հանգիստ, դեմոկրատական պրոցեսի եւ օրինականութեան շրջանակներում, թոյլ չտալով թէկուզ ամենաչնչին վնաս մեր ժողովուրդներին ինտերնացիոնալ Համագործակցութեանը»:

Մեր երկրի ժողովուրդների եղբայրութիւնը, այո՛, Հոկտեմբերի ամենամեծ նուաճումն է, մեր թիւիչքների ամուր պատուանդանը: Այս մեծ ճշմարտութեան ըմբռնումը բնաւ չի քայտուում, որ Հարկաւոր է խորամուխ լինել ազգային յարաբերութիւնների, լեզուների, մշակութիւնների իրական պարզութեանի մէջ, եղբայրութեան մասին խօսակցութիւնների, տոնահանգչանքների, երգումների փայլի տակ նկատել նաեւ փոքր կամ մեծ ժողովուրդների արժանապատուութեանը դիպչող, նրանց ինքնավար զարգացմանը խանգարող երեւոյթներ, փաստեր:

«Ազգային Հաւասարութիւնը» այդ երեւոյթի լինիլնեան ճշմարիտ ըմբռնումով, սոցիալ-տնտեսականից բացի, ունի ուրիշ, ոչ պակաս կարեւոր

ասպեկտներ՝ քաղաքական, իրական, մշակութային եւ էթնիկական, որոնք սերտորէն միաշխուհում են: Թէ ինչ Հետեւանքների կարող է հասցնել անուշադրութիւնը այդ ամէնի նկատմամբ, ցոյց են տալիս, մասնաւորապէս, ՀԼԵՈՆԱՅԻՆ Ղարաբաղի իրադարձութիւնները»: («Պրաւդա», Ծր Մայիսի-Վնացիժնալիզմի երեսօյթը): Մասնաւորապէս, դարերի հարեանութեամբ ապրած ժողովուրդների կենսադրութեան մէջ չեն կարող չլինել ճատեւրոտ կէտեր», վիճայարոյց պրոբլեմներ, պատմական նոյն երեսօյթի կամ գործչի տարրեր մեկնաբանութիւններ:

Ժողովուրդների «Ստալինեան եղբայրութեան» մոդելին թերեւս յարմար է, բայց հակապատմական է, երբ մենք այդ ժողովուրդների մէջ 1917-20 թուականներից յետոյ ստեղծուած համադրծակցութեան զանգակատնից ենք նայում նրանց անցեալի բոլոր ժամանակներին եւ եթէ այդ անցեալի ինչ-ինչ իրադարձութիւններ, կնճոռոտ հանդիցներ հակառակ են այսօրուայ եղբայրութեանը, ապա մենք լռելու ենք տալիս այդ հակասութիւնները կամ՝ սրբադարձում, յարմարեցնում ենք պատմութիւնը, իբր, ի շահ մեր արդէ եղբայրութեան: (Այսպէս, խօսելով 1915-1920 թթ. ցեղասպանութեան մասին, մենք դերադատում ենք շրջանցել մուսաւաթականների եւ թուրք էմիսարների կողմից իրաբանացուած հայ բնակչութեան հրէշտար սպանող Նուշի քաղաքում): Թաւօք, նկատուել են անլի անթոյլատրելի երեւոյթներ. սեփական պատմութեան ինչ-ինչ շրջանների վակուումը հարեան ժողովուրդի պատմութեամբ ու մշակոյթով «բնակեցնելու» հակում՝ այլազան հակադիտական, հակապատմական տեսութիւնների յօրինումով: Այնուհետեւ, չի կարելի մտածել, որ եթէ այսինչ երկրամասը ինչ-որ ժամանակից սկսած մտցուել է ստեւալ միութեանական հանրապետութեան վարչական կազմի մէջ, դրանով իսկ, ինչպէս հաշտապահները կ'ասէին՝ «բայանսից բայանս» այդ հանրապետութեանն է փոխանցուել նաեւ ստեւալ երկրամասի պատմութիւնը, մշակոյթը (այդ արմարանութեամբ է, որ անգամ իսլաքարը դառնում է մուսուլմանական ճարտարապետական երեսօյթ (խաչքաշ), բիրլիական Նոյ Նահապետը՝ թուրքալեզու ցեղերի նախահայր, Մխիթար Գօշը, Դաւթակ Քերթոզը եւ Մովսէս Կաղանկատուացին՝ աղուանական (աղբրեջնական) գրողներ, պատմիչներ): Տոճեալ հանրապետութեան վարչական կազմի մէջ մտցրած լինելու փաստը ումանց իրաւունք է տալիս «հիմնաւորելու», թէ այդ երկրամասի ժողովուրդը, իբր, մեծահոգաբար «օթեան» է ստացել այդ հանրապետութեան եղբայրական հողում: (Երեւի այդ արամաբանութեամբ է, որ գրող Անարը Բորովիկի հաղորդման մէջ ասաց, թէ ինքը հաւատում է, որ Հեռնային Ղարաբաղը կը դառնայ հայ եւ աղբրեջնական եղբայրութեան սիմվոլ, եւ հայերը այնտեղ կը զգան «ինչպէս իրենց տանը»: Ղարաբաղի հայերն անյիւշիլ հնից իրենց տանն են, յարգելի Անար...): Պատմութեան նման «մեկնաբաններին» մնում է հիմնաւորել, թէ այդ ինչ հրաշքով է, որ «հիւր եկած» ժողովուրդը հրէ, Երէ, Դրէ, 10րդ դարերից իր հետ «փոխադրել է» նաեւ բերդեր, վանքեր, կամուրջներ, երբ «բնիկ» ժողովուրդը համարեա՝ ոչինչ չունի «իր» հողի վրայ: Եւ ապա՝ «մշակոյթի պետութիւնը» սահմաններ չի ճանաչում, եւ ամէն ժողովուրդը հոգատարութեամբ պիտի վերաբերի ոչ միայն ի՛ր ստեղծած, այլեւ ի՛ր վարչական տարածքի վրայ գտնուող ուրիշ ժողովուրդների յուշարձաններին: Թաւօք, «հոգատար վերաբերմունքի» փոխարէն մենք յանախ ստընչում ենք Թաւօք, «հոգատար վերաբերմունքի» իրողութեան հետ: (Պատմական պարզապէս բարբարոսական վերաբերմունքի իրողութեան նկատման յուշարձաններին գումարենք նաեւ ազգային փոքրամասնութիւնների լեզուն, յուշարձաններին, ինքնութիւնը): Աղբրեջնական հանրապետութեան տասնօրրութիւնները, ինքնութիւնը): Աղբրեջնական հանրապետութեան տասնօրրութեամբ գտնուող հայ մշակոյթի անլի քան 2500 յուշարձաններից անցած

65 տարիներին չի վերականգնուել բացառապէս ոչ մի յուշարձան, և ևե՛րի՛ն՝ «պայմաններ են ստեղծուել» այդ յուշարձանների կործանման համար (միայն Լեւոնային Ղարաբաղ-Արցախում 1611 յուշարձան կայ, որոնք բոլորը դանդաղ աւերոււմ են)։ Նման իրավիճակը, քնակահարար, չի կարող նպաստել ժողովուրդների բարեկամութեան հետագայ ամրապնդմանը, չի կարող կասկածի տակ չղնել այդ բարեկամութեան բուն դադափարը։

Ոչ մի տեղ զուտ ճշմարտութեան ներկայութիւնը այնքան պարտադիր չէ, որքան մարդկանց եւ ժողովուրդների յարաբերութիւններում, եւ մենք համբերութեամբ օւ հաւատով պիտի սպասենք ազգային յարաբերութիւնների համակողմանի քննարկմանը նուիրուած մեր կուսակցութեան կենսովով լիազօւմար նիստին։ Մենք հաւատում ենք Լեւոնային Ղարաբաղի պրոբլեմի արգարացի լուծմանը, որովհետեւ խորապէս հաւատում ենք վերակառուցման մեծ ծրագրի յաղթանակին։

Ազգային յարաբերութիւններում թոյլ տրուած սխալների ուղղման լեւնինեան սխալ դիրքորոշումն էլ, քնակահարար, չէր կարող վերակառուցման հակառակորդների սրտովը լինել։ Չէ՞ որ այստեղ կարելի էր աւելի նենգորէն խոցել վերակառուցման ջատագովներին, տեսէ՞ք, դուք վտանգում էք Հոկտեմբերի ամենամեծ նուաճումը՝ ժողովուրդների եղբայրութիւնը։ Այդ աննախադէպ յանցագործութեան մեխանիզմը եւ մասշտապները հաւանօրէն կ'ուրուազժուեն դատական քննութեան պրոցեսումը*, կը պարզի նորին

*) Սոյն յօդուածն արդէն ներկայացուած էր խմբագրութեանը, երբ Սոււգայիթում դատաւնութիւնը սկսուեց։ Բայց ՏԱՍՍի առաջին եաղորդագրութիւնը, մեղմ սասած, խորը տարակուսանք հրահրեց. «Իստարանն այսօր սկսեց... փակամագործ Մ. Իսմայիլովի գործի քննութիւնը, որը մեղադրոււմ է ա/թ. Փետրուարին Սոււգայիթում տեղի ունեցած անկարգութիւններին մասնակից լինելու մէջ։ Խուլիգանական դրոյապատճառներից ելլելով, նա կանխատեսածուած սպանութիւն է կատարել՝ յանցանքը ծանրացնող հանգամանքներում»։ Եւ հասկանում եմ՝ Իսմայիլովի գործին կը յաջորդեն միւս մեղադրեալների գործերի քննութիւնը, դայց... Բայց արդէն դառը իւրմծիծաղ է յարուցում «անկարգութիւններ» դպրոցական քննութեանը, երբ Սոււգայիթի դէպքերը կենտրոնական մամուլում եւ հեռուստատեսութեամբ ընօրագրուել են իրրիւ «ջարդ», «պետական յանցագործութիւն», «կոտորած», «ողբերգութիւն»․ այդ «անկարգութեան» գործող անձերը ընօրագրուել են իրրիւ «դիւստար ամբոյս», «քանդիտներ»... Եւ առհասարակ՝ Սոււգայիթի զանգուածային, կազմակերպուած եղեռնագործութեան մասնատումը անհատական իրեական գործերի (գոնէ ինձ այդպէս է թուում) չի կարող նպաստել կատարուածի օրյեկտիւ պատկերի քացայայտմանը, կ'աղաւաղի դաժան ճշմարտութիւնը։ Իստը իմծիծաղ է առաջացնում՝ «խուլիգանական դրոյապատճառներից ելլելով... կանխատեսածուած սպանութիւն է կատարել» քննութեանը։ Կարծում եմ՝ համաշխարհային իրեական պրակտիկայում սա «նոր խօսք» է... (Մարդասպան Իսմայիլովի պատժաչափն արդէն չի կարող հիասթափութիւն եւ զայրոյթ չառաջացնել․ եթէ կանխատեսածուած, այն էլ՝ յանցանքը ծանրացնող հանգամանքներում կատարուած սպանութիւնը չի արժանանում գերագոյն պատժաչափի, թերեւս մեզ քացատրեն, թէ ո՞ր դէպքի համար է նախատեսուած իրեական օրէնսգրքի համապատասխան յօդւածը)։ Եթէ այդպէս պիտի ընթանայ Սոււգայիթի դատաւնութիւնը, ուրեմն, ի՞նչ, մեր յոյսը պիտի մնայ միայն նորին մեծութիւն ժամանակի՞ դատաւնութեան վրայ...

մեծութիւն ժամանակը, բայց այսօր արդէն դժուար չէ հասկանալ, որ դա դաշոյն էր ինտերնացիոնալիզմի եւ վերակառուցման թիկունքին, եւ զուր են ոմանք ճշմունք այդ եղեւնագործութեան կատարելը՝ վերագրել ինչ-ինչ քրէական տարրերի, դեղնակտուց յանցագործներին, ինտերնացիոնալ դաստիարակութեան գործի ինչ-ինչ վրիպումների: Այո, եղել են նաեւ այդ տարրերը, բայց նրանք ընդամէնը կոյր գործիք են եղել ինտերնացիոնալիզմի եւ վերակառուցման հակառակորդների սառը ձեռքում:

Սոււմգայիթը վերակառուցման թիկունքին դաշոյն էր՝ խփուած նաեւ մի երկրորդ կողմից, աւելի որոշ՝ դաշոյն էր վերակառուցմանն ընդդիմադիր մի այլ խափ ձեռքերում: Խօսելով այն մասին, թէ անցած տասնամակնհերում ինչպէս ծաղկեցին եւ «թունաւոր պտուղներ» տուին կորրուպցիան, կաշառակերութիւնը, պաշտօնական դիրքի շարաշահումը եւ սոցիալիզմի արմատական սկզբունքներին անյարիր, նրա էութիւնը եղծող այլ երեւոյթներ, որոնց, իբր ըւտ արդիւնք, գոյացաւ արտօնեալներ, քննադատութեան ոլորտից դուրս գտնուողներ, «ընդլստակեայ միլիոնատէրերի» մի ամբողջ խաւ, ահա թէ ինչ սթափ եզրակացութեան է յանդում փելիտօփայ Ի. Նաստաշեւը («Կոմունիստ», Հանդէս, Ապրիլ, 1988 թ.): «Տեղին կը լինէր հարցնել, — խորհրդածում է փելիտօփան, — հիմա երբ ետանդում քանդում են մրանց (այդ ընդլստակեայ միլիոնատէրեր)» Վ. Գ. «Կրէտի քննիր»: Փնտռում-գտնում են ակնօղակուր օձերով պահպանուած մրանց ոսկէ գգանձարաններին» բանալիները, ո՞ւմ կողմը պիտի լինեն մրանք, այդ «ձուից դուրս եկած միլիոնատէրերը»: Եւ այդ հենց նրանց նենգադաւ ձեռքը չէ՞ր, որ Սոււմգայիթում ուղղութիւն տուեց վայրագ խուլիգանների գործողութիւններին: Նման եղանակով հենց նրանք չէին՞, որ փորձեցին ամբուլիւնը ստուգել վերակառուցման, զեմոկրատացման եւ հրապարակայնութեան, երեւոյթներ, որ այդ «բիրդան-աղաներին» համար, բնական է, կործանել պիտի լինեն: «Սոււմգայիթեան օրերին» մղձաւանջի մէջ գտնուեցին նաեւ մարդիկ, որոնք կարողացան հաւատարիմ մնալ մարդկայնութեան եւ հարեւանութեան օրէնքներին: Ես նկատի ունեմ այն սղբերեջաններին, որոնք իրենց կեանքը վտանգելով, կարողացան փակել եղեւնագործներին մի մասի ճանապարհը, փրկել իրենց հայազգի համաքաղաքացիներին: Մեր ժողովուրդը չի կարող բարի խօսքով չլիչել այդ մարդկանց:

Այո, ես համաձայն եմ Հենրիխ Բորովիկի հետ, որ հայ-ազրբեջանական ազգամիջեան յարաբերութիւններում գոյացած ներկայ բարդ իրավիճակում կարեւոր դեր ունեն երկու ժողովուրդների մտաւորականները՝ գրողներ, նկարիչներ, արտիստներ, երաժիշտներ, որոնք իրենց բարի խօսքով պիտի կարողանան այդ վիճակից դուրս գալու ճանապարհներ յուշել: Եւ հենց այդ տրամաբանութեամբ՝ ինձ համար ցաւալի էր, որ բացառիկ անկողմնակալութեամբ, նուրբ ու խելօք արուած այդ հաղորդման մէջ հանդէս եկած ազրբեջանցի մտաւորականները՝ գրող, երաժիշտ, պատմաբան, մի բառով իսկ չզատապարտեցին Սոււմգայիթի եղեւնագործութիւնը: Աւելի՛ն. մի տեսակ փորձեցին «հաւասարեցնել խաղի հաշիւը»: Այս առումով յատկանշական էր Բաքուի կոնսերվատորիայի պրոֆեսոր Ծ. Բաղալբէյու խօսքը. «Ամէն ինչ անենք, որ մեր մէջ մոռացնենք փոխադարձ դատուութիւնները (փոխադարձ. Հայաստանում ո՞ր ազրբեջանցուն դառնացրին. Վ. Գ.), չյանձնուենք չար յիշողութիւններին (Փետրուարի 27-28-29ը արդէն «յիշողութիւն» դառան. Վ. Գ.): Մէկը նախկինում է մեղաւոր եղել, միւսը աւելի ուշ (գուցէ ճշտէր՝ ո՞վ-երբ. Վ. Գ.): Աէ՞ որ մենք պիտի շարունակենք պայքի, մենք հարեւաններ ենք արդէն հազար տարի...»:

Այո՛, մենք հարեւաններ ենք մտաւորապէս հազար տարի եւ պիտի շարունակենք ապրել՝ իրար հետ, կողք կողքի, իրար մէջ, բայց... Բայց աշխարհագրական հարեւանութիւնը ժողովուրդների բարեկամութիւն է զատուած միայն ճշմարտութեան, արդարութեան, փոխադարձ յարգանքի հիմքի վրայ: Այլապէս, այդ հարեւանութեան դաշտի մէջ կը մնան «դանդաղ գործողութեան ականներ», որոնք կարող են մի օր նսեւ... պայթել: Ականազերեկնք այդ դաշտը: Եւ սպա՛ արուեստագէտի ազգային պատկանելիութեան առաջին եւ գլխաւոր վաւերագիրը խիղճն է: Հաւատարիմ մնանք՝ նախ եւ առաջ «խղճի ազգութեան»:

Վերակառուցումը թեւակոխել է իր զարգացման նօր, աւելի բարդ, աւելի խորքային փուլը: Վերակառուցումն ապրում է երկրորդ շնչառութեամբ, նրա ընթացքն անկասելի է պատմականօրէն: Բայց այսօր, աւելի քան երէկ, մենք իրաւունք չունենք բաւարարուելու շէջօք-հայեցողական հաւանութեամբ: Ոչ ոք պարզ հանդիսատես չպիտի լինի: Մենք ամէնքս վերակառուցման դրամայի գործող անձ պիտի լինենք, մեր մտածելակերպով ու գործունէութեամբ՝ լինելով այն ուժերի ընդդիմաբօսը, որոնք ճգնում են կասեցնել նրա հօր, բարդ եւ դժուարին առաջըայլը («Գրական քերթ», 1988, թիւ 22):

ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

(հատուած)

* *

Յուլիսեան հեղձուցիչ առաւօտ,
Եւ լուրեր բօթարեր, բանասրկու,
Երկինքն է դեղնաշունչ, մահահոտ...
Եւ կենաց արեւը՝ անարկու...

Ձեռն խաղում հովերը հիւսիսի,
Մառերը քարացել, չեն խօսում,
Խեղում են խաչերը Յիսուսի,
Ջրերը դէպի ծով չեն հոսում...

Սուրն ինքնին բազադիր ու իշխան,
Գիւայիմ իր դէմքը քողարկած՝
Մանում է մահերգը մարդկութեան
Չարագոյժ իր գահից անասուած...

Միացէ՛ք, եղբայրներ, միացէ՛ք,
Նենն անսիրտ սողում է աշխարհում,
Ձեր արդար բռունցքը բարձրացրէ՛ք,
Քանի դեռ սողունը չի մախրում...

14-7-88 Վ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԱՐՑԱԽ

Թէ ազատութեան ռզիդ չլինէր,
Դու չէիր ծնի այսօրան հերոսներ:

Նրանք մարտերում սուրբ հողիդ ուժով
Յարթանակ ստրած տուն դարձան շուքով:

Եւ արարումի ոգու սքնանքով
Դաշտերդ, Արցախ, ծանրացան բերքով:

Ձուգեցիր ապրել անքատ քո մօրից,
Քանզի գաւակն ես քեզ ծնած օրից:

Հաւատքիդ յոյսը յոյսերն անքեզած
Մօր գիրկն է կանչում՝ կաթին կարօտած:

Հայեացքդ յառած Արարատ սարին՝
Դու պիտի հասնես քո նպատակին:

ՍԻՐԱԻԱՆ ԲԵՒՈՒՆԻ

ԲԵՐԴԱՍԱՐ

Բերդասարի գագաթից
Ես նայում եմ աշխարհին,
Բերդասարի գագաթին
Բերդանում եմ ես մի պահ...
Օ՛, դու արդա՛ր արեգակ,
Իմ այս պահը նշխարիբ,
Ինձ դարձրու բերդականչ,
Ինձ դարձրու բերդապահ:

Ես յառնել եմ այս բերդից՝
Արծուաթեւ շուքի տակ,
Արծուաձագի կանչերով
Մխրճուել եմ երկնքում,
Ես ապրում եմ այս բերդի
Երազներում շագնտաք,
Նրա դաժան ու դժուար
Մարձակման երկունքում:

Մշուշապատ մի արեւ՝
Ձայնազանկ մի հսկայ,
Տարածում է երկնքում
Բերդասարի երգը հին...
Ոչ ոք ոչինչ չի՛ տեսնի,
Ոչ ոք ոչինչ չի՛ գայ,
Թէ ինչպէս է շիկանում
Բերդասարի վերքը հին...

Ոչ ոք ոչինչ չի՛ տեսնի՝
Միաձույլ են յուշ եւ օդ,
Բերդասարի բարձունքում՝
Մի արծիւ է ծերանում,
Քարը գրկած մի կաղնու
Միջուկազուրկ քնի մօտ
Տեսնե՛ւմ եմ, թէ՞ թւում է՝
Մատաղ ծիլ է ծառանում:

Բերդասարի գագաթից
Ես նայում եմ աշխարհին,
Պտտում է իմ հոգում
Մի մոլորակ բերդապար-
Օ՛, դու արդա՛ր արեգակ,
Իմ այս պահը նշխարիբ,
Ինձ դարձրու բերդականչ,
Ինձ դարձրու բերդապահ:

ԳԷՈՐԳ ՕՀԱՆԵԱՆ

Բ. ՈՒՂՈՒԲԱԲԵԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ (ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Ձանգեցուք ու մտածե՛ք ինչ գաղափարներով, եւ նրանց հետ
բախու՛կու՛ համարձակութիւնը չու՛նեցան նոր Ազգրբնականի զեկա-
վարները: Յիշե՛ք, որ Ասող Կարանը շատ էլ վստահ չէր իրենց գործի
ու՛մի վրայ (ե՛Մեր գործերը կարգու էլ ու նահանջի ենք), իսկ գաղափար-
ցականները չեն չէր կարող կաշառքով գործ պիտի բերէր:

Ստալինը, որը հրապարակաւ իրեն ցոյց է տուել իբրեւ հայ մտ-
ղովորդի բարեկամը, իսկ քաղաքական ստորերկրեայ նրբոր մ նրա գէժ
զործել պիտի իսրազուտեցներ, որոնցով կարող էր շարժել Թուր-
անի ու հնձիւրի նախաներ:

Բ. ՈՒՂՈՒԲԱԲԵԱՆ

Շատ ցաւալի է, որ մեր պատմագիտութիւնը տառնամեակներ շարունակ
«կուսական ամօթխածութեամբ» է վերաբերուել Լեւոնային Ղարաբաղն Ազգր-
բնականի ՍՍՀ կազմի մէջ մտցնելու հարցին: Յժական թուականները վեր-
ջում էլ նրանց զու՛մարում են նորերը, ինչպէս նաեւ դրանց անկողմնակալ
մեկնարանութիւնները, որոնցով հիմք է դրւում հարցի բազմակողմանի ու
արդար քննութեանը:

Իսկ զիտական եւ մանաւանդ պաշտօնական շրջաններում մինչեւ վեր-
ջերս տիրապետող էր մի կաղապար, որի համաձայն, իբր, հարցի լուծման հա-
մար վճռական դեր է խաղացել տնտեսական գործօնը, եւ փոխպայմանաւորա-
ծութեան հիմքի վրայ հայկական Լեւոնային Ղարաբաղն Ազգրբնականի ՍՍՀ
կազմի մէջ է թողնուել ինքավար մարզի իրաւունքով: Մերոնց աս անատամ
ու անմիտ բացատրութիւնն էլ ազգրբնականի ուսումնասիրողներին հնարաւոր-
ութիւն է տուել յօրինելու զանազան հեքիաթներ՝ հարցի այսպիսի «լուծումը»
լենինեան ազգային քաղաքականութեան ոլորտի մէջ խցկելու համար: Որպէս-
զի Ազգրբնականի ոչ վաղ անցեալի զեկավարներէն մէկը յայտարարի, թէ «Ազգր-
բնականի ՍՍՀ կազմում ԼՂԻՄի կազմաւորումը համոզուածաբար լեւոնային
երկրամասի աշխատատեղեանն ձգտումներով մարմնաւորումը...»:

Դեռեւս 1920 թ. Օգոստոսի 10ին ՌՍՖՍՀ ու Հայաստանի միջեւ կնքուած
պայմանագրով Լլրդ բանակի զօրամասերը զտնւում էին վիճելի կոչուած երեք
մարզերում՝ Ղարաբաղում, Ձանգեղուրում ու Նախիջևանում: Նրանք ու՛մի՞ց
պիտի պաշտպանէին այդ մարզերը: Պարզ է՝ Ազգրբնականի՛ց, քանի որ այդ
մարզերին չէր սպառնում Թուրքիան, եւ Հայաստանի դաշնակցական հան-
րապետութիւնն էլ ու՛մ չունէր պատերազմով յետ վերադարձնելու պատմակա-

նորէն ու ազգազրօրէն իրեն պատկանող հողամասեր: Եւ պատահական չէ, որ Հայաստանում սովետական կարգեր հաստատելու յաջորդ օրը Ադրբեջանի յեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի ու արտաքին գործոց նախարար Հուսէյնովի ստորագրութեամբ Հայաստանի յեղկոմին յղուեց հեռագիր, որը յայտնում էր, թէ «Այսօրուանից Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ հղած սահմանային վեճերը համարուում են վերացուած: Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջեւանը համարուում են Հայաստանի Սոցիալիստական Հանրապետութեան մասը»: Իսկ դրանից մէկ օր անց, Դեկտեմբերի 1ին, Բաքուի սովետի հանդիսաւոր նիստում Ն. Նարիմանովը նոյն այդ հեռագրի բովանդակութիւնը հրապարակեց իրրեւ իր կառավարութեան ղեկավարացիան, որը եւ չնորհաւորեցին 11րդ բանակի ռազմայեղափոխական խորհրդի անդամ Միխայլովը, ՌՄԴ(բ)Կ Կենտկոմի ներկայացուցիչ Կամենսկին: Իսկ Գ. Կ. Օրջոնիկիձէն այս ղեկավարացիան համարեց ժողովուրդների համակեցութեան նոր կարգի հրաչալի փաստ: «Այստեղ ընթերցուած այս ակտը, — ասաց նա, — մեծագոյն կարեւորութեան ակտ է, պատմական ակտ, որն իր օրինակը չունի մարդկութեան պատմութեան մէջ»:

Նարիմանովի հռչակած ղեկավարացիայի առթիւ Բաքուի խորհրդի հանդիսաւոր նիստի անունից հրապարակուել է հետեւեալ յայտարարութիւնը. «Բաքուի խորհրդի եւ Ադրբեջանի յեղկոմի համդիսաւոր նիստը, բոլոր քանաւորները եւ կարմիրգուարդիականների կազմակերպութիւնների հետ միասին, պրոպետարական ուրախութեան մակեղծ զգացումով նշում է խորհրդային յեղափոխութեան յաղթանակը Հայաստանում, շնորհաւորում եւ ամբողջովին հաւանութիւն է տալիս ընկ. Նարիմանովի եռչակած պատմական ղեկավարացիային, որով մէկընդմիջտ ի չիք եւ դառնում Հայաստանի ու մուսուլմանական աշխարհի միջեւ հղած ազգային վեճերը, արիւնհանդ պատերազմները եւ րաց ամուս Անդրկովկասի ու ամբողջ Արեւելի ժողովուրդների համար երջանիկ կեանքի մոր էջը»:

Գ. Կ. Օրջոնիկիձէն Դեկտեմբերի 2ին Լենինին ու Ստալինին հաղորդել է, որ «Ադրբեջանը երէկ արդէն Սովետական Հայաստանի օգտին եռչակեց Նախիջեւանի, Զանգեզուրի ու Ղարաբաղի յանձնումը»:

Սովետական Ռուսաստանի կողմից Բ. Ստալինն էլ Հայաստանի նոր կառավարութեանը հեռագրեց՝ ողջունելով Ադրբեջանի արգարացի թայլը. «Դեկտեմբերի 1ին Սովետական Ադրբեջանն ինքնակամ երաժարուում է վիճելի ցահանգներից եւ յայտարարում Զանգեզուրի, Նախիջեւանի ու Լեռնային Ղարաբաղի յանձնումը Սովետական Հայաստանին»:

Այս փաստաթղթերը ժամանակին երեւի ոչ մի կասկած չպիտի թողնէին, որ Սովետական Ադրբեջանի ղեկավարները յարգում են նոր Հայաստանի իրաւունքները մինչ այդ վիճելի համարուած երեք նահանգների վրայ, որ վերջապէս արդարութիւնը յաղթանակել է, եւ այլեւ ոչ մի ուժ չի կարող խանգարել, որպէսզի յաղթանակած արդարութիւնն անարգել իշխի այդ նահանգներում, այսինքն՝ Նախիջեւանը, Զանգեզուրն ու Լեռնային Ղարաբաղը լինեն Սովետական Հայաստանի կազմում, նրա հետ կապեն իրենց բախտն ու զարգացման հեռանկարները:

Սակայն սա խաբուսիկ մի տպաւորութիւն պիտի լինէր, որովհետեւ առերես արգարութեան ղեկավարացիան հռչակող կառավարութիւնը հետագայ մի տարուայ ընթացքում ծաւալեց անդրկուլիսեան մի այնպիսի գործունէութիւն, որն իր իսկ հռչակած ղեկավարացիան դարձրեց դատարկ ու երեսպաշտական յայտարարութիւն: Ըստ երեւոյթի, ոչ ոք չէր խանգարում, որպէսզի

ն. նարիմանովն ու նրա գործակիցները դեկլարացիան ի չիք դարձնելու համար հիմա էլ ազդէին ուրիշ ուժերի վրայ: Նրանք այս ուղղութեամբ բաւական ազատ ու անկաշկանդ էին գործում՝ ամէնից առաջ երեւի այն պատճառով, որ նրանց հովանաւորում էր Ստալինը՝ երկերեսանութեան մէջ անմրցակից եւ հակահայկականութեան մէջ էլ ամենազօր պաշտօնեան այն օրերի քաղաքական կեանքում: Կարծես դեկլարացիայի հռչակման թելադրանքով թուրքական զօրքերը, մի ոմն Ֆէյսալ-բեկի գլխաւորութեամբ, մտան Նախիջեւանի մարզը եւ իրենց յայտարարեցին նրա տէրը: Իսկ 1921 թ. Մարտի կէսերին էլ սովետա-թուրքական պայմանագիրը կնքելիս թուրքական կողմն ստիպեց, որպէսզի Նախիջեւանի մարզը արուի Աղբրեջանին՝ երբորդ պետութեան (այսինքն՝ Հայաստանի) համար անձեռնմխելի մնալու պայմանով: Մնացին Չանգզուրն ու Լեռնային Ղարաբաղը:

Չանգզուրում նստած էին դաշնակցականները, եւ նրանց հետ բախուելու համարձակութիւնը չունեցան նոր Աղբրեջանի գեկավարները: Յիշենք, որ Ասաղ Կարաբեք շատ էլ վստահ չէր իրենց զօրքի ուժի վրայ («Մեր զօրքերը ջարդուել ու նահանջել են»), իսկ դաշնակցականների հետ չէր կարող կաշառքով գործ գլուխ բերել: Ուստի Աղբրեջանի նոր գեկավարներն իրենց ամբողջ եռանդն ու քաղաքական խաղերը կենտրոնացրին միայն Ղարաբաղի վրայ: Հենց այստեղ էլ նրանց թիկունքում կանգնած էր Խոսիֆ Ստալինը: Ստալինը, որը հրապարակաւ իրեն ցոյց է տուել իբրեւ հայ ժողովրդի բարեկամը, իսկ քաղաքական ստորերկրեայ ջրերում նրա դէմ գործել այնպիսի խարդաւանքներ, որոնցով կարող էր շարժել Թայեաթի ու Էնվերի նախանձը: Յիշենք. 1917 թ. Դեկտեմբեր 29ին Սովետական Ռուսաստանի կառավարութիւնն ընդունել էր դեկրետ, որով նախընթաց թուրքական բռնապետութեան տակ գտնուած հայկական նահանգների բնակչութեանը տրուում էր ինքնորոշման եւ անկախութեան իրաւունք: Դեկրետն ստորագրել էին ժողկոմիտրէի նախագահ Վ. Ի. Լենինն ու Ազգութիւնների գործերի ժողկոմ Ստալինը: Դեկրետի մշակման եւ ընդունման եռանդուն մասնակից Վահան Տէրեանը Լենինի հետ պայմանաւորուած է եղել, որպէսզի Ռուսաստանի զօրքերը մնան հայկական նահանգներում, մինչեւ նրանց ինքնորոշումն ու անկախութիւնը կը հաստատուէին, եւ կը ստեղծուէր պետական կարգ ու կանոն: Սակայն ինչպէս յայտնի է, շատ շուտով այդ զօրքերը դուրս են բերուել Արեւմտահայաստանից, եւ միայն սեփական քայքայուած ուժերի յոյսին մնացած հայութեան համար դեկրետը մնացել է անիրականալի մի փաստաթուղթ: Դրանից յետոյ է, որ թուրքերը յարձակման են անցել, կարճ ժամանակում ո՛չ միայն նուաճել Արեւմտահայաստանի նահանգները, այլեւ մտել Արեւելահայաստան՝ փորձելով իրականացնել ողջ հայութեան ոչնչացնելու իրենց հրէշաւոր ծրագրերը:

Ուրեմն դեկրետի առթիւ Տէրեանն ստացած է եղել Լենինի համաձայնութիւնը՝ ռուսական զօրքերն առժամանակ Արեւմտահայաստանում պահելու համար: Բայց ինչպէ՞ս է պատահել, որ, այդուհանդերձ, զօրքերը յետ են քաշուել՝ ինքնորոշման ու անկախութեան խոստումների տիրացած հայութեանը թողնելով թուրքի «ոգորմածութեանը»: Հրապարակուած նոյն նիւթերից չի կարելի չենթադրել, որ այստեղ խառն է եղել Ստալինի դիւալային մտաւր:

Եթէ մի օր ուսումնասիրողներին իրաւունք տրուի ծանօթանալ Տէրեանի եւ առհասարակ Ազգութիւնների խորհրդի՝ մեզ հետաքրքրող օրերի բոլոր նիւթերին, այն ժամանակ մինչեւ վերջ պարզ կը դառնայ, որ Ստալինն է իրականացրել այդ հակահայկական շարագործութիւնը՝ իրեն յատուկ խորամանկ երկերեսանիութեամբ:

1920 թ. ամառնամուտին, երբ, ճիշտ է, թուրքերի պահանջով Նախիջեւ-

ւանն արդէն տրուել էր Աղբրեղանին, եւ, իբր թէ յայտնի դեկլարացիայի հիման վրայ, պէտք է յարգուէր Հայաստանի իրաւունքը զոնէ՝ Ղարաբաղի նկատմամբ, նարիմանովի կառավարութիւնն այստեղ եւս հրաժարուեց իր պետական ազնիւ իրաւունքն եւ Ղարաբաղն էր պահանջում: Ս. Ս. Կիրովն ու Օրջնիկի՝ Կիճէն, Գ. Չիչերինն ու Բ. Լեզրանը դէմ էին այս կողողուտին: Իսկ Ստալինը հենց Յունիսի վերջերին այս բարեացակամութեան համար Օրջնիկիճէին սաստեց մի հեռագրով, որի մէջ գրուած է. «Իմ կարծիքն այն է, որ չի կարելի անվերջ լարայնացումը անել կողմերի միջեւ, պէտք է որոշակիօրէն պաշտպանել նրանցից մէկին, ներկայ դեպքում, ի հարկէ, Աղբրեղանին՝ Թուրքիայի հետ միասին»:

Ուրեմն «Աղբրեղանին» Թուրքիայի հետ միասին»:

Թէ Ստալինը Թուրքիային ինչպէս է պաշտպանել՝ ընդառաջելով նրա հայակործան բոլոր քայլերին, զա հրաշալի ցոյց է տրուած մեր հմուտ պատմաբաններ Լենդրուշ Խուրշուդեանի ու Հրայիկ Սիմոնեանի «Ստալինը եւ հայկական հարցը» յօդուածում (տե՛ս «Միջինասիական» թերթի ս. թ. Յունիսի 14ի համարը): Իսկ թէ ինչպէս Լեռնային Ղարաբաղի նկատմամբ չունեցած իրաւունք պարզեւել Աղբրեղանին, այդ էլ ցոյց կը տրուի ստորեւ:

1920 թ. Յունիսի 25-27ին Կովկասեան բիւրոյի յանձնաժողովը քննարկել էր անդրկովկասեան երեք հանրապետութիւնների սահմանների հարցը, եւ պարզուել էր, որ դաշնակիցներն այնքան էլ նշանակութիւն չեն տալիս հայկական կողմի արդար յաւակնութիւններին: Այ. Բեզգադեանը խնդրում էր գերազանցապէս հայ բնակչութիւն ունեցող մի շարք շրջաններ (Լեռնային Ղարաբաղը, Լոռին, Կասախը) թողնել Հայաստանին: Իսկ նրանք պնդում էին, թէ այդպիսի զինումները կարող են զրգուել վրաստանի ու Աղբրեղանի ներքին նացիոնալիստական տարրերին, եւ զա էլ պատճառ կը դառնայ նոր բարդութիւններին: Ուրեմն, որ Աղբրեղանում ու վրաստանում նացիոնալիստական տարրեր կային, Հայաստանը պարտաւոր էր նրանց էլ պատուներ շարունակել, որպէսզի լռեն եւ գլխացաւանք չպատճառեն տեղական հովանաւորներին:

Բեզգադեանի պահանջով հարցը թողնուեց Իկ(Բ) Կ Կենտկոմի Կովկասեան բիւրոյի որոշմանը: Պարզ է, որ քննարկման եւ վէճերի նիւթ պիտի դառնար եօթմամիս առաջ դեկլարացիայով Հայաստանին տրուած եւ երկու շաբաթ առաջ էլ թերթերում հրատարակուած կառավարական հրամանագրով «Հայկական ՍՍՀ անբաժանելի մասը» յայտարարուած Լեռնային Ղարաբաղի հարցը:

Այս հրամանագրից անմիջապէս յետոյ Լեռնային Ղարաբաղում արտակարգ լիազօր նշանակուած Ասքանազ Մուսեանը, Աղբրեղանի Կենտգործկոմի նախագահ Հաջիեւի, արտժողովում Հուլէյնովի ու ռազմածովային ժողովում Կարաեւի (Ասա՛դ Կարաեւի) հետ միասին, խորհրդակցութեան էր հրաւիրուած Գ. Կ. Օրջնիկիճէի մօտ: Հաւանաբար Օրջնիկիճէի յանձնարարութեամբ Մուսեանն ու Կարաեւը Յունիսի 25ին թիֆլիսից ուղեւորուեցին Ղարաբաղ՝ տեղում հարցերը լուծելու համար: Սակայն հենց որ գնացրով հասան Եւլախ, Կարաեւը Մուսեանին յայտնեց, որ, իբր, նախօրեակին, Յունիսի 24ին, ինքը հեռախօսով կապուած է եղել ն. Նարիմանովի հետ, նրանից յանձնարարութիւն ստացել, որ իրենք երկուսով Բաքու գնան՝ Ղարաբաղի հարցի հանգամանքներն այստեղ պարզելու համար: Մուսեանը հրաժարուեց Բաքու գնալ եւ նոյն 25ին էլ սուրհանդակի միջոցով Գ. Կ. Օրջնիկիճէին հաղորդեց եղելութեան մասին՝ աւելացնելով, որ «Լեռնային Ղարաբաղի հարցի շտապութիւն աներկմիտ լուծումը վիթխարի կարեւորութեամբ Բաղաբաղում նշանակուած թիւն ունի եւ կը դառնայ վճարական գործոն Ջանգեղուրի հարցի լուծման ժամանակ... Հետագայ ձգձգումը սուկ յաղթաբուլը կը լինի մեր բշխմանի ներքին»:

Ստեղծուել էր չափազանց խճճուած վիճակ, որի առթիւ խորհրդակցելով Ս. Մ. Կիրովի հետ՝ Օրջոնիկիձէն իրենց երկուսի անունից Նարիմանովին հեռագրով յայտնեց, թէ անհրաժեշտ է շերտերի արտակարգ Գաղբիւրօ, Ժողկոմխորհ եւ Ղարաբաղի հարցը վճռել այնպէս, որպէսզի վաղը, 27ին կարելի լինի աւարտել քանակցութիւնները: Եթէ հետաճրճուում եւ մեր կարծիքով, ապա այն հետեւեալն է. ի շահ բոլոր բախումների վերջնական լուծման եւ իսկական քարկանական յարաբերութիւններ հաստատելու՝ Լեռնային Ղարաբաղի հարցը լուծելիս պէտք է առաջնորդուել այսպիսի սկզբունքով. ո՛չ մի հայկական զիւղ չպէտք է միացուի Ադրբեջանի, ինչպէս եւ ո՛չ մի մուսուաթական զիւղ չի կարելի միացնել Հայաստանին»:

Նոյն օրն էլ Ադր. Կ(բ)Կ Կենտկոմի քաղբիւրոյի ու Ադր. Կենտգործկոմի համատեղ նիստում ընդունուեց որոշում, որը մերժեց Լեռնային Ղարաբաղը Հայկ. ՄՍՀին վերադարձնելու հարցը՝ հիւնելով, իբր թէ, այն հանգամանքից, որ մարզը տնտեսական ձգտում ունի դէպի Ադրբեջանը եւ միաժամանակ տնտեսապէս ու վարչականօրէն տնտեսականապի համարեց այն սկզբունքը, որով պէտք է Հայկական զիւղերը Հայաստանի տրուէին, մուսուաթականները՝ Ադրբեջանին:

Այս որոշումը հեռագրով հասաւ Թիֆլիս, եւ Նարիմանովն այնտեղ գտնուող իր գործակիցներին հեռախօսով յայտնեց, թէ շեղարք միայն այդ սկզբունքով պիտի լուծուի, ապա թէ ոչ [Ադրբեջանի] Ժողկոմխորհը կը հրաժարուի իր պատասխանատուութիւնից»:

Յուլիսի 27 ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասեան բիւրոյի նախագահութիւնը լսեց Ադր. արդարձոթողկոմ Հուլայնովի հաղորդումը Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերեալ իր ու Նարիմանովի հեռախօսազրոյցի մասին եւ որոշեց հրահրել բիւրոյի արտակարգ պլենում անդրկովկասեան հանրապետութիւնների սահմանները որոշելու համար: Շտապ կերպով Թիֆլիս հրահրուեցին Նարիմանովն ու Միասնիկեանը:

Կովկասեան բիւրոյի նիստը կայացաւ Յուլիսի 2-7ին: Լեռնային Ղարաբաղի հարցը քննարկուել է հի եւ Եր նիստերում: Կի նիստում այդ առթիւ քուէարկութեան է դրուել երկու առաջարկութիւն.

1. Լեռնային Ղարաբաղը տալ Ադրբեջանին, որի կողմ քուէարկել են Նարիմանովը, Մախարաձէն, Նազարէթեանը, դէմ՝ Օրջոնիկիձէն, Միասնիկեանը, Կիրովը, Ֆիզատները:
2. Լեռնային Ղարաբաղը մացնել Հայկական ՄՍՀ կազմի մէջ, որի կողմ քուէարկել են Օրջոնիկիձէն, Կիրովը, Միասնիկեանը, Ֆիզատները...

Այսպիսով, որոշուել է Լեռնային Ղարաբաղը թողնել Սովետական Հայաստանի կազմի մէջ:

Այն ժամանակ Նարիմանովն արել է հետեւեալ յայտարարութիւնը. «Նկատի առնելով այն կարեւորութիւնը, որ զարաբաղեան հարցն ունի Ադրբեջանի համար, անհրաժեշտ եմ համարում, որ վերջնական լուծման համար այն տեղափոխուի ՌԿ(բ)Կ Կենտկոմ»:

Եւ Անդրբերկրկոմի բիւրոն այս յայտարարութեան հիման վրայ ընդունել է նոր որոշում. «Նվնելով նրանից, որ Ղարաբաղի հարցը քորթոքի է լուրջ տարակարծութիւնները, ՌԿ(բ)Կ Կովկասեան բիւրոն անհրաժեշտ է համարում այն տեղափոխել ՌԿ(բ)Կ ԿԿ՝ վերջնական լուծման համար»:

Սակայն յաջորդ օրն իսկ, Յուլիսի Երն, նոյն բիւրոյի նիստ է գումարուել այդ ժամանակ Թիֆլիսում գտնուող Ի. Ստալինի մասնակցութեամբ, եւ ո՛չ միայն բեկանուել է Լեռնային Ղարաբաղի հարցը վերջնական լուծման համար ՌԿ(բ)Կ Կենտկոմին թողնելու որոշումը, այլեւ, առանց նոր քննարկման կամ քուէարկութեան, բիւրոյի անդամներին է հրամցուել այսպիսի մի վճիռ.

«Ընկնով մուսուլմանների և հայերի միջև ազգային խաղաղութեամբ անհրաժեշտութիւնից և վերին (Լեռնային) ու մերձին (Գաշտային) Ղարաբաղի տնտեսական կապից, Ադրբեջանի հետ ունեցած նրա մշտական կապից, Լեռնային Ղարաբաղը թողնել Ադր. ՍՍՀ սահմաններում՝ նրան տրամադրելով լայն-մարզային ինքնավարութիւն՝ վարչական կենտրոն Շուշիի հետ միասին, որը մտնում է ինքնավար մարզի մէջ»:

Ահա թէ ի՞նչ ազդեցութիւն ունեցաւ Ստալինի շարաշուք ներկայութիւնը: Ստալինը, որ եօթ ամիս առաջ երեսպագութենէն ո՛չ միայն ողջունել էր Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը Սովետական Հայաստանին վերադարձնելու դեկլարացիան, այլև յայտարարել էր, թէ «բոլոր բարեկամները» խարուած Հայաստանն «այսուհետև փրկուած է ամէն տեսակ խարդաւաններէ»: Իսկ այն էլ «Հայաստանի, Թուրքիայի ու Ադրբեջանի աշխատւորների միջև եղբայրական համերաշխութիւն հաստատելու ցանկալիքով»:

«Աշխատւորների եղբայրական համերաշխութեան» ծխածածկոյթի տակ տնտեսարանից հայկական հարցի ամենահիմնական կէտերից մէկը՝ Հայկական Հանրապետութեան անկապտելի իրաւունքը հինաւուրց Արցախական աշխարհի նոյնիսկ մի փոքրիկ մասի՝ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ:

Եւ զորանից յետոյ արդէն Ադրբեջանի դեկավարութեանն էին վստահուած որոշելու ինքնավար մարզի սահմանները, նրա ներսում ամփոփուելիք վարչական միաւորի ամէն տեսակի իրաւունքների հարցերը: Այդ էր պատճառը, որ երկար ժամանակ չէր իրականացուած նոյնիսկ Նախիմանովի ու Ստալինի յերկուստ որոշումը. մարզին չէր տրուած խոստացուած ինքնավարութիւնը: Հայկական դաւառները կտրուած էին իրարից ու ամէն տեղից: Նրանց անտեսական և մանաւանդ ազգային-մշակութային հարցերը ոչ ոքի չէին հետաքրքրում:

1922 թ. Յուլիսի 3ին Շուշուայ կուսակցական դաւառական կոմիտէի ընդհայնուած նիստը բողոքեց այս վիճակի դէմ, որոշեց պահանջել, որպէսզի հայկական շրջանները մտցունեն մէկ վարչական միաւորի մէջ: Այս բողոքն, իբր, լուսեց-քննարկուեց պետական ու կուսակցական զանազան ասիականներում, համարուեց ճիշտ ու տեղին: Սակայն հարցն այնպէս էլ տեղից չէր շարժուած, որովհետև շարժողը պիտի լինէր Ադրբեջանի դեկավարութիւնը: Ղարաբաղեան դաւառներում անհանգստութիւն էր տիրում: Բողոքներն ու դիմումները, անհատ կուսակցական աշխատողներն ու աշխատաւորական խմբերը ձեռնում էին Անդրերկրկոմի դռները: Եւ վերջապէս, 1923 թ. Փետրուարի 15ին այս կոմիտէի նախագահութիւնը լուսեց նախընթացին Լեռնային Ղարաբաղում ստեղծուած Արտակարգ կոմիտէի անդամ Սուրէն Շադունցի դեկլարումը երկրամասի վիճակի մասին: Նորից որոշեցին հայկական Ղարաբաղը դարձնել ինքնավար մարզ... Սակայն Անդրերկրկոմն ստիպուած եղաւ այս հարցին վերադառնալ անգրադաւանայ ամիսներ անց, Յուլիսի 26-28ին, տեղի ունեցած իր պլենումում, մինչև որ Յուլիսի 7ին Ադր. ՍՍՀ Կենտրոնկոմը հրապարակեց Լեռնային Ղարաբաղում ինքնավար մարզ ստեղծելու որոշումը:

Այս որոշման շուրջ հանրապետական մամուլն ու զաղափարական շրջաններն ինչպիսի՜ ազմուկ բարձրացրին, «համաժողովրդական» ցնծութեան ի՞նչ տեսարաններ սարքուեցին: Հանրապետութեան դեկավարները յետին թուով ինչպէ՞ս էին հանում ցարական ինքնակալութեան շովինիստական աչքը, որ հայկական Ղարաբաղի ազգային հոգսերը չէր տեսել և անվերջ ոտնահարել էին նրա հայ աշխատաւորութեան ազգային ու սոցիալական իրաւունքները:

Ստեղծուած էր ինքնավար մարզ: Սահմաններ էին դրուել նրա համար... Եւ երբ Հին ու նոր իրողութիւններին տեղեակ մարդիկ նայեցին այդ սահմաններին, առաջին պահ զարմանքից ու զայրոյթից քարացան. գծուած սահմաններից դուրս էին թողնուել Լեռնային Ղարաբաղի հիւսիսային մասերը՝ Մուսուլիան ստորոտից մինչեւ Ալահարակի փէշերը, Գիւլիստանի քաղ մելիքութեան տիրոյթը, հինաւուրց հայկական-հայաբնակ մի տարածք, որը հետագայում պէտք է կազմէր Շահումեանի ամբողջ շրջանը եւ Խանլարի շրջանի ամենաբերրի մասը...

Այսպիսին էր առաջին քայլը. հայկական Լեռնային Ղարաբաղի ազգային միասնութեան դէմ չար ոտնձգութեամբ դրուեց ինքնավարութեան սկիզբը: Իսկ հետագայում էլ հանրապետութեան ղեկավարութեան հակալեռնինեան ինքնիշխանութեան ղեկավարութեան անտեսանելի ու ակնյայտ անհամար կապանքներ ստեղծեց մարզի տնտեսական, առանձնապէս մշակութային զարգացման դէմ: Եւ այս քանի թելադրանքով էր, որ Անդրերկրկումի կողմից մարզում արտակարգ լիազօրութիւններով աշխատանքի նշանակուած Սուրէն Շաղուեցը՝ ամենատես ու արդարամիտ մի զործիչ, բաւական ժամանակ ուսումնասիրելով Ղարաբաղի վիճակը, հանրապետութեան ղեկավարների վերաբերմունքը նրանկատմամբ, ինչպէս նաեւ կանխատեսելով այդ վերաբերմունքի հնարաւոր ծաւալումներն ապագայում, եկաւ այն հաստատ համոզման, որ Ազրբեջանն ու Լեռնային Ղարաբաղը պարզապէս անհամատեղելի են: Եւ քանի որ այդ իմաստուն քաղաքագէտը միաժամանակ գիտէր Ղարաբաղի հարցի ողբերգական կենսազրոյթները, տեսնում էր, որ Ստալինի ու Նարիմանովի բռնած ղրիքը չի հանդուրժի մարզի յանձնումը Հայաստանին, փարուեց փրկութեան ուրիշ մի ճանապարհի՝ առաջարկեց Ղարաբաղից ու Զանգեզուրից ստեղծել ազգային-վարչական մի նոր միաւոր եւ այն դնել Անդրերկրկումի ենթակայութեան ներքոյ:

ԲԱՊՐԱՏ ՈՒՂՈՒԲԱՐԵԱՆ

Ս. ԽԱՆՁԱԳԵԱՆ

ՔԱՐԻՆՏԱԿ ԳԻՒՂԻ
ՔԱՐԱՑԱԾ ՑԱԻԸ

Իմ հարցերը նեղում են այս մարդուն: Երեւում է դառնացած է աշխարհից, ինքն իր մէջ է, ինքն՝ իրենով, ինչպէս զեղծի կորիզը: Հարցերքս նեղումսքից զժուար է դուրս դալիս:

— Ուսուցիչ էմ այս դիւղում: Անցել եմ կենսաթողակի:

— Ձահել ես, — ասացի:

— Ձէ, այ՛ մարդ, 1919ին ծնուած եմ, դեղնած տերեւ՝ ծառի ծէրին: Աչուն է: Մօտիկ Հերձեր դիւղացի եմ: Պատերազմին մասնակցեցի, յետոյ եկայ բնակուեցի Քարինտակում:

Քարինտակում: Գիտէ՞ք, որ այս անունը նաև նշանակում է դերեզմանում, գերեզմանաբարի տակ եմ: Անէծք կայ՝ սեւ քարի տակը մտնես: Այսինքն՝ մեռնես: Քարին տակում եմ, այսինքն՝ մեռած եմ:

— Ինստիտու՞տ ես աւարտել:

— Ձէ: Աւարտել եմ Հազրութի մանկավարժական տեխնիկումը: Հիմա չկայ: Փակել են:

— Էլ ի՞նչ են փակել Ղարաբաղում:

Վահան Յարութիւնեանը զգուանքով նայեց ինձ: Վախեցայ՝ յանկարծ ճանաչի: Զճանաչեց:

— Ի՞նչ լեզուն փակել են, — ասաց շտապելով: — Ի՞մ ճանապարհը փակել են: Քի՛չ է:

— Քո՞ թէ Ղարաբաղի:

— Տարբերութիւն չկայ:

Նա ցոյց տուեց մի պատ, որի վրայ «աֆիշի»՝ «ետեր կան՝ սոսնձով կպցրած թղթի պատաստիկներ՝ կարմիր, սպիտակ, դեղին, խունացած: Մի պատաստիկի վրայ

զունաթափ «28»ին: Ի՞նչ, Հէ՛լ, քար: Միւսի վրայ՝ «այսօր»: Ի՞նչ, Հէ՛լ, լերկ քար:

— 1978ին այստեղ «աֆիշ» կպցրին: Աղ էր արուած՝ շուտով կը ցուցադրուի «Միտիքաք սպարապետ» կինոն: Բայց ցոյց չտուին:

— Ինչո՞ւ:

— Գու՛ք տես՛ի՛ էք այդ կինոնկարը, — հարցրեց մարդը:

— Այո, — պատասխանեցի:

— Մենք դրան կարօտ մնացինք: Յոյց չտուին:

— Ինչո՞ւ:

— Արգելեցին: Է, ես ի՞նչ իմանամ: Բաբուն արգելեց: Փակեցին: Փակե՛ցին...: Ատում են Մոսկուան է նկարահանել: Մոսկուայինն էլ արգելեցին:

Ի՞մ մէջ եռացող խմորում է: Հիմա օրրոտ կը պատուի, կուրծքս կը ճեղքուի:

— Կինոն «Մոսֆիլմի» ստեղծածն է, — ասացի:

— Միեւնոյնն է, — ասաց մարդը, — ցոյց չտուին: Հայի պատմութիւն է, չէ՞, հայի ցաւ է, չէ՞, ցոյց չտուին մեզ ծօտ՝ հայի Ղարաբաղում: Լսել եմ՝ Իրաքում այդ կինոն ցուցադրել են, Բեռլինում, Ամերիկայում, Փարիզում, Բէյրութում եւս: Աղբրեջնում, Աղբրեջնի ճորտ լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում՝ ոչ: Ինքնավա՛ր ենք...:

Մարդը մեռըը մեկնեց ոչ հեռում մթնցած անտառների կողմը:

— Էն մէկը Տուլ Ութունենց անտառն է, միւսը՝ Կապեն Քամակը, աւելի դեմինը՝ Ալեքսանին ճերձը, էլի անտառ: Վըրւանի ձորումն է Միտիքաք սպարապետը թարգել Հայաստան ներխուժած օսմանեան սուլթանի զօրքերին: Ձագեձորից եկել է Քիրոս լաջան խնձրմարդի ծամակով: Այ, այնտեղ: Այնտեղ: 1724ին: Իող նրա մասին եղած կինոն մեզ ցոյց չտուին...:

Մինչեւ խենթանալը մի քայլ է մնում: Այդ քայլն էլ անե՛մ, թէ դեռ ժամանակը չէ: Ոչ, դիմացիք, համբերիք, պնդուիք՝ ներշնչում եմ ինքս ինձ («նարք», 1989, թիւ 11):

ՍԵՐՈ ՌԱՆՁԱԳԵԱՆ

1. ՀԱՌՎԵՐԴԵԱՆ

ԻՆՉՔԱՐՆ ԿԱՐԵԼԻ Է

ՃԻՇՏԸ ՉԱՍԵԼ

Կոր սերնդի նախադրյալի գայ, կիև ասեմ, որ կար ժամանակ, երբ ճշարտեմք եւ ճողովուրդը բառերն էլ արգելքի տակ էին: Ոչ թէ ճողովուրդը պիտի ասուէր, այլ միայն ճաշխատաւորութիւնը: Միայն թոյլատրուած կեղծիքներէ պարտուած ինչ մըս կարող էր ծագել այն անթուարելին, թէ Գաւթակ Գերթոզն ու Մխիթար Գօշը ոչ թէ հայ, այլ ազտականական գրողներ են, Ամարասն ու Գանձասարը ոչ թէ նայոց, այլ՝ ազուտական յուշարձաններ, թէ, ինքնին նախանայի և, նայոց խաչքարն էլ այլ բան չէ, քան խաչ գալ:

ԼԵՒՈՆ ՀԱՆՎԵՐԴԵԱՆ

Կարծես մեծ բան չէ ասած՝ իրեր են, հանգամանքներ են, երեւոյթներ են կոչել իրենց անունով, ճիշտն ասել: Բայց արի ու տես, որ մարդկութեան բազմաշարժար պատմութեան մէջ անհամար աղէտներ են ծագել այդպէս չզարուելու, ճիշտը շատելու պատճառով: Այս պատճառի պատճառներն էլ տարբեր են. երբեմն՝ ակամայ, չիմանալով, դողմալի թշուառ գերին դառնալով, բայց աւելի շատ՝ դիտմամբ, նպատակով, յատուկ դիտաւորութեամբ: Իմ սերնդի մարդիկ, որոնց մէջ նաեւ ես, տասնեակ տարիներ եղել ենք դրա տխուր ակնատեսները: Դժբախտաբար, հիմա էլ, յաճախ, ականատես ենք:

Ամօթ չէ՞ր, օրինակ, որ կենսորոնական մամուլում, եւ ինչո՞ւ միայն այնտեղ, Ռաչիկ Ստամբուլցեանին ոմն կոչեցին (ՈՄՆը կորած-մոլորած, անորոշ զբաղմունքի տէր անյայտ մէկն է՝ մի՞թէ չգիտես): Մի մարդու, որին Հայկական ՄԱՀ Գերագոյն Սովետի ընտրութիւններէ Աքովեան քաղաքի Ուսանողական Թիւ 159 օկրուցային ընտրական յանձնաժողովը օրերու պաշտօնապէս գրանցեց դեպուտատութեան թեկնածու:

Մտքիցս չի հեռանում այս տարուայ գարնանը Մոսկուայում, ՄԱՀՄ Գիտութիւնների Ակադեմիայում, մի խումբ հայ գիտաշխատողներ եւ մի խումբ ազգրեջանցի գիտաշխատողներ խորհրդակցութեան էին հրաւիրուել աչքի ընկնող մասնագէտների հետ քննարկելու, ինչպէս ասում է, «Լեոնայիմ Արարադի եւ Արա շուրջը կատարուող դէպքերի» հետ կապուած հարցերը: (Ի դէպ, ազգրեջանցիների խմբի մէջ էր եւ այն տխրահամբաւ ակադեմիկոս Ջիւա Բուրիաթովը, որի դիտումնաւոր կարծիքով Մխիթար Գօշը, կիրակոս Գանձակեցին, Մովսէս Կաղանկատուացին ոչ թէ հայ հին գրականութեան դասականներ են, այլ՝ ազտականներ, իսկ ազգրեջանցիներն էլ այդ ազտականների յետնորդները): Մեծ բանավէճ եղաւ, մենք մերն ասացինք, նրանք՝ իրենցը: Տպաւորութիւնն այն էր, որ մեր ընդդիմախօսները շատ բան չուներին ասելու, թոյլ էին նրանց կռուանները: Երես առ երես խօսելիս դրանք շատ են կարեւոր:

Յաջորդ օրը ՍՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի գրականության եւ լեզուի բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Պ. Նիկոլայեն ազդեցական ակադեմիայի գրականության ինստիտուտների երեք ղեկավարների, մեր Ակադեմիայի գրականության ինստիտուտի տնօրէն իդուարդ Ջրբաշեանին եւ ինձ հրաւիրեց իր մօտ՝ զրոյցի: Այստեղ էլ շատ խօսեցինք: Վերջում Պ. Նիկոլայենը յանգեց «իմաստուն» եզրակացութեան՝ պարզ է, ամէն ինչ յանգում է սոցիալականին:

Առանձնասենեակից դուրս գալիս հարցրի էդ. Ջրբաշեանին՝ կրթուած, խելացի մարդ է, չի՞ հասկանում, թէ՞ չհասկանալ է ձեւացնում: Ջրբաշեանը, թէ՛ ի՞նչ իմանաս:

Իրօք որ՝ ինչպէ՞ս բնորոշել, ինչպէ՞ս կոչել «Ղարաբաղեան շարժումը»: Կարծես թէ անուշը կարեւոր չէ, կարեւորը շարժումն է: Ո՛չ, անուշը, բնորոշումն էլ կարեւոր է, քանի որ դրանով է պայմանաւորուած շարժման հանդէպ մշակուող վերաբերմունքը, քաղաքականութիւնը, արդարամիտ քաղաքականութիւնը:

